

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ
ԱԶՆՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԴԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՅ

ԿԱՄ

ԵՐԵԲ ԳՐԻԳՈՐ
ՄԱԳԻՍՏՐՈՍ



KAREN MATEVOSYAN

**FROM THE HISTORY OF
NOBILITY OF ANI OR THREE
GRIGOR MAGISTROSES**

Yerevan – 2015

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

**ԱՆԻ ԱԶՆՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՄ
ԵՐԵՔ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ**

Երևան - 2015

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(53)

Մ 151

- Մաթևոսյան Կարեն
Մ 151 Անիի ազնվականության դատնությունից կամ երեք Գրիգոր
Մագիստրոս / Կ. Մաթևոսյան. – Եր.: Մուլնի, 2015. – 144 էջ:

Գրքում ներկայացվում են Անիի ազնվականության մի շարք
ներկայացուցիչներ, մասնավորապես նշանավոր Գրիգոր Սա-
գիստրոս Պահլավունին և երկու այլ գործիչ, որոնք նույնպես
դատնության մեջ հիշվում են Գրիգոր Մագիստրոս անունով:
Անդրադարձ է կատարվում նաև Սմբատ Մագիստրոս և Վեստ
Սարգիս իշխաններին:

Նախատեսված է դատաբանների և հայոց դատնությամբ հե-
տաքրքրվող ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(53)

© Մաթևոսյան Կարեն, 2015

© «Մուլնի» հրատարակչություն, 2015

ISBN 978-99941-33-78-9

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ ազնվականության պատմությունը հայագիտության մեջ համեմատաբար քիչ ուսումնասիրված ոլորտ է, որի պատճառներից մեկը թերևս խորհրդահայ պատմագրության որդեգրած դասակարգային խտրական մոտեցումն էր: Մեր ժամանակներում նկատվում է այդ բացը լրացնելու միտում:

Սույն գիրքը նվիրված է Անիի շրջանի մի քանի գործիչների, որոնցից երեքը սկզբնաղբյուրներում հիշատակվում են միևնույն՝ **Գրիգոր Մագիստրոս** անունով: Նրանցից ավագը **Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսն** է, որն առաջին անգամ հիշատակվում է 1001 թ., մի քանի տարի անց կառուցել է Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր մեծադիր եկեղեցին, մասնակցել է Անիի թագավորության պատմության մի շարք իրադարձությունների, հիշատակվում է որպես «մեծ իշխան»: 1021 թ. մահացած (սպանված) այս իշխանին հետագայի պատմիչները կոչում են հիմնականում Ապիրատ անունով: Այս Գրիգոր Մագիստրոսի դուստրը եղել է Անիի նշանավոր իշխան Վեստ Սարգսի կինը, որին ուսումնասիրողների մեծ մասը թյուրիմացաբար համարել է Պահլավունի համանուն իշխանի դուստր:

Երկրորդը հայ միջնադարյան ամենանշանավոր դեմքերից մեկն է՝ Պահլավունյաց տոհմից **Վասակի որդի Գրիգոր Մագիստրոսը** (քաղաքական, ռազմական գործիչ, աստվածաբան, փիլիսոփա, ուսուցիչ, գրող, թարգմանիչ), որը մագիստրոսության պատվաստին է ստացել բյուզանդական կայսրից Անիի թագավորության անկումից հետո՝ 1045 թ.: Նրան նվիրված բաժինը զուտ կենսագրական չէ, այլ վերաբերում է իշխանի գործունեությանը՝ ներկայացնելով կաթողիկոսական աթոռի՝ Պահլավունյաց տոհմին անցնելու գոր-

ծընթացը, որի նախաձեռնողներից էր Գրիգոր Մագիստրոսը, և որն ավարտվեց վերջինիս որդու՝ Վահրամի (Գրիգոր Բ Վկայասեր) Հայոց կաթողիկոս դառնալով:

Երկրորդը՝ 13-րդ դարի գործիչ, **Աբուղամրի որդի Գրիգոր Մագիստրոսն** է, որն իրականում Անիի Գրիգոր Ա արքեպիսկոպոսն է, բայց մի մարդ, որը կյանքի վերջում եղբոր՝ Ղարիբ Մագիստրոսի մահից հետո իր անվանն է ավելացրել նրա մագիստրոս տիտղոսմականունը և մի շարք աղբյուրներում հիշատակվում է հենց Գրիգոր Մագիստրոս անունով:

Այնուհետև ներկայացնում ենք ևս մի իշխանի՝ **Սմբատ Մագիստրոսին**՝ Անիի մերձակա Բագնայրի վանքը հիմնողին, որին ցայժմ պատմագրության մեջ սխալմամբ համարել են Վահրամ Պահլավունու որդի, մինչդեռ այդ մասին ոչ միայն փաստեր չկան, այլև դատելով առկա տվյալներից՝ Սմբատն առնվազն Վահրամի տարեկիցն էր և մեկ այլ տոհմի ներկայացուցիչ:

Վերջում ներկայացնում ենք երկու փոքր նյութ՝ Վեստ Սարգսի կենսագրության մի հարցի և այն մասին, թե ինչպես է «Պահլավունի» տոհմանունը հայտնվել Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ պատմիչի «Տիեզերական պատմության» մեջ:

Գրքի որոշ հատվածներ հրատարակվել են որպես առանձին հոդվածներ, այստեղ լրամշակված են:

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՈՐԴԻ ՀԱՍԱՆԻ (ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏ)

Բագրատունյաց շրջանի իշխանական տների պատմությունը դեռևս հանգամանորեն չի ուսումնասիրվել, այդ պատճառով մի շարք տոհմեր նույնացվել կամ արհեստականորեն կապվել են առավել հայտնի Պահլավունիների հետ: Ուսումնասիրողները հիմնականում այդպես են վարվել 10-րդ դարի վերջերից մինչև 13-րդ դարի սկզբները գործունեություն ծավալած՝ Հասանյանների կամ Ապիրատյանների իշխանական տան հետ¹: Այս տոհմի առավել հայտնի ներկայացուցիչը, որն աղբյուրների մի մասում հիշատակվում է Գրիգոր Մագիստրոս, մյուսներում՝ Ապիրատ անունով ու կոչվում «մեծ իշխան», կառուցել է Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցին և այլն, չի նշված ոչ Հայոց պատմության ակադեմիական հատորյակներում (1976 և 2014 թթ. հրատ.), ոչ հայկական հանրագիտարաններում: Իսկ առանձին ուսումնասիրություններում հաճախ շփոթվում է Պահլավունի Գրիգոր Մագիստրոսի (Բջնեցու) հետ:

Իշխանի մասին առաջին վկայությունները պահպանվել են նրա ապրած դարաշրջանի վիմագրերում: Առաջինը Արզականի Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցող Գորգ (Գեորգ) քահանայի 1001 թ. արձանագրությունը, որտեղ Գագիկ Ա Բագրատունի թագավորի անունից հետո հիշատակվում է մագիստրոսի պատվաստիճան ունեցող Գրիգորը. «...Ի թագաւորութեան Գագկա աշխարհակալի, Գրիգորի՝ Հայոց մագիստոռսի...»²: Ըստ Հ. Բար-

¹ Ղ. Ալիշան, Ծնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 13, Լ. Խաչերեան, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս, Լոս Անճելոս, 1987, էջ 20, Ռ. Մաթևոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 175 և այլն:

² Գ. Մարգարյան, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը» ժողովածու 12, Երևան, 2002, էջ 111:

թիկյանի՝ նշված ժամանակաշրջանում մագիստրոսը բյուզանդական արքունիքի կողմից օտարերկրացիներին տրվող ամենաբարձր պատվաստիճանն էր, որը կրողը նաև ամենամյա դրամական վարձատրություն էր ստանում³:

Արգակյանի արձանագրությանն անձանոթ Ն. Ալիմյանը ենթադրել է, որ Գրիգորը մագիստրոսի պատիվ ստացել է 1001 թ., երբ բյուզանդական Վասիլ Բ կայսրը (976-1025) եկել է Հայաստան⁴: Սա հավանական է, քանի որ Տայքի Դավիթ Կուրապաղատի մահից հետո (1000 թ.) երբ նրա տիրույթները ժառանգած կայսրը եկավ Հայաստանի արևմտյան շրջանները, շրջակայքի մեծ ու փոքր իշխանավորները շտապեցին նրա մոտ և զանազան տիտղոսներ ու պատիվներ ստացան, որի մասին նշում է այդ դեպքերին ժամանակակից պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը⁵:

Երկրորդ արձանագրությունն արդեն գրված է հենց Գրիգորի անունից Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր գլխավոր եկեղեցու հարավային դռան ճակատին և հետևյալ բովանդակությունն ունի.

«ՆԶԲ (1033) թ. Հա(յոց). ի թագաւորութեան Գագկա եւ ի հայրապետութեան տ(եառ)ն Սարգսի, եւ Գրիգոր Մագիստրոս, որդի Հասանա, շինեցի զեկեղեցիս՝ ինձ ի բարեխոսութ(իւ)ն եւ իմ պատրոնին եւ իմ որդեացն. Որք ընթեռնոյք զիս յաղաթս յիշեցէք ի Ք(րիստո)ս աղաչեմ»⁶:

Դեռևս արձանագրության առաջին հրատարակիչներ Ղևոնդ Ալիշանը, Գարեգին Հովսեփյանը, Ներսես Ալիմյանը նկատել են,

³ Հ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, Երևան, 2002, էջ 669:

⁴ Ն. Ալիմեան, Գրիգոր Ապիրատ, որդի Հասանայ, Մագիստրոս, «Ակօս», 9, 1945, էջ 12-13:

⁵ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական (բնագիրը պատրաստեց Գ. Մանուկեան), Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, գիրք Բ, Երևան, 2011, էջ 823:

⁶ Գ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 159:

որ թվականի մեջ սխալ կա, և հաշվի առնելով տեքստում Գագիկ Ա Բագրատունի (989-1017)⁷ թագավորի և 1019 թ. կաթողիկոսական աթոռից հրաժարված Սարգիս Ա Սևանցու անունների առկայությունը, առաջարկել են սկզբում նշված ՆԶԲ (1033) թվականը համարել գրչական սխալ և սրբագրել ՆԾԲ (1003)⁸:

Այսպիսով 1003 թ. Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսը ներկայանում է որպես Գագիկ Ա Բագրատունու ստորակա, նաև հայտնում, որ կառուցել է այդ եկեղեցին որպես բարեխոս իր, գավակների ու իր պատրոնի համար:

Երրորդ վիմագիրը, որտեղ հիշվում է Գրիգոր Մագիստրոսը, գրվել է 1042 թ. Տեկորում, արդեն նրա մահից (սպանությունից) հետո, որն ինչպես ստորև կտեսնենք, տեղի է ունեցել 1021 թ.: Արձանագրության հեղինակը իշխանի դուստր՝ Տիկնացտիկինն է, որը Վեստ Սարգսի կինն էր:

«ՆՂԱ (1042) թվ յանուն Ա(ստուծոյ) եւ Տիկ(ն)ացտիկին, դուստր Քրգորոյ Մագիստրոսին եւ ամուսին Սարգսի արեւելից վեստիս, թողեալ եմ զՏեկորոյ գալաշխոստս, շահանշահի արեւշատւոյան եւ իմ ծնողացս հոգոյն...»⁹:

⁷ Գագիկ Ա Բագրատունու մահվան թվականը հայագիտության մեջ ընդունված է 1020-ը: Կ. Յուզբաշյանը որոշ սկզբնաղբյուրների վկայակոչմամբ այն համարում է 1017-ը (К. Юзбашян, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, с 156-157): Այս թվագրման օգտին են խոսում նաև այլ տվյալներ: Տե՛ս Տե՛ս Կ. Մաթևոսյան, Անի-Ծիրակի պատմության էջեր, Երևան, 2010, էջ 22-26, Սամուել Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրություն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 182, 389-390 (այսուհետև՝ Սամուել Անեցի եւ շարունակողներ):

⁸ Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 259, Գ. Յովսեփեան, նշվ. աշխ., էջ 159, Ն. Ալիևեան, Ներսես Լամբրոնացի, («Ազգաբանություն Պաղիաունեաց, Հասանեանց, Թոռնիկեանց եւ Հեթումեանց»), Վիեննա, 1956, էջ 374: Կարծում ենք, որ արձանագրության տեքստը թելադրվել է փորագրող վարպետին, որի ժամանակ տեղի է ունեցել Ձ (Ձա) և Ծ (Ծա) տառ-հնչյունների շփոթություն: Հայկական վիմագրերում նման սխալներ էլի են հանդիպում:

⁹ Ն.Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 207:

Ուսումնասիրողները, բացառությամբ Ն. Ակինյանի, այս արձանագրության մեջ հիշատակված Գրիգոր Մագիստրոսին նույնացրել են Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) հետ¹⁰, մինչդեռ հայտնի է, որ Պահլավունի իշխանը մագիստրոսի պատվաստիճան ստացել է ավելի ուշ՝ Անիի թագավորության անկումից հետո՝ 1045-ին: Հատկանշական է, որ արձանագրության մեջ Տիկնացոյիկինը նշում է, որ բարեգործություն է կատարել շահնշահի (այսինքն՝ Անիի թագավորի՝ տվյալ դեպքում Գագիկ Բ-ի) արևշատության և իր ծնողների հոգու փրկության համար, այսինքն, նրա ծնողներն այդ ժամանակ արդեն մահացած էին:

Գրիգոր Մագիստրոսը հիշատակվում է նաև մատենագրական աղբյուրներում, սակայն ի տարբերություն իր ապրած ժամանակի վիմագրերի՝ Ապիրատ անունով: Նրա մասին գրող հեղինակները՝ Մատթեոս Ուռհայեցին, Մխիթար Անեցին, Վարդան Արևելցին, Մխիթար Այրիվանեցին, Նաթանայել Հավուցթառեցին, ապրել են նրանից մեկ ու կեսից մինչև երեք դար անց, երբ հայ իրականության մեջ Գրիգոր Մագիստրոս անունը նույնականացել էր համանուն Պահլավունի իշխանի հետ, ուստի, թերևս շփոթությունից խուսափելու համար, հիշատակել են իշխանի երկրորդ անունը: Իսկ այն, որ պատմիչների խոսքը միևնույն մարդու մասին է, առաջին հերթին պարզվում է Մխիթար Անեցու և Մխիթար Այրիվանեցու խոսքերից, ըստ որոնց՝ Ապիրատն է կառուցել Կեչառիսը:

Գրիգոր Մագիստրոսին Ապիրատ անունով հիշատակող առաջին հեղինակը Մխիթար Անեցին է, որի Պատմությունից (ավարտվել է 1193 թ.), ցավոք, պահպանվել է միայն սկզբնամասը¹¹: 13-րդ

¹⁰ Լեո, Անի, Երևան, 1963, էջ 322-327, Հայ ժողովրդի պատմություն (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), հ. III, Երևան, 1976, էջ 148, К. Юзбашян, նշվ. աշխ., էջ 161 և այլն:

¹¹ Մխիթար Անեցի, Մատենան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Երևան, 1983 (այսուհետև՝ Մխիթար Անեցի):

դարում Մխիթարի երկից օգտվել են Վարդան Արևելցին, Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը: Հատկապես Վարդանը, երբեմն առանձին հատվածներ բառացի արտագրել է Մխիթար Անեցուց և այս ճանապարհով մեզ հասցրել այդ հետաքրքրական պատմության առանձին բեկորներ: Մխիթար Անեցու Պատմությունից քաղված հենց այդպիսի մի հատվածում պահպանվել է եզակի վկայություն Ապիրատ մեծ իշխանի մասին: Հատվածը վերաբերում է Գագիկ Ա Բագրատունու մահից հետո գահը ժառանգած նրա ավագ որդու՝ Հովհաննես Սմբատի (1017-1041) և վերջինիս կրտսեր եղբոր՝ Աշոտի միջև ծագած գահակալական պայքարի վերջում տեղի ունեցած մի դեպքի: 1021 թ. Պետրոս Ա կաթողիկոսի (1019-1054)¹² և իշխանների միջնորդությամբ կայացած հաշտությամբ որոշվել էր, որ Հովհաննես Սմբատը պետք է թագավորի Անիում ու նրա շրջակայքում, իսկ Աշոտը՝ թագավորության մնացյալ տարածքներում, որը պատմիչները կոչում են «Դրուց աշխարհ»: Դրանից հետո կատարվել է մի միջադեպ, որի մասին հայտնում է միայն Մխիթար Անեցին, որից օգտվելով Վարդան Արևելցին գրում է, որ Թալինի ստորոտում գտնվող իր գորակայանում հիվանդ ձևանալով՝ Աշոտը խաբեությամբ կանչում ու ձերբակալում է Հովհաննես Սմբատին, նրան տալիս Ապիրատ իշխանին, որ սպանի, իսկ սա հոժարակամ նրան տանում է Անի և վերադարձնում գահին, ասելով, որ չի կարող Աստծո օձյալի վրա ձեռք բարձրացնել ու նրա տեղը դնել մի խելագարի: «Նոյն այրն (Մխիթար Անեցին – Կ. Մ.) ասէ եւ յաղագս թագաւորին Յովաննիսի, եթէ եղբայր նորա Աշոտ ի յոտս Թալնայ կեղծաւորեալ որպէս հիւանդ մերձ ի մահ, կոչէ զթագաւորն առ ինքն, փորելով ի սնարիցն կուսէ որոգայթս. եւ այնու ըմբռնեալ՝ տայ ի ձեռս **մեծ իշ-**

¹² Կ. Մաթևոսյան, Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ «Պատմաբանասիրական հանդես», 2008, N 3, էջ 25:

խանին Ապիրատն կոչեցելոյ, սպանանել զնա. եւ նա յօժար կամօք յինքն առեալ տանի դնէ յաթոռ իւր յԱնի, ասելով. Չիա՛րդ ձգեցից զձեռս իմ յօժեալ Տեառն, եւ խելագար մի եղից ի տեղուջ տորա»¹³:

Մխիթար Անեցին խոսքն անմիջապէս շարունակում է ներկայացնելով Ապիրատ իշխանի ծագումը և նրա՝ Կեչառիսի վանքը կառուցելու հանգամանքը. **«Զսմանէ (Ապիրատի մասին – Կ. Մ.) ասեն յաննշանից մեծացեալ, եւ վասն խելացի եւ առատ ձեռացն մինչեւ լիներ տէր երկոտասան հազար հեծելոց, որ եւ շինեաց զսուրբ ուխտն Կեչառուս, որպէս Վարիամ իշխանն՝ զՄարմաշէն»**¹⁴:

Մխիթար Անեցի պատմիչի՝ Ապիրատ իշխանի մասին գրած «յաննշանից մեծացեալ» խոսքերն ուսումնասիրողները, որպէս կանոն, վերագրել են նրա տոհմական ծագմանը: Սակայն, ինչպէս ստորև կտեսնենք, այդ խոսքերը վերաբերում են նրան որպէս անհատի, որն իր հոր ավագ որդին ու նրա իշխանության ժառանգորդը չլինելով՝ «ոչ նշանավորներից» առաջադիմել ու հաջողության էր հասել սեփական խելքի ու առատաձեռնության շնորհիվ:

Մխիթար Անեցու ներկայացրած դեպքին հաջորդած անցքե-

¹³ Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն (գրաբար տեքստը ըստ Վենետիկի 1862 թ. տպագրության), աշխարհաբար թարգմանությունը Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 2001, էջ 102-103 (այսուհետև՝ Վարդան Արևելցի): Այս և հաջորդ մեջբերումներում կատարված ընդգծումները մերն են – Կ. Մ.:

¹⁴ Վարդան Արևելցի, էջ 102-103, աշխարհաբար՝ էջ 139-140: Լ. Խաչերյանը Գրիգոր Մագիստրոս Պաիլավունուն նվիրված մենագրության մեջ Վարդան Արևելցու պատմությունից վկայաբերելով Ապիրատ իշխանի մասին ասված «յաննշանից մեծացեալ» հատվածը, այն վերագրում է Պաիլավունիներին, գրելով, թե Ապիրատը Աբուղամրի որդիներից էր, ինչը ոչ մի հիմնավորում չունի (Վարդան Արևելցու գրքում Աբուղամր անունը ընդհանրապես չկա), տե՛ս, Լ. Խաչերյան, նշվ. աշխ., էջ 19-20:

րի մասին պատմում է նրանից ավելի վաղ ապրած հեղինակ Մատթեոս Ուռհայեցին: Պարզվում է, որ թշնամացած Բագրատունի եղբայրների միջև հայտնված մեծ իշխան Ապիրատի արարքը թանկ է նստել նրա վրա, քանի որ Աշոտի վրեժխնդրությունից խուսափելու համար ստիպված թողել է իր կալվածքները (որոնք գտնվում էին Դրուց աշխարհում) և ընտանիքն ու զորքն առած դուրս եկել Բագրատունյաց թագավորության տարածքից: Հետաքրքրական է սակայն, որ Մատթեոս Ուռհայեցին դեպքերի նախապատմության մասին ակնարկներով է խոսում՝ «Իսկ յայսմ առուրս Ապիրատ ոմն, որ էր մեծ իշխան Հայոց, որդի Հասանայ, սա վասն Աշոտոյ միաբանութեանն, զոր ունէր յառաջագոյն, երկյուղեալ ի թագաւորէն Յովհաննիսէ, ապստամբեալ փախեաւ ի նմանէ եւ գնաց ի Դուին քաղաք...»¹⁵: Ըստ պատմիչի՝ Ապիրատը Հովհաննես Սմբատի ահից է փախել, սակայն հենց այս նույն հատվածի վերջաբանից պարզ երևում է, որ նրա հետ ոչ թե այս թագավորը, այլ նրա եղբայր Աշոտն էր թշնամացած, ինչը միանգամայն հասկանալի է դառնում Մխիթար Անեցու պատմածի շնորհիվ:

Շարունակելով Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ Ապիրատն ապաստան է գտնում Դվինի ամիրա Ապուստուրի մոտ (սա Շադդադյան Աբու-լ-Ասվար, հայկական այլ աղբյուրներում՝ Աբուլասվար անունով հայտնի ամիրան է)¹⁶: Ըստ պատմիչի նա սկզբում լավ է ընդունում Ապիրատին, սակայն չարախոս մար-

¹⁵ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), (գրաբար տեքստը ըստ Ժամանակագրության Վաղարշապատի 1898 թ. հրատարակության), Երևան, 1991, էջ 16 (այսուհետև՝ Մատթեոս Ուռհայեցի):

¹⁶ Աբուլասվար Շադդադյանի իշխանության սկիզբը Դվինում համարվում է 1021 կամ 1022 թվականը: Փաստորեն, Ապիրատն Աբուլասվարի մոտ է գնացել նրա Դվինում հաստատվելու առաջին տարում (Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 209):

դիկ նրան զգուշացնում են, որ բազմաքանակ գորքով իր մոտ գտնվող իշխանը վտանգ է ներկայացնում, և նա դավադրաբար սպանում է Ապիրատին: Իշխանի գորավար Սարին վերցնում է Ապիրատի կնոջն ու երկու որդիներին՝ Ապլջահապին ու Վասակին և գալիս Անի, որտեղ Հովհաննես Սմբատ թագավորը գրկաբաց է ընդունում նրանց, գավառներ ու իշխանություն շնորհում. «...եւ (Ապիրատը – Կ. Մ.) գնաց ի Դուին քաղաք, առ Ապուսուար զօրաւարն Պարսից եւ երկոտասան հազար ձիաւորք ընդ նմա. եւ Ապուսուար մեծարեալ գնա բազում աւուրս: Յայնժամ մատեան առ Ապուսուար չարախօսք ոմանք եւ ասէն, եթէ «Այսպիսի այր յաղթող եւ զօրաւոր եւ զօրօք բազմօք եկեալ է առ քեզ, կորուստ գործէ քեզ եւ ամենայն տանս Տաճկաց»: Յայնժամ ղիս առեալ ամիրային ի սիրտ իւր եւ գաղտ յայլ զօրացն ի գրոյց սիրոյ կոչեաց զԱպիրատն եւ ի ծածուկ կորոյս զայնպիսի այր քաջ, հզօր եւ անուանի ի մէջ ամենայն աշխարհին Հայոց:

Իսկ իշխան ոմն Սարի անուն, որ էր զօրավար մեծ իշխանին Ապիրատին, առեալ զկին եւ զորդիս նոցա եւ զհեծելագունդ զօրսն եւ գնաց ի քաղաքն յԱնի. եւ թագաւորն Յովհաննէս կարի յոյժ ապաշաւէր զանիրաւ մահն Ապիրատին Հայոց իշխանին: Եւ որդեաց նորա Ապլջահապայ եւ Վասակայ, եւ Սարէ եւ զամենայն զօրացն տայր թագաւորն Հայոց գաւառս եւ զիշխանութիւնս»¹⁷:

Ինչպես տեսնում ենք, Հովհաննես Սմբատը դառնորեն ողբացել է Ապիրատի անարդար մահը և իր թեև տակ առել նրա գավակներին, հետևաբար իշխանը փախել էր ոչ թե նրա, այլ Աշոտի երկյուղից: Ապիրատի սպանության՝ պատմիչի նշած դրդապատճառը՝ թե Շադդադյան ամիրան իշխանին սպանում է չարախոս

¹⁷ Մատթեոս Ուռհայեցի, էջ 16-17: Ապիրատի հետ պատահածի մասին Ուռհայեցուց օգտվելով հակիրճ պատմում է նաև Սմբատ Սպարապետը (Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 6, այսուհետև՝ Սմբատ Սպարապետ):

մարդկանց լսելով, շատ պարզունակ է թվում: Իշխանն ընտանիքի հետ Դվին մեկնելով որոշ երաշխիքներ պիտի որ ունենար: Չի բացառվում, սակայն, որ Աբուլասվարը նրան սպանել է Աշոտի դրդմամբ (գուցե նրա ուղարկած մարդիկ են Ուռհայեցու մոտ դարձել «չարախօսք ոմանք»): Մի բան հստակ է, որ հետագայում նրանց հարաբերություններն այնքան են սերտացել, որ Աշոտն իր դստերը (որն իր մոր՝ Կատրամիդեի անունն էր կրում) կնության է տվել Աբուլասվարին¹⁸:

Մատթեոս Ուռհայեցին և Մխիթար Անեցին այս դեպքի թվականը չեն նշում: Բայց Ուռհայեցու մոտ տեղեկությունը զետեղված է մի հատվածում, ուր խոսվում է 1021 թ. տեղի ունեցած անցքերի մասին: «Թագաւորք վերջինք Բագրատունիք» բնագրի վերջում ավելացված անանուն հեղինակի փոքր ժամանակագրության մեջ արձանագրված է Ապիրատի մահվան թվականը. «ՆՀ (1021) Թուրքն եհար զԱպիրատն»¹⁹: Այս տեղեկությունը՝ նույն թվականով, մուծված է նաև Սամվել Անեցու Ժամանակագրության այն օրինակում, որը շարունակել է Ստեփանոս Օրբելյանը. «Թուրքն էհար զԱպիրատն»²⁰:

Հիմնականում Մխիթար Անեցուց (հնարավոր է՝ Վարդան Արևելցու պատմության միջնորդավորմամբ) օգտվելով՝ Ապիրատի մասին գրում է նաև Մխիթար Այրիվանեցին, իշխանի ձեռնարկների թիվն ավելացնելով ևս մեկով՝ Երևանում ջրանցքի շինությամբ՝ «Ապիրատ իշխան 12 000 հեծելի (տեր). **սա շինեաց**

¹⁸ Արիստակիսի Լաստիվերտցույ Պատմություն, աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 62 (այսուհետև՝ Արիստակես Լաստիվերցի): 1030-ականներին այս ամուսնությունից ծնված նրանց որդին՝ Մանուչեն, Անիի տերը դարձավ 1065-ին (Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 86):

¹⁹ Մանր Ժամանակագրություններ, հ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 502:

²⁰ Սամուել Անեցի եւ շարունակողներ, էջ 183:

զԿեչառուս եւ եհան զառուն Երեւանայ»²¹: Այս տեղեկության հիման վրա Երևանը համարվել է Գրիգոր Ապիրատի տիրույթը²²:

Այսպիսով, Հասանի որդի Գրիգորը Բագրատունյաց պետության երևելի իշխաններից էր, որն առաջին անգամ մագիստրոսական պատվաստիճանով հիշատակվում է 1001 թ. և սպանվել է 1021 թվականին:

ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏ ԵՐԿԱՆՈՒՆԸ

Այժմ անդրադառնանք Գրիգոր Մագիստրոսի հետ կապված մի տարակուսելի հարցի՝ Ապիրատ անվան ծագմանը: Ներսես Ակինյանն այս առնչությամբ գրում է. «Անունս կարելի չէ ստուգաբանել հայերեն ապիրատ բառով: Թերևս աղաւաղուած ձևն ըլլայ **ապիպատ** պատուանունին, արտասանուած նախ **ապիրպատ**, ապա ապիրատ, որուն նպաստած կարող է ըլլալ **ապիրատ** բառը: Բայց թէ Ապիրատ ընդունա՞ծ էր Բիւզանդիոնի արքունիքէն «ապիպատ» տիտղոսը, չէ վկայուած: ...Գրիգոր և Ապիրատ մէկ անձնաւորութեան կրած երկանուններն են»²³: Խոսքը, թերևս, «ապուիպատ» տիտղոսի մասին է, որը կրում էին նաև Վեստ Սարգիսն ու Վահրամ Պահլավունին:

Հրաչյա Աճառյանն անվան առնչությամբ գրում է. «ԱՊԻՐԱՏ, արդյոք հայերեն ապիրատ «անարդար» բա՞ռն է. և ինչպե՞ս կարող էր այսպիսի մի հոռի ածական մարդու անուն դառնալ: Այս անունը գործածական էր մեր մեջ ԺԱ-ԺԳ դարերում»²⁴:

²¹ Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 58 (այսուհետև՝ Մխիթար Այրիվանեցի):

²² Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը, Երևան, 1969, էջ 212-213:

²³ Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 373:

²⁴ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 193: Հեղինակը գրում է, որ Ապիրատ անունը հանդիպում է նաև «Վրաց մեջ», վկայակոչելով Վարդան Արևելցու պատմության մի հատված, որտեղ գրված է, թե Գրիգոր Բջնեցին իր հետ վերցնում է

Վերջերս Ապիրատ անվանն անդրադարձել է լեզվաբան Հրաչ Մարտիրոսյանը, ըստ որի *Ապիրատ* անձանունն իսկապես արտացոլում է գրաբարյան *սապիրատ* բառը, իսկ Գրիգոր Մագիստրոսի (Հասանի որդու) պարագայում գործ ունենք Գրիգոր Ապիրատ երկանվան հետ: Վատանունության (cacophemism կամ dysphemism) օրինակներ շատ կան տարբեր լեզուներում, այդ թվում՝ հայերենում, հմմտ. Անպետ, Ապուշ, Գեշ, Յիմար և այլ անձնանուններ: Ապիրատ անունը կարող է հարել այս խմբին²⁵: Մյուս կողմից՝ ուսումնասիրողը հնարավոր է համարում նաև *Ապիրատ* անձնանվան խնդրի լուծման մի այլընտրանքային տարբերակ: Քանի որ *սապիրատ* բառն իր հիմնական «անօրեն, անարդար, անիրավ» իմաստի (ստուգաբանորեն՝ «անդատ») կողքին մատենագրության մեջ վկայված է նաև «վտարված, արտաքսված, տարագիր» իմաստով, ապա կարելի է մտածել, որ *Ապիրատ* անձնանվան հիմքում ընկած է այս իմաստը, որն իսկապես հանդիպում է անձնանուններում (հմմտ. Դարիբ, Նժդեհ և այլն)²⁶:

Նախկինում մենք հակված ենք եղել ընդունելու Ն. Ակինյանի

«Վրաց Ապիրատ իշխանին» ու երկու այլ մագիստրոսների և կոիվ մղում սելջուկների դեմ (Վարդան Արևելցի, էջ 142): Սակայն շարունակության մեջ «Վրաց իշխանի» անունը Լիպարիտ է: Սա հայտնի դեպք է, վկայված նաև այլ աղբյուրներում և վերաբերում է 1048 թ. Բասենի դաշտում տեղի ունեցած ճակատամարտին, որին բյուզանդական կողմից մասնակցում էին Կատակայոն, Ահարոն, Գրիգոր մագիստրոսները և Վրաց Լիպարիտ իշխանը (Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 449): Արևելցու պատմության հրատարակության համար հիմք ծառայած ձեռագրերում հավանորեն գրչական սխալ է սպրդել և Լիպարիտը դարձել է Ապիրատ, հետևաբար «Վրաց մեջ» Ապիրատ անուն չկա:

²⁵ Վատանունության շարժառիթներից մեկը եղել է նորածիններին տանող չար ոգիներին խաբելը, օրինակ, թե՛ սա ապիրատ՝ անօրեն՝ անպետք երեխա է, լավը չի, մի տար նրան մեզնից:

²⁶ Հրաչ Մարտիրոսյանի իր տեսակետը մեզ է փոխանցել անձնական նամակագրությամբ, սակայն Ապիրատ անվան ստուգաբանությունը նա ներառելու է հայոց անձնանուններին նվիրված, առաջիկայում հրատարակվելիք ուսումնասիրության մեջ:

տեսակետն, ըստ որի Գրիգորի կրած տիտղոսը դարձել է նրա մականունը, իսկ հետագայում հանդես եկել որպես առանձին անձնանուն, սակայն այժմ հնարավոր ենք համարում նաև, որ ի սկզբանե նա ունեցել է Գրիգոր և Ապիրատ անունները: Հայտնի է, թե նախկինում արդյո՞ք եղել է Ապիրատ անունը, քանի որ առաջին անգամ մատենագրության մեջ վկայվում է հենց Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսի անվան առնչությամբ:

Հարկ է նշել, որ երկանվանությունը հիշյալ ժամանակի հայ ազնվականության շրջանում սովորական երևույթ էր: Անին մայրաքաղաք հռչակած Աշոտ Գ Ողորմած թագավորն Աշոտ Գագիկ երկանունն ուներ: Այդ մասին է վկայում Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ կատարված մի ընդմիջարկություն. «Գագիկ թագաւոր օծաւ Հայոց, որ է նոյն Աշոտ որդի Աբասայ»²⁷: Հանրահայտ է նաև Աշոտ Գ-ի թոռան՝ Հովհաննես Սմբատի երկանությունը, որի մասին հարկ է համարում ծանուցել Սամվել Անեցին՝ «Յովանէս, որ եւ Սմբատ, որդի Գագկայ Շահնշահի»²⁸: Կարծում ենք, որ մատենագիրները նման պարզաբանումներն անհրաժեշտ էին համարում հետագայում թյուրիմացություններից խուսափելու համար, քանի որ արձանագրություններում և այլուր երկանունն ունեցող գործիչները հիմնականում հիշատակվում են կամ մեկ, կամ մյուս անունով: Այս առումով բնորոշ է նույն Հովհաննես Սմբատի օրինակը, որը Հռոմոսի վանքի 1036 թ. արձանագրության մեջ իր մասին գրում է. «ես Սմպատ շահան-

²⁷ Սամուել Անեցի եւ շարունակողներ, էջ 175: Այս թագավորին Աշոտ-Գագիկ կամ Գագիկ է կոչում Մատթեոս Ուռհայեցի (Մատթեոս Ուռհայեցի, էջ 8-9): Աշոտ Ողորմածը միայն Գագիկ անունով է հիշվում մանր ժամանակագրություններից մեկում («Գագիկ օծաւ թագաւոր 411 (962) ի թուին Հայոց»), տեղեկություն, որը ծանոթագրելով՝ Վ. Հակոբյանը թյուրիմացաբար կարծել է, թե ժամանակագիրը նշել է ավելի ուշ՝ 989-ից թագավորած Գագիկ Ա-ին (Մանր ժամանակագրություններ, հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 337, 347):

²⁸ Նույն տեղում, էջ 183:

շահ որդի Գագկա շահանշահի», իսկ երկու տարի անց նույն վանքի մեկ այլ վիմագրում՝ «ես Յովաննէս շահանշահ որդի Գագկա շահանշահի»²⁹:

Երկանվանության երևույթի տեսական վերլուծությունը գտնում ենք ժամանակի հանրահայտ գիտնական իշխանի՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) «Մեկնութիւն քերականին» գործում, որտեղ նա գրում է՝ «Երկանուն է, որպէս անունք երկու եղեպ ի վերայ միոյ մարդոյ», ապա մի օրինակ բերելով Աստվածաշնչից՝ «Եղիագարոս Աւարան», պարզաբանում է, որ երկու անունները միշտ միասին չեն գործածվում, կարող է նշվել մեկը կամ մյուսը՝ «...Եղիագարոս, նոյն եւ Աւարան կարէ կոչիլ»³⁰:

Երկանուն ունեին նաև Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի ժամանակակից մի քանի Պահլավունի իշխաններ, ինչպես օրինակ՝ Գրիգոր Համգե, Վասակ Հոյոմ, Տիգրան Ապղարիք: Ընդ որում, գրեթե ամենուր օգտագործվում է նրանց անուններից մեկը, կամ մյուսը: Օրինակ, Վահրամ Պահլավունին, որ Մարմաշենի արձանագրության մեջ (1029 թ.) իրեն կոչում է «որդի Գրիգորի իշխանի»³¹, 1015 թ. Մաստարայի արձանագրության մեջ գրում է՝

²⁹ Ն. Սարգիսեան, նշվ. էջ 146, 166: Հետաքրքիր է, որ Հովհաննես Սմբատի վաղամեռիկ որդին էլ է ունեցել երկու անուն՝ Աշոտ և Երկաթ, որոնք առանձին-առանձին նշվում են տարբեր աղբյուրներում: Արիստակես Լաստիվերցին Հովհաննես Սմբատի մասին գրում է. «...որդի նորա Երկաթ վաղ վախճանեցաւ» (Արիստակես Լաստիվերցի, էջ 32): Իսկ Երեւույքի 1038 թ. արձանագրության մեջ այս թագավորի կինն իրեն կոչում է Աշոտի մայր (Ա. Մանուչարյան, Վիմագրերը որպէս Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ, Երևան, 2015, էջ 92): Հավանորեն Հովհաննես Սմբատի որդուն կոչել են Աշոտ Երկաթ երկանունով ի հիշատակ Աշոտ Բ Երկաթ թագավորի: Մվելի ուշ ունենք նաև Երկաթ առանձին անուն: Երկանունությունը տարածված էր նաև Վասպուրականի թագավորների շրջանում:

³⁰ Գրիգոր Մագիստրոս, «Մեկնութիւն քերականին», Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, Երևան, 2012, էջ 445:

³¹ И. Орбели, Надписи Мармашена, Избранные труды, Ереван, 1963, с. 440-442.

«Ես Վահրամ իշխանաց իշխան որդի Համգեի»³²: Այս միջավայրում բնավ տարօրինակ չէ, որ Հասանի որդին էլ Գրիգոր և Ապիրատ անուններն ունեցած լինի: Այս տեսակետի օգտին է խոսում և այն, որ նրա սերունդի ներկայացուցիչները շատ երկար ժամանակ շարունակել են կրել Գրիգոր և Ապիրատ անունները: Հետաքրքրական է, որ Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի թոռանը (Վասակի որդուն) Ստեփանոս Օրբելյանը կոչում է «Շիրակայ իշխանն՝ Գրիգոր Ապիրատեան», իսկ սրա թոռանը (Հասան Մագիստրոսի որդուն), որը հիշատակվում է 1170-ական թվականներին՝ «Անեցին՝ Գրիգոր Ապիրատեան», քիչ անց՝ «Գրիգոր Մագիստրոսեանց»³³: Բայց այս նույն իշխանին Վարդան Արևելցին կոչում է Ապիրատ անունով՝ «մեծ իշխանն Ապիրատ»³⁴, իսկ նրա որդին՝ Անիի Սարգիս Ա եպիսկոպոսը, բազմաթիվ արձանագրություններում իրեն կոչում է «որդի Ապիրատի»³⁵: Այսինքն, ակներև է, որ այս իշխանն իր նախապապի նման Գրիգոր Ապիրատ երկու անունով է կոչվել³⁶:

Ներսես Շնորհալին, իր հոր՝ Ապիրատի (որը հարակից տվյալներից դատելով Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի թոռն էր՝ Ալլախապի որդին) անվան մասին գրում է. **«Չնախնական անուն առեալ, որ Ապիրատն էր յորջորջեալ»**³⁷ («Նախնական», այ-

³² Կ. Կոստանեանց, Վիմական Տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 14:

³³ Ստեփանոս Օրբելեան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 320, 384-385:

³⁴ Վարդան Արևելցի, էջ 133: Այս իշխանին Ապիրատ է կոչում նաև Սամվել Անեցու շարունակողը (Սամուել Անեցի եւ շարունակողներ, էջ 221):

³⁵ Տե՛ս Կ. Մաթևոսյան, Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 75-80:

³⁶ Իրավացի է Ն. Ակինյանը, որ իշխանին կոչում է հենց Գրիգոր Ապիրատ, թեև Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունը չի վկայակոչում (Ն. Ակինեան, Ներսես Լամբրոնացի, էջ 394):

³⁷ Ներսեսի Շնորհալույ Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 601:

սինքն՝ նախնյաց, հայրենի)³⁸։ Իսկ այս տոհմից սերող վերջին կաթողիկոսն էլ գրեթե բոլոր աղբյուրներում հենց Գրիգոր Ապիրատ երկանունով է հիշատակվում³⁹։

Ինչպես վերևում տեսանք, իր ապրած ժամանակի աղբյուրներում՝ Արզականի, Կեչառիսի և Տեկորի արձանագրություններում իշխանը կոչվում է Գրիգոր Մագիստրոս։ Իսկ նրան Ապիրատ անունով հիշատակող առաջին պատմիչները՝ Մատթեոս Ուռհայեցին և Մխիթար Անեցին, իրենց երկերը գրել են իշխանի մահից համապատասխանաբար շուրջ 110 և 170 տարի անց։ Հնարավոր է, որ մատենագիրները նախընտրել են նրա երկրորդ՝ Ապիրատ անունը նշել, որպեսզի խուսափեն այդ ժամանակ համընդհանուր ճանաչում գտած մեկ այլ նույնանուն իշխանի՝ Գրիգոր Մագիստրոս Պախլավունու (Բջնեցու) անվան հետ շփոթությունից։

Կարծում ենք, որ ինչպես սկզբնաղբյուրների տվյալների, այնպես էլ ուսումնասիրողների տեսակետների ներդաշնակեցման տեսանկյունից նպատակահարմար կլինի այսուհետև հիշյալ գործչին կոչել Գրիգոր Ապիրատ երկանունով։ Այժմ տեսնենք թե աղբյուրներում ինչ տեղեկություններ են պահպանվել նրա հոր և տոհմական ծագման մասին։

ՏՈՀՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Գրիգոր Ապիրատի հոր մասին Ն. Ալիևյանը գրում է. «Հասան. սա հայրն էր Ապիրատի. իր մասին աւելի բան չենք գի-

³⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Բ, Վենետիկ, 1837, էջ 401։

³⁹ Գրիգոր Չ Ապիրատ (1194-1203), «Տէր Գրիգոր Ապիրատն ամս եօթն» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 148 (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի), հմմտ. Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 232, և այլն)։

տեր»⁴⁰: Բարեբախտաբար բոլորովին վերջերս Մատենադարանի ձեռագրերից մեկում (թիվ 3681) հայտնաբերվեց Հասանի անվան մեկ այլ հիշատակություն Հավուց թառի առաջնորդ Նաթանայելի (14-րդ դ.)՝ Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ կատարած հավելման շնորհիվ: Պարզվում է, որ նույն Հասանի զավակն է եղել նաև Քեդի (Գեդի) ամրոցի տեր իշխան Գևորգը, որը կառուցել է Հավուց թառի Կաթողիկե եկեղեցին: Մինչև այժմ Մխիթար Այրիվանեցու կարճ հաղորդմամբ հայտնի էր այդ մասին՝ «Շինի եւ Հաւուց թառն ի Գեորգեայ իշխանէն Քեդույ»⁴¹: Սակայն հայտնի չէր, թե ում զավակն էր Գևորգ իշխանը: Եվ ահա նույն Կաթողիկե եկեղեցու կառուցման առնչությամբ՝ 1002 թվականի դեպքերի շարքում Հավուց թառի վանահայր Նաթանայելը Գևորգ իշխանի ծագման մասին հայտնում է չափազանց արժեքավոր տեղեկություն. **«Գեորք իշխանաց իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին...»**⁴²:

Գրիգոր Ապիրատի և Քեդի ամրոցի տեր Գևորգ իշխանի եղբայրներ լինելու հանգամանքի բացահայտման շնորհիվ պարզ է դառնում, որ Հասանը նույնպես իշխան էր, և որ Մխիթար Անեցու՝ Ապիրատի վերաբերյալ ասածը՝ «յաննշանից մեծացեալ», չի վերաբերում նրա տոհմական ծագմանը, այլ նրա անձին: Միաժամանակ զգալի չափով հիմնավորվում են պատմիչների հաղորդումներն այն մասին, որ Գրիգոր Ապիրատը տեր էր 12 000 հեծյալի, որը մինչև այժմ մեծ չափազանցություն էր թվում: Հասանի որդիների իշխանությունը տարածվում էր Վարաժնունիքից (Կեչառիս) մինչև Երևան, հասնում Հավուց թառի վանք ու Քեդի ամրոց, որը սահմանակից էր Դվինի ամիրայությանը: Այսպիսի տարածքի վրա իշխողները կարող էին պատկառելի զինուժ ունենալ:

Գևորգի մասին ավելացնենք, որ Նաթանայել Հավուցթառե-

⁴⁰ Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 373:

⁴¹ Մխիթար Այրիվանեցի, էջ 57:

⁴² Մատենադարան, ձեռ. թիվ 3681, թերթ 78ա, Սամուել Անեցի եւ շառունակողներ, էջ 181:

ցու հայտնածի համաձայն իշխանը ոչ միայն կառուցել է Հավուց թառի ինը խորանով Կաթողիկե եկեղեցին (այժմ ավերված է), այլև վանքին զգալի նվիրատվություններ կատարել, այդ թվում Գողթ (Կոխթ) գյուղը, որ գնել էր Գագիկ Ա թագավորից ու նրա որդուց՝ Հովհաննես Սմբատից⁴³:

Նշենք, որ այս տոհմի կրտսեր ներկայացուցիչներին անդրադառնալիս պատմիչները նրանց նախնիների թվարկումը հասցնում են մինչև Հասանի անունը: Օրինակ, Մատթեոս Ուռհայեցին Գրիգոր Ապիրատի թոռանը՝ Գրիգորին, որը պատերազմում սպանվեց ու թաղվեց Կեչառիսում, ներկայացնում է հետևյալ կերպ՝ «...քաջ զորականն և մեծ հաւատացեալն **Գրիգոր, որդի Վասակայ, որդի Ապիրատին՝ որդոյ Հասանայ, յազգէ քաջանց...**»⁴⁴: Պատմիչը և նրան հետևելով Սմբատ Սպարապետը, նույն հետադարձ թվարկումն են անում այս Գրիգորի եղբորը՝ Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսին ներկայացնելիս⁴⁵:

Քեղիի տեր Գևորգ իշխանի ժառանգների մասին մինչ այժմ ոչինչ հայտնի չէր, սակայն հոր անվան հայտնի դառնալով այժմ հնարավոր է նրանց փնտրել հենց նույն տոհմական վանքում՝ Հավուց թառում: Վանքի տարածքում պահպանված հնագույն արձանագրությունը, որը խաչքարի վրա է, հետևյալ բովանդակությունն ունի. «Յիշէ Քրիստոս **գՀասան**, զորդի **Սմբատա**, զծառա քո և ողորմեա նմա, ամեն, թվ. ՇԼ (1081) էր»⁴⁶: Եթե նկա-

⁴³ «Գեորք իշխանաց իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին վերջստին նորոգեց գնախաղրական հռչակաւոր սուրբ ուխտն գՀաւուց թառ եւ շինեց զփառաւոր զիրաշալի Կաթողիկէն Թ (9) խորանաւ, եւ արար զանձագին զմերձակա գեղն զԿոխթ ի Գագիկ շահանշահէ եւ Յովանիսէ եւ ետ Հաւուց թառոյ Սուրբ Կաթողիկէին հայրենիք...» (Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 181):

⁴⁴ Մատթեոս Ուռհայեցի, էջ 288:

⁴⁵ Նույն տեղում, էջ 226, Սմբատ Սպարապետ, էջ 82:

⁴⁶ Գ. Հովսեփյան, Հավուց Թառի Ամենափրկիչը և նույնանման հուշարձանները հայ արվեստի մեջ, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երևան, 1987, էջ 17, 20:

տի ունենանք հայկական իշխանական տոհմերի մոտ ավագ թոռանը պապի անունով կոչելու կայուն սովորությունը⁴⁷, ապա կարող ենք ենթադրել, որ Գևորգ իշխանի որդին կրել է պապի անունը՝ Հասան, և նրա ժառանգներն են Սմբատն ու նրա որդի՝ պապի անունով կոչված Հասանը: Անուղղակիորեն այս ենթադրության օգտին է խոսում այն, որ Գրիգոր Ապիրատի երկու որդիներն Այլջահապ և Վասակ անուններն ունեին: Նա զավակներից մեկին հոր անունով Հասան չի անվանակոչել ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ իր ավագ եղբոր՝ Գևորգի որդին (Հասանի ավագ թոռը) արդեն կրում էր այդ անունը:

Կարծում ենք, որ հենց այս՝ Հասանի որդիների ավագության հարցի համատեքստում պիտի որոնել Ապիրատի մասին ասվածը, թե նա «յաննշանից մեծացեալ եւ վասն խելացի եւ առատ ձեռացն մինչև լինել տէր երկոտասան հազար հեծելոց»: Հավանորեն նա Հասանի կրտսեր որդին էր, և մինչ Գևորգն ավագության իրավունքով ժառանգել էր հոր իշխանությունն ու Քեղի բերդը, իր որդուն էլ կոչել նրա անունով՝ Հասան, կրտսեր Գրիգոր Ապիրատն իր խելքով ու ձեռներեցությամբ «ոչ նշանավորներից», կամ «փոքրերից» բարձրացել, ճանաչում էր գտել ու տեր էր դարձել բազմաքանակ հեծելազորի:

Գևորգ իշխանի և Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի առնչության մեկ այլ վկայություն պետք է համարել ժամանակին Հավուց թառում եղած, այժմ ցավոք կորած մի արձանագրություն, որն այս սկիզբն ունի՝ «Թուին ՆԿԲ (1013) ի թագաւորութեանն

⁴⁷ Կիլիկյան հայկական ազնվական տոհմերին անդրադառնալով Լ. Տեր-Պետրոսյանը գրում է. «Մեծ հոր և անդրանիկ թոռան անուններին նույնությունը քարացած ավանդույթ էր հայ միջնադարյան ազնվական գերդաստաններում: Համենայն դեպս Ռուբինյան և Հեթումյան ընտանիքների ազգաբանությունն այս առումով համարյա բացառություն չի ճանաչում. բոլոր այն դեպքերում, երբ հաստատված է, որ թոռն անդրանիկն է, նա անպայման կրում է պապի անունը...» (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 79):

Գագկայ եւ ի հայրապետութեան տեառն **Սարգսի**, եւ **Գրիգոր Մագիստրոս...**»⁴⁸: Հետագա տեքստում խոսվում է եկեղեցու կառուցման և վանքին նշանավոր Ամենափրկիչ խաչի նվիրատվության մասին, իսկ ամբողջ գործը վերագրվում է Պահլավունի Գրիգոր Մագիստրոսին և անգամ որպես վանահայր հիշատակվում է նրա որդի Վահրամը (հետագայում՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոս): Իրականում, վերջինս այդ ժամանակ հավանաբար դեռ չէր էլ ծնվել (եթե նկատի ունենանք, որ մահացել է 1105 թ.), իսկ Պահլավունի իշխանն, ինչպես տեսանք, մագիստրոսության պատիվ ստացել է 1045-ին:

Այս արձանագրությանը մենք անդրադարձել ենք հանգամանակից ուսումնասիրությամբ և հանգել այն եզրակացության, որ դրա տեքստը կազմվել է ուշ շրջանում (15-րդ դար): Սակայն արձանագրության սկզբնամասը, հավանորեն, քաղվել է մի հնագույն արձանագրությունից, որտեղ նշված Գրիգոր Մագիստրոսը (1013 թ.) չէր կարող այլ մարդ լինել, քան Գևորգ իշխանի եղբայր Գրիգորը⁴⁹: Ուշագրավ է նաև, որ Նաթանայել Հավուցթառեցին Սամվել Անեցու ժամանակագրության մեջ 1013 թ. ներքո մի տեղեկություն է մուծել, նշելով, որ Գագիկ Ա թագավորն այդ ժամանակ Ամենափրկիչ խաչը տվել է Գևորգ իշխանին⁵⁰: Սա հավելյալ կովան է ենթադրելու համար, որ այդ թվականին Հավուց թառում մի արձանագրություն է գրվել, որտեղ հիշատակվել է նաև Գևորգ իշխանի եղբոր՝ Գրիգոր Մագիստրոսի անունը (թերևս նա էլ խաչի ընծայման առիթով իր հերթին նվիրատվութ-

⁴⁸ Գ. Հովսեփյան, Հավուց Թառի Ամենափրկիչը, էջ 7:

⁴⁹ Կ. Մաթևոսյան, Հավուց թառի վանքը, Երևան, 2012, էջ 23-30: Վիմագիրն ավելի վաղ քննած Գ. Սարգսյանը եկել է այն եզրակացության, որ արձանագրության հայտնաբերման և տեղադրության հանգամանքները հնարովի են և այն կեղծ է (Գ. Սարգսյան, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, Լրաբեր հաս. գիտ., 1988, թիվ 4, էջ 68-71):

⁵⁰ Սամուել Անեցի եւ շարունակողներ, էջ 182:

յուններ է կատարել): Սակայն հետագայում վանքի 15-րդ դարի վանահայրերը, որոնք պարոնտեր էին ու իրենց Պահլավունյաց տոհմից էին համարում, արձանագրությունը վերախմբագրել են սեփական հայեցողությամբ ու Գրիգոր Մագիստրոսին վերագրել նույնանուն Պահլավունի իշխանի տվյալները:

Ցավոք հայտնի չէ Հասանի հոր անունը: Սակայն չի բացառվում որ նա եղած լինի Աշոտ Բ Երկաթի (914-929) հավատարիմ զորական, ժամանակի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու բնութագրմամբ՝ թագավորի պատվավորներից («ոմն ի պատուաւորաց»)՝⁵¹ Գևորգը, որին հետագայում, պատմագրության մեջ, սկզբնաղբյուրներում չվկայված Մարգպետունի տոհմանունով են կոչել: Դժվարին կացության մեջ գտնվող Բագրատունի թագավորին հավատարիմ մնացած այս զորականը պատմության մեջ հայտնի է իր փոքրաթիվ զորականներով հենց նույն Բեդի ամրոցի պատերի տակ արաբական զորքին պարտության մատնելու քաջագործությամբ (924 թ.)⁵² և հնարավոր է, որ հենց դրանից հետո այդ բերդը նրան է տրվել որպես սեփականություն: Այս նույնացման օգտին է նաև այն, որ Հասանն իր ավագ որդուն, ավագ թոռներին պապի անունով անվանակոչելու անխախտ ավանդությամբ, Գևորգ է կոչել իր հոր անունով:

Տոհմի ծագման վերաբերյալ հետաքրքրական ակնարկ է պահպանվել ուշ շրջանի մի հեղինակի՝ Մանուէլ Բջնեցի եպիսկոպոսի՝ Հավուց թառի վանքին նվիրված գանձում (15-րդ դ.), որտեղ տեղի Կաթողիկե եկեղեցին կառուցող Գևորգ իշխանն անվանվում է՝ «ոստ Բագրատունի»⁵³: Եթե հավատանք սույն վկայությանը, ապա չի բացառվում, որ այս տոհմը, օրինակ, իգա-

⁵¹ Դրասխանակերտցի, Հայոց պատմություն (գրաբար, աշխարհաբար) աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 354:

⁵² Նույն տեղում, էջ 356-357:

⁵³ Գանձ Ամենափրկչին ի տեղ Մանուէլ Բջնեցւոյ (Մատենադարան, ձեռ. 427), տե՛ս Կ. Մաթևոսյան, Հավուց թառի վանքը, էջ 94:

կան գծով կապված է եղել Բագրատունիների հետ: Հետաքրքրական է, որ երբ Անիի Գագիկ Ա թագավորն ու նրա կինը՝ Կատրամիդեն, Քրիստոսի ծննդյան 1000-ամյակը նշանավորեցին մայրաքաղաքում շքեղ եկեղեցիների կառուցմամբ (Անիի Գագկաշեն Ս. Գրիգոր և Մայր տաճար), նրանց օրինակին հետևեցին երկրի գլխավոր իշխանները, որոնց թվում առաջինները հենց Հասանյաններն էին, որ, ինչպես տեսանք, 1002-ին եկեղեցի են կառուցել Հավուց թառում (Գևորգ իշխան) և 1003-ին՝ Կեչառիսում (Գրիգոր Ապիրատ): Նրանց հաջորդեցին այլ իշխաններ՝ Սմբատ Մագիստրոսը (Բագնայր, 1010 թ.), Վահրամ Պահլավունին (Մարմաշեն, 1029 թ.): Թերևս պատահական չէ նաև Գագիկ Ա-ի թանկագին նվերը Գևորգ իշխանին (Ամենափրկիչ խաչը), Գրիգոր Ապիրատի մագիստրոսության արժանանալն ու կտրուկ վերելքը նույն այս թագավորի ժամանակ, իսկ հետագայում՝ Հովհաննես Սմբատի ջերմ վերաբերմունքը նրա զավակների նկատմամբ, հանգամանքներ, որ նույնպես տոհմական մերձավորության օգտին են խոսում:

ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՉԱՎԱԿՆԵՐԸ

Համառոտակի անդրադառնանք նաև Գրիգոր Ապիրատի զավակներին, քանի որ նրանց վերաբերող տեղեկությունները զգալիորեն ամբողջացնում են նաև իշխանի կենսագրությունը: Ինչպես տեսանք Մատթեոս Ուռհայեցու վկայությունից 1021 թ. Դվինում Գրիգոր Ապիրատի սպանությունից հետո զորավար Սարին իշխանի ընտանիքը բերեց Անի, որտեղ Հովհաննես Սմբատը ստանձնեց նրա երկու որդիների խնամակալությունը («...թագաւորն Յովհաննէս կարի յոյժ ապաշաւէր զանիրաւ մահն Ապիրատին Հայոց իշխանին: Եւ որդեաց նորա **Ապլջահապայ** եւ **Վասակայ**, եւ Սարէ եւ զամենայն զօրացն տայր թա-

գաւորն Հայոց գաւառս եւ զիշխանութիւնս»)⁵⁴: Դատելով պատմիչի՝ Գրիգոր Ապիրատի գավակների անունները տալու հերթականությունից Այլջահապն ավագն էր: Սակայն չի բացառվում, որ Մատթեոս Ուռհայեցին (կամ նրան տեղեկություն հայտնողը) սխալված լինեն: Վասակի ավագության օգտին է խոսում այն, որ նա մնացել է Անիում, մինչդեռ Այլջահապն այս կողմերում չի հիշատակվում: Վասակն իր ավագ որդուն հոր անունով Գրիգոր է կոչել, որի մահից հետո նրան հուղարկավորել են Կեչառիսում, այսինքն՝ տոհմական, պապական ճյուղի վանքում:

Քանի որ մեր պատմիչները կանանց անուններ տալու մեջ խիստ ժխտ են, Ուռհայեցու մոտ ևս բացակայում է Գրիգոր Ապիրատի դստեր անունը, բայց ինչպես վերևում տեսանք, այդպիսին եղել է, և 1042 թվականին էլ արձանագրություն է թողել Տեկորում, որտեղ իրեն կոչում է Տիկնացտիկին (այս անձնանվան կրճատ ձևը Տիկնացն է): Թե որքան հոգատար է գտնվել Հովհաննես Սմբատն այս ընտանիքի նկատմամբ, կարծում ենք, երևում է հենց այս աղջկա օրինակով, որը հիշյալ արձանագրության մեջ իրեն կոչում է Վեստ Սարգսի կինը: Հայտնի է, որ Վեստ Սարգիսն այդ ժամանակ մեկն էր «ի գլխաւոր ազատացն Հայոց»⁵⁵, արքունիքում մեծ կշիռ ունեցող և թագավորին մերձավոր մարդ էր, ուստի նրա ամուսնությունը չէր կարող պատահական կերպով լինել: Միանգամայն հավանական է, որ Գրիգոր Ապիրատի դստերը, որպես նրա խնամակալ, հենց Հովհաննես Սմբատ թագավորն է Վեստ Սարգսին կնության տվել: Դրանով վերջինս ավելի է մտերմացել Հովհաննես Սմբատին: Պատահական չէ, որ թագավորի մահվան ժամանակ Վեստ Սարգիսը հիշատակվում է որպես նրա հոգաբարձու⁵⁶:

Թեև ուղղակի վկայությունները բացակայում են, սակայն

⁵⁴ Մատթեոս Ուռհայեցի, էջ 16-17:

⁵⁵ Արիստակես Լաստիվերցի, էջ 57:

⁵⁶ Նույն տեղում:

քնական պիտի համարել, որ Հովհաննես Սմբատը նույն հոգատարությամբ կին է ընտրել նաև Գրիգոր Ապիրատի որդիների համար: Այսպես, Գրիգոր Բջնեցու որդի՝ 1066-ից Հայոց կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի մասին Մատթեոս Ուռհայեցին հայտնում է, որ նա 1072 թվականին գնալով Անի, տեղի եպիսկոպոս է ձեռնադրել իր քրոջ որդի Բարսեղին, որը Ապիրատի որդի Վասակի որդին էր. «...Տեր Գրիգորիս գնացեալ ի մայրաքաղաքն Հայոց, որ կոչի Անի, եւ անդ ձեռնադրեաց եպիսկոպոս զԲարսեղն՝ զքեռորդին իւր՝ զորդի Վասակայ, որդւոյ Ապիրատին, որդւոյ Հասանայ»⁵⁷: Այսինքն, Գրիգոր Ապիրատի որդին՝ Վասակը, ամուսնացել է Անիի թագավորության մեկ այլ նշանավոր իշխանի՝ Գրիգոր Բջնեցու դուստրերից մեկի հետ: Եթե նկատի ունենաք, որ 1021 թվականից Վասակն անհայր էր մնացել և հանձնվել Հովհաննես Սմբատի խնամակալությանը (վերջինս մանկահասակ որդուն կորցնելուց հետո անգավակ էր), միանգամայն հավանական պիտի համարել, որ նրա համար հարսնացուի նման շահեկան ընտրություն կատարողը նույնպես թագավորն է եղել:

Վասակն ու նրա կինն ունեցել են չորս զավակ՝ Գրիգոր, Բարսեղ, Հասան, Այլջահապ: Սրանցից Գրիգորը Անիում գլխավոր հայ իշխանն էր Մանուչե ամիրայի ժամանակ, սեփական գորքն ունեցող քաջ զորական, նրա եղբայրը՝ 1072-ին Անիի եպիսկոպոս, իսկ 1081-ին (1105-ից միանձնյա) կաթողիկոս դարձած Բարսեղ Ա Անեցին էր: Գրիգորի՝ Հասան Մագիստրոս անունով հիշատակվող որդու զավակներն էին 12-րդ դարում հայտնի իշխան Գրիգոր Ապիրատն ու Բարսեղ Բ Անեցի եպիսկոպոսը:

Գրիգոր Ապիրատի որդի Վասակի ու Գրիգոր Բջնեցու դստեր կազմած ընտանիքի մասին խոսքն ավարտենք ևս մի դիտարկումով: Նախկինում նշել ենք, որ Հասանյան (Ապիրատյան) տոհմը

⁵⁷ Մատթեոս Ուռհայեցի, էջ 226, Սմբատ Սպարապետ, էջ 82:

Պահլավունիների հետ նույնացնող հեղինակները դրա համար սկզբնաղբյուրներից բխող հիմնավորումներ չեն ներկայացնում: Իսկ այս ամուսնության փաստն ինքնին բացառում է այդ տոհմակցությունը, քանի որ նույն տոհմի անդամների միջև ամուսնությունն արգելված էր եկեղեցական կանոններով: Այլ հարց է, որ նկատի ունենալով հենց այս ամուսնության պարագան, տոհմի հետագա անդամների համար պատմիչները երբեմն նշում են Պահլավունի տոհմանունը՝ հաշվի առնելով իգական գիծը (Գրիգոր Բջնեցու դստեր հանգամանքը): Սակայն հատկանշական է, որ այս տոհմի՝ Վասակի ճյուղի ներկայացուցիչները, իրենց գրած արձանագրություններում երբեք Պահլավունի չեն կոչվում:

Ցավոք, աղբյուրներում նշված չէ, թե ինչպես է ընտանիք կազմել Գրիգոր Ապիրատի մյուս որդին՝ Ապլջահապը: Ն. Ակինյանն այս առնչությամբ գրում է. «Վկայում է, թե Վասակի կինը Գրիգորի դուստրն է, բայց լռած է պատմությունը ի մասին Ապլջահապի: Մինչ Վասակ մնաց Արեւելք (Անի, Խաչենք), Ապլջահապ կերեւայ թե 1045-ին իր աներոջ հետ զաղթեց Միջագետք եւ տիրացաւ այնտեղ Ծովք ամուր բերդին»⁵⁸: Ներսես Ակինյանի այն ենթադրությունը, որ հենց Գրիգոր Ապիրատի որդի Ապլջահապն է եղել Գրիգոր Բջնեցու դուստրերից մեկի ամուսինը, որից ծնվել են նրանց Ապիրատ, Գրիգորիս, Վահրամ, Վասակ զավակները, միանգամայն հնարավոր է: Թեպետ հաճախ չի պատահում, որ երկու եղբայրների ամուսնացնեն երկու քույրերի հետ, բայց եթե հիշենք, որ Գրիգոր Ապիրատի զավակների ապագան որոշողը Հովհաննես Սմբատն էր, չի բացառվում, որ թագավորի առաջարկով Գրիգոր Բջնեցին իր երեք դուստրերից երկուսին կնության է տվել Ապլջահապ և Վասակ եղբայրներին:

Քանի որ ուղղակի վկայություն չունենք, պետք է հաշվի առ-

⁵⁸ Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 379-380, Բ. Կիլիսեբեան, Ծովք (Ծովք-Տյուք եւ Հոռմ-Կլայ), Վիեննա, 1904, էջ 10-16:

ներք հարակից տվյալները: Այս խնդրի լուծման համար էական է հիշյալ ընտանիքի անդրանիկ որդու անվանակոչությունը Ապիրատ հազվագյուտ անունով: Եթե Վասակն ավագ որդուն կոչել է հոր անունով՝ Գրիգոր, հնարավոր է, որ Այլջահապն էլ իր անդրանիկին կոչել է երկանուն ունեցող հոր մյուս անունով՝ Ապիրատ: Ինչպես վերևում տեսանք, վերջինիս զավակը՝ Ներսես Շնորհալին այդ անունը համարել է «նախնական», այսինքն՝ հայրենի:

Սակայն պետք է նշել, որ Այլջահապ անունն այս տոհմի սերունդների մեջ այլևս չի կիրառվել: Ապիրատի որդին՝ Ներսես Շնորհալին, որն այնքան սիրով է հիշատակում իր հորը, ոչ մի անգամ չի տալիս նրա հոր, այսինքն՝ իր պապի անունը: «Վիպասանությին նախնի ըստ Հոմերի սկսեալ ի վերուստ» երկում Ներսես Շնորհալին պատմում է իր տոհմի մասին, գովաբանական ոճով անդրադառնում է Գրիգոր Մագիստրոս Պապականության գործունեությանը, նկարագրում նրա Վահրամ որդու կաթողիկոսանալը (Գրիգոր Վկայասեր), որի քրոջ թոռն էր ինքը: Շնորհալին գովաբանում է Ապիրատի մայրական գծով պապին՝ Գրիգոր Մագիստրոս Պապականություն ու հիշատակում անգամ վերջինիս հորը՝ Վասակին⁵⁹: Քանի որ կաթողիկոսական իշխանությունը շարունակելու տեսակետից Ներսես Շնորհալու համար չափազանց կարևոր էր իր և ավագ եղբոր՝ Գրիգորի (Գրիգոր Գ Պապականի կաթողիկոս) Պապականյաց, այսինքն՝ Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմից սերված լինելն ընդգծելը, նա հատուկ տեղ է տալիս դրան⁶⁰, սակայն խոստովանում է, որ մայրական գծով են

⁵⁹ Ներսեսի Շնորհալույ Բանք չափաւ, էջ 587-588:

⁶⁰ Հատկանշական է 1166 թ. ապրիլի 17-ին Հռոմկալում կաթողիկոսական ձեռնադրության ժամանակ Ներսես Շնորհալու արտասանած ճառի այն հատվածը, որը վերաբերում է նրա նախնիներին՝ Գրիգոր Լուսավորչից մինչև Գրիգոր Վկայասեր և Բարսեղ Անեցի (Ներսեսի Շնորհալույ Հայոց կաթողիկոսի թուղթը, Վենետիկ, 1873, էջ 8):

կապված Պահլավունիներին: Հայրական կողմի մոռացության մատնումը կարող էր բացատրվել հենց այդ հանգամանքով: Չի կարելի բացառել նաև ներընտանեկան ինչ-ինչ գծությունները: Հնարավոր է, որ հետնորդների կողմից մոռացության մատնված Այլջահապը բավական վաղ է մահացել⁶¹: Նման ենթադրության օգտին է խոսում այն, որ նրա եղբայր Վասակն իր ամենակրտսեր որդուն (դատելով Ուռհայեցու թվարկումից) կոչել է Այլջահապ, գուցե ի հիշատակ մահացած եղբոր: Հնարավոր է, որ Այլջահապի զավակները մանուկ հասակից մնացել են մայրական պապի՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու խնամքին: Մասնավորապես նաև այդ իմաստը կարելի է տեսնել Ներսես Շնորհալու խոսքերում, որը Գրիգոր Մագիստրոս Պահլավունու՝ իր հոր՝ Ապիրատի նկատմամբ վերաբերմունքը բնութագրում է «**Հօրն մերոյ նա հայր եղեալ, ըստ մայրականն մեջնորդեալ**»⁶² բառերով: Այսինքն, մայրական պապն է, որ հայրություն է արել իր հորը:

Հատկանշական է, որ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու որդին՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը, նույնպես շատ կապված է եղել հատկապես իր այս քրոջ ընտանիքի ու նրա չորս զավակների հետ: Հենց նրա ցուցումով Բարսեղ Ա Անեցին (Վասակի որդին, որին, իմիջայլոց, Ներսես Շնորհալին կոչում է իր «արենառուն», այսինքն արյունակիցը)⁶³, 1113 թ. իրենից հետո կաթողիկոսական գահը փոխանցեց Ապիրատի որդի Գրիգորին, որն այդ

⁶¹ Եթե ենթադրենք, որ Գրիգոր Բջնեցու դստեր ամուսինը Այլջահապը չէր, ինչն ակնարկում է Վ. Վարդանյանը («Ծովքի Պահլավունիները դարաշրջանի որոգայթներում», ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, թիվ 8, Երևան, 2007, էջ 47-48), այլ մեկ ուրիշը, միևնույն է, նրա անունը, փաստորեն, իր սերունդները մոռացության են մատնել, որի ստույգ պատճառն անհայտ է:

⁶² Ներսեսի Շնորհալույ Բանք չափաւ, էջ 587-588:

⁶³ Ներսեսի Շնորհալույ Հայոց կաթողիկոսի թուղթը, էջ 8:

ժամանակ գրեթե պատանի էր⁶⁴, ու այդ պատճառով այժմոյն մնաց կես դարից ավելի (53 տարի):

Գրիգոր Գ-ից սկսած (որն ի տարբերություն սովորաբար ծննդավայրի անունով մականվանվող մյուս կաթողիկոսների կոչվում է տոհմաբանական Պահլավունի մականունով), այս տոհմի ներկայացուցիչները հայրապետական այժոռն իրենց ձեռքում պահեցին 90 տարի, մինչև Գրիգոր Չ Ապիրատ (1194-1203): Նրանք իրենց համարում էին Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմակիցներ՝ Պահլավունիներ և բազմում կաթողիկոսական այժոռն տոհմական ժառանգականության «հիմնավորմամբ»⁶⁵:

Այսպիսով, 11-րդ դարի արշալույսին Բագրատունյաց թագավորության ազնվականության մեջ հանդես է եկել Հասանի որդի


⁶⁴ Մատթեոս Ուռհայեցին 1113 թ. Գրիգոր Գ-ի օծման մասին գրելիս շեշտում է նրա վաղ տարիքը, միաժամանակ նշելով, որ նա Վասակ Պահլավունու որդի Գրիգոր Մագիստրոսի տոհմից էր. «Յայսմ ամի նստաւ յայժոռ հայրապետութեանն Տանն Հայոց տէր Գրիգորիս որդի Ապիրատին, որ էր յազգէ Գրիգորոյ Մագիստրոսին՝ որդւոյ Վասակայ Պալիաւունւոյ, վասն զի զկնի մահուանն Տեառն Բարսեղի եղև ժողով եպիսկոպոսաց եւ հարանց ի Կարմիր վանքն՝ մերձ ի Քեստուն գաւառ՝ եւ... ի նմին աւուր տան զձեռնադրութիւն կաթողիկոսութեանն ի վերայ այժոռոյ սրբոյն Գրիգորի, եւ նստաւ ի հայրապետական այժոռն մինչ էր ի տղայութեան հասակին, վասն զի չէւ եւս էր լեալ սկիզբն մօրուացն» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 360-361):

⁶⁵ Հաջորդաբար կաթողիկոս դարձան իշխան Ապիրատի որդի Գրիգոր Գ Պահլավունին՝ 1113-1166 թթ. և նրա եղբայր Ներսես Դ Կոլայեցին (Շնորհալի)՝ 1166-1173 թթ., ապա նրանց Վասիլ եղբոր որդին՝ Գրիգոր Դ Տղան (1173-1193): Նույն Վասիլի դստեր որդին էր Գրիգոր Ե Քարավեժ (1194) կաթողիկոսը, իսկ Չորավար եղբոր որդին էր Գրիգոր Չ Ապիրատը (1194-1203): Չորավարի դստեր՝ Շահանդուխտի և իշխան Օշինի որդին էր Կիլիկիայի հայտնի եկեղեցական գործիչ Ներսես Լամբրոնացին (1153-1198): Նրա եղբայրներից մեկը Ապիրատ անունն էր կրում: Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի տոհմի մասին այլ մանրամասներ տե՛ս Կ. Մաթևոսյան, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը և նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», թիվ 18, Երևան, 2008, էջ 67-93, նույնի, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 101-137:

Գրիգոր Ապիրատը, որպես մեծ իշխան, որը 1001 թվականից հիշատակվում է մագիստրոս տիտղոսով, կառուցել է Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցին և հիմնել է ջրանցք Երևանում: Սպանվել է 1021 թ., որից հետո Հովհաննես Մմբատ թագավորի հովանավորությունը ստացած նրա որդիները, խնամիական կապ ստեղծելով Պաիվավունիների հետ, ապահովել են տոհմի երկարատև գործունեությունը և առաջնակարգ դերը 11-12-րդ դդ. հայ իրականության մեջ:

Վերջում ներկայացնում ենք Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի (Հասանյանների) տոհմաժառը, մասամբ լրացնելով նախկինում Ներսես Ալիկյանաի կազմածը⁶⁶:

⁶⁶ Ն. Ալիկյան, Ներսես Լամբրոնացի, ներդիր 402-403 էջերի միջև, մանրամասները տե՛ս Կ. Մաթևոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 136:



ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՈՐԴԻ ՎԱՍԱԿԻ
(ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ
ԱՆՑՈՒՄԸ ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԻՆ)

Գրիգոր որդի Վասակա, Գրիգոր իշխանաց իշխան, Գրիգոր Բջնեցի, Գրիգոր Պահլավունի, «Վասպուրականի եւ Տարաւոյ եւ Մանազկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր եւ Մաւնումախին մագիստրոս, վեստ եւ տուկ», «Արշակունի Գրիգոր Մագիստրոս, սենեկապետ, Վասպուրականի և Տարոնի դուքս». հիմնականում այս և նման անուններով է հայտնի հայ միջնադարի աշխարհական ամենափայլուն դեմքերից մէկը՝ Գրիգոր Մագիստրոսը, ոչ միայն որպէս իշխան՝ քաղաքական-ռազմական գործիչ, այլև աստվածաբան-փիլիսոփա, ուսուցիչ, գրող, թարգմանիչ, բազմակողմանի զարգացած անհատ, ուստի պատահական չէ, որ արժանացել է մեծ թվով ուսումնասիրողների ուշադրությանը⁶⁷: Հայ միջնադարյան գործիչների շարքում, որոնց կենսագրության մասին հիմնական աղբյուրը պատմագրական երկերը, վիմագրական արձանագ-

⁶⁷ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու և նրա գրավոր ժառանգության մասին մեծաքանակ գրականություն կա, ուստի թվարկում ենք միայն այն աշխատությունները, որտեղ քննվում են նաև նրա կենսագրության հարցերը: Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 8-14, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն յառաջարանով եւ ծանօթագրութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեաց Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապոլ, 1910, էջ Թ-ԼԳ, Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 329-372, Ս. Արևշատյան, Գրիգոր Մագիստրոս, Հայ մշակույթի նշանավոր գործիչներ, V-XVIII դարեր, Երևան, 1976, Լ. Խաչերեան, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս, էջ 19-146, Ս. Մխիթարյան, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Երևան, 2001, Վ. Վարդանյան, Պահլավունիները Հայոց պետականության..., էջ 55-90, Գրիգոր Մագիստրոսի մատենագրությունը (Գ. Մուրադյան), Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, Երևան, 2012, էջ 85-139 (այսուհետև՝ Մատենագիրք Հայոց, ԺԶ) և այլն:

րություններն ու ձեռագրերի հիշատակարաններն են, Գրիգորը միակն է, որն ունի նաև մեր օրերը հասած հարուստ նամականի (թղթեր), որոնց միջոցով բացահայտվում են ոչ միայն նրա կենսագրության առանձին մանրամասները, այլև անձնական հատկանիշները, այլոց հետ ունեցած հարաբերությունները, տարբեր հարցերի նկատմամբ որդեգրած մոտեցումները և այլն:

Ուսումնասիրողները սովորաբար նախ ներկայացնում են Գրիգոր Մագիստրոսի տոհմական ծագումը⁶⁸: Պահլավունիների մասին գրող առաջին հեղինակները հիմնականում հենց այս տոհմից սերողներն են, մասնավորապես նաև Գրիգորն ինքը, որը, միակը լինելով, առաջին անգամ հիշատակում է իր Գրիգոր պապի պապ Արտակ Կամսարյանին⁶⁹: Սույն տեղեկությամբ էլ հետագա ուսումնասիրողներն այս նոր Պահլավունիներին կապում են Կամսարականների հետ, որոնք էլ իրենց հերթին ազգակցություն են ունեցել Արշակունիների ու Գրիգոր Լուսավորչի տոհմի հետ:

Գրիգորի ծննդյան և մահվան թվականներն աղբյուրներում ստույգ չեն վկայված և գրականության մեջ նշվում են ենթադրաբար, առավել տարածված են՝ 990-1058 թթ.: Նրա ստացած կրթության մասին ևս փաստեր չկան, համարվում է, որ ուսանել է Անիում և Կոստանդնուպոլսում, քանի որ դատելով պատմիչների վկայություններից և հենց իր գործերից ու նամակներից՝ փայլուն կրթություն էր ստացել ու գիտելիքների ահռելի պաշար ուներ (քաջաձանոթ էր հունական, պարսկական առասպելներին և այլն):

⁶⁸ Այդպես են վարվել Կ. Կոստանյանցը, Ն. Ալիևյանը, Լ. Խաչերյանը, Վ. Վարդանյանը, Ս. Մխիթարյանը, Գ. Մուրադյանը և ուրիշներ: Տոհմաբանության հարցն առավել ամբողջական և սկզբնաղբյուրներով հիմնավորված է ներկայացված Կ. Կոստանյանցի և Ն. Ալիևյանի գրքերում:

⁶⁹ Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 259: Պահլավունիների տոհմաձառը տե՛ս Claude Mutafian, L'Arménie du Levant (XI-XIV siècle), Tome II, Paris, 2012, n. 11:

Բազմաբնույթ է իշխանի գործունեությունը և հարուստ՝ գրավոր ժառանգությունը, որի առանձին բնագավառներ հանգամանորեն հետազոտել և բարձր են գնահատել տարբեր ուսումնասիրողներ: Բավարարվենք միայն մեկ մեջբերմամբ. արվեստագիտության դոկտոր Աննա Արևշատյանը նորերս լույս տեսած ուսումնասիրության մեջ գրում է. «Գրիգոր Մագիստրոս գիտնականի և արվեստագետի ֆենոմանը եզակի է ոչ միայն հայ իրականության, այլ նաև Մերձավոր Արևելքի և Արևմտյան Եվրոպայի միջնադարյան մշակույթների X–XI դարերի պատմության մեջ»⁷⁰:

Նախորդ ուսումնասիրողների հետազոտական դիտանկյունները չկրկնելով՝ մենք ստորև կներկայացնենք Գրիգոր Մագիստրոսի գործունեության հետ անմիջականորեն կապված Հայոց եկեղեցու պատմության այն դրվագը, երբ կաթողիկոսական աթոռն անցավ Պահլավունիների տոհմին, որի առաջին գահակալը հենց Գրիգորի որդին էր՝ Վահրամը, որ ձեռնադրության ժամանակ ստացավ Գրիգոր անունը, իսկ ավելի ուշ՝ Վկայասեր մականունը (1066-1105): Նրա աթոռակալությամբ Հայոց կաթողիկոսների հաջորդականության մեջ տեղի ունեցավ մի էական փոփոխություն. կաթողիկոսական աթոռը համարվեց տոհմական, և Պահլավունիները (Վկայասերից հետո՝ մայրական գծով), ովքեր ներկայանում էին իբրև Հայոց առաջին հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմակիցներ, սկսեցին ժառանգականության սկզբունքով բազմել կաթողիկոսական գահին, և այդ երևույթը շարունակվեց շուրջ մեկ ու կես դար:

Բայց այդ գործընթացն իր նախապատմությունն է ունեցել՝

⁷⁰ Ա. Արևշատյան, Գրիգոր Մագիստրոսը շարականագիր և գեղագետ, Երևան, 2015, էջ 11-12:

սկսելով դեռևս 11-րդ դարի 20-40-ական թվականներին, երբ Անիի թագավորության մեջ կարևոր դիրքի հասած Պահլավունյաց իշխանական տոհմի ներկայացուցիչները նպատակադրված շարժում են սկսել կաթողիկոսական աթոռին տիրելու համար: Կարելի է ասել, որ այն մի ուշագրավ հեռագնա ծրագիր էր՝ որոշակի դրդապատճառներով ու հիմնավորումներով: Ուղղակի և անուղղակի փաստերը ցույց են տալիս, որ այդ գործի հիմքը դրեցին Անիի թագավորության ազդեցիկ գործիչներ սպարապետ Վահրամ Պահլավունին և նրա եղբայր Աբդարիբ մարզպանը, իսկ բուն ծրագրի հեղինակն ու կյանքի կոչողը վերջիններիս եղբորորդի Գրիգոր Մագիստրոս Պահլավունին էր:

Կաթողիկոսական աթոռի՝ Պահլավունիներին անցման խնդրի ուսումնասիրությունը թույլ է տալիս նաև հետևելու Գրիգոր իշխանի գործունեությանը՝ Բջնիում հոր իշխանությունը ժառանգելուց սկսած մինչև Գագիկ Բ թագավորի հետ գժտությունը, մագիստրոսության տիտղոսին արժանանալը և այլն:

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Քննվող ժամանակաշրջանում Հայոց թե՛ պետության, և թե՛ եկեղեցու կյանքում տեղի էին ունենում աննախադեպ իրադարձություններ: Նախ՝ Գագիկ Ա-ի (989-1017) մահից հետո նրա որդիներ՝ ավագության կարգով գահը ժառանգած, պատմիչ Արիստակես Լաստիվերցու բնորոշմամբ՝ «մարմնով հաստի և յոյժ թանձր», բայց խելացի Հովհաննես Սմբատի և «քաջասիրտ» Աշոտի մեջ ժառանգության հարցում հակառակություն է ծագում («Մոքա ընդ միմեանս անկեալք հակառակութեամբ վասն

բաժնից երկրին՝ կարօտացան իրաւանց և դատաստանի»⁷¹: Առաջին անգամ, հավանաբար հենց 1017 թ., որպէս եղբայրների հաշտեցման միջնորդ հանդես է գալիս Վրաց Գեորգի Ա (1014-1027) թագավորը: Որոշվում է Հովհաննես Սմբատին ավագութեան համար տալ Անին և նրա շրջակա գավառները, իսկ Աշոտին՝ «զներքին կողմն աշխարհին, որ հայի ի վերայ Պարսից և Վրաց»⁷²: Բանակցության ավարտից հետո, երբ Հովհաննես Սմբատը Անի էր ճանապարհվել, Աշոտի իշխաններից մեկը Գեորգիին բողոքում է, որ Հովհաննես Սմբատը զավթել է իրեն պատկանող Շատիկ բերդը: Գեորգին զայրանալով ուղարկում է իր զինվորներին, որոնք իջևանատանը բռնում ու իրենց թագավորի մոտ են բերում Հովհաննես Սմբատին, նրան ուղեկցողներին էլ հալածում են, քշում մինչև Անի: Գեորգին Հովհաննես Սմբատին փակի տակ է պահում, ապա նրանից երեք բերդ առնելով՝ բաց թողնում:

Ըստ նույն պատմիչի՝ Աշոտը, որն իր բաժին տարածքներին ամբողջովին տիրելու խնդիր ուներ, ուղևորվում է Կոստանդնուպոլիս, արժանանում կայսեր բարեհաճությանը, նրանից օգնական զորք ստանում և վերադառնալով՝ տիրում իր գավառներին ու բերդերին և մեծապէս զորանում: Հավանաբար, հենց բյուզանդացիների դրդամբ Աշոտը 1021 թ. սկզբներին երկրորդ անգամ է փորձում տիրանալ Անիին:

Սակայն մինչ այդ Անիում նախադեպը չունեցող մի իրադարձություն էր տեղի ունեցել. 1019 թ. Հայոց կաթողիկոս Սարգիս Ա Սևանցու (990-1019) կենդանության օրոք, հենց նրա ձեռքով, կաթողիկոսական ձեռնադրություն էր ստացել Պետրոս Ա-ը (հետագայում Գետադարձ մականվանված): Ինչպէս ցույց են տալիս հետագա դեպքերը, կաթողիկոսների ավանդական հաջոր-

⁷¹ Արիստակես Լաստիվերցի, էջ 27:

⁷² Նույն տեղում:

դականության ընդունված կարգը (երբ կաթողիկոս էր ընտրվում միայն նախորդի մահից հետո) խախտվել էր Հովհաննես Սմբատի ցանկությամբ, որին ձեռնադրել էր ծերացած ու երկրի գործերից մի կողմ քաշված Սարգիս կաթողիկոսի աթոռակալությունը, որը չէր կարողացել (կամ չէր ցանկացել) միջնորդ ու հաշտարար դառնալ թշնամացած եղբայրների միջև⁷³։ Թերևս այդ պատճառով էլ գործին միջամտել էր Վրաց թագավորը, որն, ինչպես տեսանք, նվաստացուցիչ կերպով էր վարվել Հովհաննես Սմբատի հետ։

Կաթողիկոսական աթոռին կոչելով գործունյա Պետրոսին, որը ծագում էր «ի գաւառէն Ծիրակայ, յազատ տանէ...», ի մեծաց եւ պատւաւորաց ի Կամրջաձորոյ, որ է ի յերկիրն Անույ...»⁷⁴, Հովհաննես Սմբատն ակնկալել է վստահելի միջնորդ հաշտարար ունենալ Աշոտի նոր ընդվզման ժամանակ։ Նրա այդ սպասումն իրականացավ շատ շուտով, երբ Աշոտն, իր դիրքերն ամրապնդելով, մի մեծ գործի գլուխ անցած, մոտեցավ Անիի պարիսպներին։ Պատմիչ Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ տեղի ունեցած ճակատամարտում անեցիները ծանր պարտություն ու կորուստներ կրեցին, և այդ ժամանակ հաշտարար առաքելությամբ հանդես եկավ Պետրոս կաթողիկոսը. «Հայրապետն Պետրոս եւ իշխանքն ամենայն ելին առ զԱշոտ եւ մեծաւ երդմամբ նստուցին զԱշոտ Դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն Տանն Հայոց, եւ Յովհաննէս նստցի թագաւոր ի քաղաքն Անի. եւ եթէ մեռցի Յովհաննէս, Աշոտ լիցի թագաւոր ամենայն Տանն Հայոց»⁷⁵։

⁷³ Կ. Մաթևոսյան, Անի-Ծիրակի պատմության էջեր, էջ 25-27։ Սարգիս կաթողիկոսը քաշվել է Անիի մերձակա Հոռոմոսի վանք, որտեղ մահացել է 1022 թ.։

⁷⁴ Նախկինում հայագետներին ծանոթ չի եղել այս տեղեկությունը, որը պահպանվել է 1404 թ. մի Ճառընտիրում (Մատենադարան, ձեռ. թիվ 1520, թերթ 30բ)։

⁷⁵ Մատթեոս Ուռհայեցի, էջ 14։

Ինչպես տեսնում ենք, այս նոր հաշտության արդյունքում Աշոտի ռազմական հաղթանակը նրա համար ապահովել է թագավորական տիտղոս և Հովհաննես Սմբատի մահից հետո Անիում գահակալելու իրավունք⁷⁶:

Այս շրջանում բյուզանդացիները, ծրագրված կերպով ինքնուրույնությունից զրկելով և զավթելով հայկական իշխանություններն ու թագավորությունները (Տարոն, Տայք, Վասպուրական), հերթական թիրախ են դարձնում Անին: 1021 թ. Վասիլ Բ (976-1025) կայսրը արշավանք է սկսում ըմբոստացած Վրաց Գեորգի Ա թագավորի դեմ, ավերածություններ գործում Տայքում և հարակից տարածքներում, ապա ձմեռելու համար գնում Սև ծովի ափ՝ Տրապիզոն: Հովհաննես Սկիլիցեսը գրում է, որ Հովհաննես Սմբատը զինակցություն էր ցուցաբերել Վրաց թագավորին⁷⁷ (հայկական աղբյուրները նման տեղեկություն չունեն), որի պատճառով կայսրը նրանից պահանջում է Անին: Պետրոս կաթողիկոսը մեկ տարվա մեջ արդեն երկրորդ անգամ դառնում էր Հովհաննես Սմբատի բանագնացը: Տրապիզոնում կայսեր հետ Պետրոսի հանդիպման մասին Արիստակես Լաստիվերցին գրում է. «Յովհաննես պատուէր տուեալ էր հայրապետին, եթէ գրէ գիր և տուր կտակ թագաւորին զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և գերկիրս նմա տաց ի ժառանգութիւն»⁷⁸:

Թեև Հովհաննես Սմբատի կտակի պատասխանատուն թագավորն ինքն էր, բայց, ինչպես երևում է, նրա և կաթողիկոսի միջև այդ շրջանից սկսած հակասություններ են ծագում: Թերևս

⁷⁶ Չարմանալի է, որ Հովհաննես Սմբատի և Աշոտի ընդհարման ու հաշտեցման այս երկու միանգամայն տարբեր դեպքերը (որոնք տարբերվում են ընթացքով, հաշտեցման միջնորդներով և դրանից հետո կողմերից յուրաքանչյուրի ստացածով) «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության մեջ ներկայացվում են որպես մեկ դեպք: Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 144, Հայոց պատմություն, հ. II, գիրք երկրորդ, Երևան, 2014, էջ 158:

⁷⁷ Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 146-147:

⁷⁸ Արիստակես Լաստիվերցի, էջ 32:

դրան նպաստում է նաև Պետրոսի վարքը, որի մասին Արիստակես Լաստիվերցին գրում է. «յոժ գանձուց սիրոյ էր Պետրոս, որ և բազումք վասն այնր եպերէին գնա»⁷⁹:

1033 թ.՝ Քրիստոսի խաչելության 1000-ամյակին, տեղի է ունենում արևի խավարում⁸⁰, որը մեծ տպավորություն է թողնում ժամանակակիցների վրա: Թագավորն ու կաթողիկոսն Անիից հատուկ պատվիրակություն են ուղարկում Սևանի վանք՝ Հովհաննես Կոզեռն վարդապետի մոտ՝ կատարվածի մեկնաբանությունն իմանալու համար: Վերջինս կանխատեսում է մոտալուտ բազում դժբախտություններ, որպես հետևանք բարքերի համընդհանուր անկման ու անբարեպաշտության՝ քննադատելով անգամ եկեղեցու առաջնորդին⁸¹: Նույն թվականին Պետրոս կաթողիկոսն ընդհարվելով Հովհաննես Սմբատի հետ, ծածուկ թողնում է Անիի իր աթոռը և տեղափոխվում կայսրության տիրապետության տակ անցած Վասպուրականի Ձորավանք՝ այստեղ մնալով ավելի քան երեք տարի: Այն փաստը, որ Պետրոսը Հովհաննես Սմբատից կամ անեցիներից դժգոհելով չի գնում Աշոտ Դ-ի կամ հայ մյուս գահակալների մոտ, այլ ապավինում է կայսերական կուսակալին, վկայում է հակամարտության բավական լուրջ պատճառների մասին:

Թագավորի ու ավագանու պահանջով և Վասպուրականի բյուզանդական կուսակալի միջամտությամբ 1036 թ. Պետրոսը վերադառնում է Անի, բայց քաղաք գալուց հետո, կարճ ժամանակ անց, թագավորի հրամանով ձերբակալվում ու արգելափակվում է Բջնիում: Նույն տարվա վերջերին մայրաքաղաքում գումարվում է եկեղեցական ժողով, որը Պետրոսին համարում է

⁷⁹ Նույն տեղում, էջ 82:

⁸⁰ Արևի խավարումը եղել է հունիսի 29-ին: Տե՛ս Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1968, էջ 138-139:

⁸¹ «...Յայսմ հետէ բազում հերձուածք մտանեն յեկեղեցի Աստուծոյ ի ծուլութենէ հայրապետաց, վասն զի թուլամորթին և տկարանան և - հաւատոյ քննութիւն ոչ առնեն և կան յիմարեալք: Յաղագս արծաթոյն թողուն ի բաց գիւաւսն...» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 78):

աթոռանկ և կաթողիկոս է ձեռնադրում Սանահինի վանքի առաջնորդ Դեոսկորոսին: Նման որոշման կայացման համար Պետրոսի դեմ արված մեղադրանքները պետք է որ շատ զորավոր եղած լինեն (թեև ստույգ հայտնի չէ, թե որոնք էին դրանք), քայց վճռորոշ էր նաև Հովհաննես Սմբատի դիրքորոշումը:

Դեոսկորոսը, որի մասին պատմիչները հիմնականում դրվատանքով են խոսում, Անիում նոր եպիսկոպոսներ է ձեռնադրում, առաջ քաշում Պետրոսի կողմից մերժվածներին: Սակայն հայ ավանդապահ հոգևորականությունը ըմբոստանում է Անիում կայացված որոշման դեմ⁸²: Արքունիքը ստիպված է լինում տեղի տալ. մեկ տարի և երկու ամիս գահակալելուց հետո Դեոսկորոսն աթոռանկ է արվում, վերադարձվում Սանահին, և կաթողիկոսական աթոռին 1038 թ. վերջերին վերահաստատվում է Պետրոսը:

Այսպիսով, Պետրոս Ա-ի աթոռակալությունը սկսվեց կաթողիկոսների հաջորդականության ավանդական կարգի խախտմամբ, քաղաքական լարված պայմաններում, այնուհետև ընթացավ նրա նկատմամբ եղած հասարակական դժգոհության մթնոլորտում, թագավորի հետ առաջացած տարաձայնությունների պայմաններում, որոնք անգամ հանգեցրին ժամանակավոր աթոռանկության:

ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԻ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետրոս Ա-ի ժամանակ Պահլավունյաց տոհմը ծանրակշիռ ներկայություն ուներ Անիի արքունիքում: 10-րդ դարում ապրած Աբուղամրի անունով Անիում հաճախ «Աբուղամրենց» են կոչել

⁸² Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Եպիսկոպոսքն և վարդապետքն Հայոց աշխարհին՝ նզովիւք փակեցին զթագաւորն և զամենայն նախարարսն Հայոց՝ վասն հակառակութեանն, որ եղև ի մէջ եկեղեցւոյ» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 86):

տոհմի ներկայացուցիչներին, ինչպես, օրինակ, նրա որդի Գրիգորի՝ Անիում կառուցած եկեղեցին դեռ միջնադարում հիշատակվում է Աբուղամբենց Ս. Գրիգոր անունով⁸³։ Աբուղամբի որդի Գրիգորի երեք զավակներից սկսվում է արդեն զորացած տոհմի ճյուղավորումը՝ Վահրամ, Վասակ, Աբլղարիք⁸⁴։ Նրանք բոլորն էլ բարձր դիրք էին զբաղում Անիի թագավորության մեջ՝ Վահրամը իշխանաց իշխան էր, հետագայում դարձավ սպարապետ, Վասակը նույնպես հիշատակվում է որպես իշխանաց իշխան, Աբլղարիքը՝ մարզպան։ Այս երեք գործիչներն էլ ապրել են Պետրոս Ա-ի աթոռակալության շրջանում, միայն Վասակը 1021 թ. երկիր ներխուժած ասպատակիչների դեմ կռվից հետո թյուրիմացաբար սպանվում է հայ գյուղացիների ձեռքով (որոնք նրան ասպատակիչներից մեկի տեղն էին դրել), և նրա իշխանությունն անցնում է որդուն՝ Գրիգոր Բջնեցուն, որը 1045 թ. քյուզանդացիներից մագիստրոսության պատվաստիճան ստացավ և առավելապես հայտնի է Գրիգոր Մագիստրոս անունով։

Այս երեք գործիչներն էլ, բնականաբար, որոշակի հարաբերությունների մեջ են եղել կաթողիկոսի հետ, որոնց մասին պատմիչների երկերում վկայություններ չեն պահպանվել։ Այնուամենայնիվ, հայ պատմագրության մեջ ընդունված տեսա-

⁸³ Բագնայրի 13-րդ դարի արձանագրություններից մեկում նվիրատուն նշում է, որ վանքին նվիրած իր զանազան տուներն Անիում գտնվում էր «մաւո ի յԱպուղամբենց Սուրբ Գրիգոր» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 181)։

⁸⁴ Բացի նշվածներից Գրիգորի զավակներից վաղ հասակում մահացել են Համգեն և Սեդան։ Աբլղարիքին հայրը չի տեսել, քանի որ ծնվել է հոր մահից հետո, դրա համար արձանագրություններից մեկում նա գրում է. «թէպէտ եւ անտես էի ի հաւրէ իմէ յաղագս կրսերութեան» (Դիվան հայ վիմագրության, պր. Ա, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 33, այսուհետև՝ Դիվան, Ա)։ Գրիգորը երկանուն ուներ՝ Գրիգոր Համգէ։ Նա, ըստ Գրիգոր Մագիստրոսի, մահացել է 40 տարեկանում, երբ նրա կինը (Շուշանը) 30 տարեկան էր (Մատենագիրք Հայոց, ԺԶ, էջ 261)։

կետ է, որ Բագրատունյաց թագավորության խորը ճգնաժամի շրջանում՝ 1041-1045 թթ., առանձնապես լարված են եղել Վահրամ Պահլավունու և Պետրոս կաթողիկոսի հարաբերությունները: Նրանցից առաջինն ավանդաբար համարվում է «հայրենասեր» խմբակցության պարագլուխ, երկրորդը՝ Վեստ Սարգսի հետ՝ «բյուզանդասեր» խմբակցության⁸⁵: 1020-30-ական թվականների վիճաբերը թույլ են տալիս որոշ ենթադրություններ անել Պահլավունի հիշյալ գործիչների և Պետրոս կաթողիկոսի հարաբերությունների վերաբերյալ:

Առաջինը Վահրամ Պահլավունու՝ Ամբերդի 1026 թ. արձանագրությունն է, որը վերաբերում է տեղի Կաթողիկե եկեղեցու կառուցմանը, բայց նաև ավելի հանգամանալից նշվում է այստեղ եկեղեցական վարչատարածքային միավոր ստեղծելու և նրա մեջ ներառված Նիզ և Արագածոտն գավառների ու Քաղաքադաշտի (Վաղարշապատ) բնակավայրերից այդ աթոռի օգտին գանձվող հարկերի մասին: Հայագետների ավագ սերունդներին հիմնականում անձանոթ է մնացել այս ուշագրավ արձանագրությունը, որի սկիզբը հետևյալն է. «Ամին ՆՀԵ (1026) **ես՝ իշխանս Վարհամ շինեցի զկաթողիկես, աթոռ հարապետական** եւ սահմանեցի պտուղ Նիզի տունն ք (2) կապին ց(ո)ր(եան), յԱրագածոտնէ՝ յեզին ք (2) փաս գի(նի) ի Քաղաքոդաշտի բաբակն՝ Ժ (10) լիտր...»⁸⁶:

Արձանագրության հրատարակիչներն անդրադարձել են այս վիճաբերի տեղեկությունների՝ տվյալ ժամանակի եկեղեցական ու

⁸⁵ Լեո, Անի, էջ 325, Թ. Հակոբյան, Անիի պատմություն, զիրք առաջին, Երևան, 1980, էջ 351, Վ. Վարդանյան, Պահլավունիները Հայոց պետականության..., էջ 41 և այլն:

⁸⁶ Ե. Տեր-Մինասյան, Ամբերդաձորի արձանագրությունները, «Էջմիածին», 1961, Ե, էջ 50-51, Ս. Ավագյան, Վիճական արձանագրությունների բառարանություն, Երևան, 1978, էջ 17, Ս. Հարությունյան, Ամբերդ, Երևան, 1978, էջ 55: Առավել հստակ վերծանությունը (գրչանկաբով) բերում է Սուրեն Ավագյանը (ընդգծումները մերն են – Կ. Մ.):

տնտեսական պատմության համար ունեցած կարևոր արժեքին⁸⁷: Մեզ, սակայն, ավելի շատ հետաքրքրում է այն հարցը, որ փաստորեն սույն արձանագրություն-հրամանագրով հիմնվում է եկեղեցական վարչատարածքային միավոր՝ ըստ վիմագրի՝ «այթոռ հայրապետական»⁸⁸, որը կարելի է նաև պայմանականորեն եպիսկոպոսություն անվանել՝ նկատի ունենալով նրա պատկառելի տարածքային ընդգրկումը: Իսկ որպես այն հիմնող հանդես է գալիս աշխարհական իշխանը, ընդ որում, արձանագրության մեջ չի նշվում անգամ ժամանակի կաթողիկոսի անունը:

Վահրամ Պահլավունու և Պետրոս կաթողիկոսի հարաբերությունների լարվածության մասին շատ ավելի խոսուն է Ամբերդի եկեղեցու կառուցումից ընդամենը երեք տարի անց՝ 1029 թ. Մարմաշենում գրված ընդարձակ շինարարական արձանագրությունը, որի սկիզբը հետևյալն է. «Շնորհիւն Ա(ստուծոյ) եւ **Վահրամ իշխանաց իշխան եւ անթիպատ պատրիկ, որդի Գրիգորի իշխանի Հայոց Մեծաց, ի ցեղէ Պահլաւունի եւ ի գարմից Սրբոյն Գրիգորի, Հայոց լուսաւորչի,** որ յաղագս ի Քրիստոս յուսոյն հիմնադրեցի գտուրք եւ գոիեգերական ուխտս Մարմաշէն, սկսեալ ի ՆԼԵ (988) թուականին Հայոց... մինչեւ ի ժամանակս Յովանիսի, որդւոյ Գագկա Հայոց շահանշահի՝ առն իմաստնոյ, շինողի եւ խաղաղարարի, եւ ի թուականիս հայոց ՆՀԸ (1029): Եւ կատարեցաք մեծ ջանիւ եւ բազում ծախիւք, եւ եւ մայր իմ՝ Շուշիկ, Հայոց տիկնաց տիկին, եւ եղբարք իմ՝ Վասակ իշխանաց իշխան, որ նահատակեցաւ ի թուրքաց պատերազմի, եւ Արլխարիբ Հայոց մարգպան...: Ծինեցաք եւ այլ բա-

⁸⁷ Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 18, Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 55:

⁸⁸ Բնագրում «հարապետական»: Ըստ Ս. Ավագյանի՝ «Հավանաբար այստեղ նշված **հայրապետական այթոռը** պետք է հասկանալ իբրև **եպիսկոպոսական այթոռ**, իսկ սահմանված հարկերն ու հոգևոր արարողությունների դիմաց հավաքվող տուրքերը իբրև այդ այթոռի օգտին զանձվող հասույթներ...» (Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 18):

գում եկեղեցիս եւ վանորայս, բայց զտեղի հանգստեանս մերոյ առաւել պատուով մեծացուցաք...»⁸⁹:

Այստեղ առաջին իսկ հայացքից ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ ի տարբերություն եկեղեցաշինական նմանատիպ հանդիսավոր արձանագրությունների, այստեղ բացակայում է կաթողիկոսի անունը: Վահրամը գովասանքներ է շապյում Հովհաննես Սմբատ թագավորի հասցեին՝ նրան կոչելով իմաստուն, շինարար և խաղաղարար, փառաբանական ոճով ներկայացնում իր տոհմն ու տոհմակիցների մեծ ավանդը, սեփական եկեղեցաշինական ձեռնարկները, իսկ Պետրոս կաթողիկոսի անունը, փաստորեն, մոռացության է տրվում:

Երկրորդ աչքի զարնող հանգամանքն այն է, որ Վահրամն իրեն անվանում է **«ի ցեղէ Պահլաւունի եւ ի զարմից Սրբոյն Գրիգորի՝ Հայոց լուսաւորչի...»**: Այսպիսի պնդումը տվյալ ժամանակի համար կարելի է պարզապէս արտառոց համարել, քանի որ տոհմական և ժառանգական իրավունքների առաջնահերթության այդ դարաշրջանում, այն պետք է ընկալվեր որպէս բացահայտ հավակնություն կաթողիկոսական աթոռի նկատմամբ: Հարկ է ընդգծել, որ 10-րդ դարում հանդես եկած այս տոհմը «Պահլավունի» անունով այստեղ նշվում է երկրորդ անգամ, բայց առաջին հիշատակումը նույնպէս պատկանում է Վահրամին և վկայված է նույն վանքում՝ 1015 թ. նրա կնոջ տապանաքարի արձանագրության մեջ⁹⁰:

⁸⁹ И. Орбели, Надписи Мармашена, Избранные труды, Ереван, 1963, с. 440-442: Արձանագրությունն ունեցել է բազմաթիվ հրատարակություններ, տե՛ս Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 148, Ս. Մաղումյան, Մարմաշենի վանքը, Ս. Էջմիածին, 1998, էջ 12 եւ այլն:

⁹⁰ «Այս է հանգիստ Սոփեա աղախնի Քրիստոսի, կնոջ Վահրամա Պալհաւունի իշխանաց իշխանի» (И. Орбели, նշվ. աշխ., էջ 445): Նախկինում համարվում էր, որ 1004 թ. իր Պատմությունն ավարտած Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն է առաջին անգամ օգտագործել Պահլավունի տոհմանունը Վահրամ իշխանի վերաբերմամբ, սակայն պարզվեց, որ տոհմանունը պարունակող փոքր հատվածը հետագայի հա-

Ամբերդի և Մարմաշենի արձանագրությունները ենթադրել են տալիս, որ Վահրամ Պահլավունու և Պետրոս կաթողիկոսի միջև լուրջ հակասություն է եղել: Թեև պատմիչներն այդ մասին լռում են, սակայն դարձյալ վիճաբանական նյութի շնորհիվ կարող ենք տեսնել այս հակադրության մասնակի մեղմացումը: Պետք է ենթադրել, որ Պետրոսը բավականին անհարմար, որոշ իմաստով մեկուսացած կացության մեջ է հայտնվել, ուստի պիտի փորձեր շտկել իրավիճակը: Ինչպես երևում է, նա գտել է Ամբերդի աթոռի հարցի լուծման փոխզիջումային տարբերակ: Այս մասին կարելի է դատել Բջնիի 1031 թ. արձանագրությունից, որը վերաբերում է տեղի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցմանն ու նաև կաթողիկոսական ու թագավորական հատուկ հրամանագրով՝ Բջնիի եպիսկոպոսության հիմնադրմանը: Ինչպես հայտնի է, Բջնին Վահրամ Պահլավունու եղբոր՝ 1021-ին սպանված Վասակի նստոցն էր, որն անցել էր նրա որդուն՝ Գրիգորին (Մազիստրոս): Հոր մահվան 10-ամյա տարեկիցին Գրիգորն ավարտում է Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը, որի օծման ժամանակ տեղի է ունենում նաև նորահաստատ եպիսկոպոսական աթոռի հռչակումը:

Արձանագրության սկզբում ասվում է. «Թ(ուականիս) ՆԶ: (1031) շնորհիւն Ա(ստուծոյ) այս հրամանք է իմ տ(ե)ր Պետրոսի Հայոց կաթողիկոսի, եւ Սմբատա շահանշահի, որ հասլտատեցաք զեպիսկ]ոպոսարան ի Բջնի քաղաք, զՍ(ուր)ր Ս(ստուա)ծածինս հիմնարկեալ կատարեաց Գրիգոր իշխանաց իշխան, որդի Վասակա, եւ տվան վիճակ ի Ս(ուր)ր Ա(ստուա)ծածինս ի Փոշէ-հանից մինչեւ ի Նիգ...»⁹¹: Այնուհետև նշվում են եկեղեցու

վելում է Ասողիկի Պատմության մեջ (տե՛ս Կ. Մաթևոսյան, Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն և կատարած հավելումները, «Էջմիածին», 2008, Զ-Է, էջ 102-112):

⁹¹ Դ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 273: Արձանագրության ճշտված տեքստը մեզ է տրամադրել Գագիկ Սարգսյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում:

տրված ընծաներն ու նորաստեղծ թեմի ընդարձակ սահմանները, որի հատվածը, ցավոք, թերի է պահպանվել, սակայն ընդհանուր պատկերը երևում է՝ **«հաստատեցաք արձանագրով եւ շրջաբերականաւ զսահմանահատ վիճակիս սորայ, որ է արեւելից ի Ծար գետո մինչեւ ի գետ Ախուրեան յԱնւո, ի հիւսիսսահնս՝ պետս խո...»**⁹²:

Այսպիսով, Բջնիի 1031 թ. արձանագրության մեջ թագավորի ու կաթողիկոսի անունից պաշտոնապես ստեղծվում է եպիսկոպոսական աթոռ, որին հատկացվում է Բջնիից ու Նիզ գավառից մինչև Ախուրյան գետն ընկած մի մեծ տարածք: Ուշագրավ է, որ այս նոր եպիսկոպոսության տարածքն իր մեջ ներառում էր Վահրամ Պահլավունու՝ 1026 թվականին Ամբերդի համար որպես թեմ սահմանված շրջանը: Կարծում ենք, որ այս քայլով կաթողիկոսը հնարամիտ լուծում է գտել, մի կողմից՝ չեզոքացնելով Վահրամ Պահլավունու ստեղծած Ամբերդի եկեղեցավարչական միավորը, մյուս կողմից՝ վերջինիս տարածքը ներառելով դարձյալ Պահլավունիներին (Գրիգոր Բջնեցուն) պատկանող ավելի մեծ միավոր՝ Բջնիի եպիսկոպոսության կազմում:

Այժմ ներկայացնենք վիմագրական տվյալներ, որոնք վերաբերում են կաթողիկոսի և Վահրամ Պահլավունու կրտսեր եղբայր **Աբղարիբի** (Ապղարիբ) առնչություններին: Վերջինս Հովհաննես Սմբատի արքունիքում մարզպանի պաշտոնն ուներ և թա-

⁹² Դեռևս Դ. Ալիշանը նշում է, որ վիմագրի եղծված մասերը «անստույգ» են թողնում թեմի սահմանները, սակայն՝ «որչափ երևի ի բանիդ՝ ձգիւր սահմանն ընդ երկայնն իբրև յարևելից ծովուն Գեղամայ ցԱխուրեան գետ և ի հիւսիսոյ՝ ի սահմանաց Գուգարաց մինչև ի հարաւկողմն ընիկ վիճակիս կամ գաւառիս Բջնոյ» (Դ. Ալիշան, Այրարատ, էջ 272): Նկատենք միայն, որ հյուսիս-արևելյան կողմի համար նշված Ծար գետի անունն ավելի որոշակի է դարձնում սահմանը, քանի որ այն սկիզբ է առնում Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջերից (Գոռգոչ գյուղից 0,5 կմ հյուսիս և միախառնվում Մարմարիկ գետին, երկարությունը կազմում է 10 կմ), այսինքն՝ այն չի հասնում Գեղամա ծովին:

գավորի հրամանով որպես բանագնաց 1035 թ. մեկնել էր Կոստանդնուպոլիս, որտեղ «մեծաձախ գանձի» ձեռք էր բերել Փրկչական խաչի մասունք և Անի գալով կառուցել Ս. Փրկիչ եկեղեցին: Այս մասին նա պատմում է եկեղեցու 1035 թ. արձանագրության մեջ, իսկ հաջորդ թվականին գրել է տալիս մեկ այլ՝ ավելի պաշտոնական ոճով արձանագրություն՝ այն սկսելով կաթողիկոսի անվամբ. «Յամի ա(սուած)ապատիւ եւ հոգեւոր տ(եառ)ն Պետրոսի եւ ի թագաւորութեան Սմբատա...»⁹³: Ուշադրության է արժանի նույն 1036 թվականին եկեղեցու պատին Պետրոս կաթողիկոսի թողած արձանագրությունը: Այն սկսվում է Հովհաննես Սմբատին նվիրված փառաբանական խոսքերով, այնուհետև կաթողիկոսի անունից ասվում է. «կամ եղեւ ինձ՝ տ(եառ)ն Պետրոսի Հայոց կաթողիկոսի, տալ գայգին Աշնակի, որ ի մեր կորոյս արկած էր, ք(րիստո)սասէր **մարգպանին Ապղարիպա, որդո Գրիգորո Պաիաւունո**»⁹⁴, վասն առաւել սիրոյն եւ երախտեացն, զոր ծառայեալ էր զՍուրբ Լուսաւորչի աթոռիս»⁹⁵:

Այստեղ առաջին հայացքից տարօրինակ է թվում, որ կաթողիկոսն Աշնակում իր տնկած այգին է նվիրում իշխանին, բայց

⁹³ Դիվան, Ա, էջ 44:

⁹⁴ Հրատարակության մեջ (Դիվան, Ա, էջ 48) տոհմանունը նշված է ՊԱՀԼԱԲՈՒՆՈ, մինչդեռ գծանկարից երևում է, որ վիմագրում գրված է ՊԱՀԼԱԲՈՒՆՈ: «Պաիաւունի» գրելաձևը հանդիպում է նաև այլ աղբյուրներում (տե՛ս Կ. Մաթևոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Երևան, 2009, էջ 62, 180, Սամուել Անեցի եւ շարունակողներ, էջ 113, 134, Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 139, 140, 487):

⁹⁵ Արձանագրության շարունակության մեջ նախ ուռնացված բնորոշումներով խոսվում է այգու մասին, իսկ հաջորդ նախադասությամբ անցում է կատարվում միանգամայն այլ թեմայի: Կաթողիկոսի խոսքերից պարզվում է, որ Աբղարիքը Ս. Փրկիչ եկեղեցու մոտ մի ապարանք է կառուցել («գապարանդ, զոր շինեալ է Ապղարիպա առ Սուրբ Փրկչիս»), և ահա Պետրոսը խստորեն պատվիրում է, որ այնտեղ բնակվողները, այսինքն՝ եկեղեցու սպասավորները, պահպանեն այն և Աբղարիքի եկեղեցուն կատարած նվիրատվությունները, հոգ տանելով եկեղեցու համար (Դիվան, Ա, էջ 48):

հետո ասվում է, որ իշխանն էլ իր հերթին այն նվիրում է նորակառույց եկեղեցուն: Սակայն առավել հետաքրքրական է, որ կաթողիկոսը Աբղարիբի հորը կոչում է Գրիգոր Պահլավունի: Ինչպես վերևում նշեցինք, Մարմաշենի 1015 և 1029 թթ. արձանագրություններից առաջ այս տոհմանունն աղբյուրներում չի հանդիպում: Անիի 1036 թ. կաթողիկոսական վիմագրում Պահլավունի տոհմանվան արձանագրումը, այն էլ ոչ Պահլավունու կողմից, որոշ իմաստով կարելի է դիտարկել որպես այդ անվան պաշտոնականացում, որը կաթողիկոսը թերևս կատարել է Աբղարիբի՝ կաթողիկոսական աթոռին մատուցած ծառայությունների դիմաց:

Ցավոք, հայտնի չէ Ս. Փրկչի արձանագրությունից առաջ, թե՛ հետո է գրվել Աբղարիբի նվիրատվական արձանագրությունը Սանահինում, որի թվականը չի պահպանվել, բայց որտեղ նա վստահ ոճով հայտարարում է իր տոհմի մասին. «Ես՝ Աբլխարիփ Հայոց մարզպան, որդի Գրիգոր իշխանի, որդո Ապուղամրի, **յազգէ Պահլաւունի, ի տանէ Արշակունեաց...**»⁹⁶:

Ամփոփելով վիմագրական նյութի քննությունը մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից՝ կարող ենք եզրակացնել, որ եթե Վահրամ Պահլավունին Պետրոս կաթողիկոսի հետ լարված հարաբերություններ է ունեցել, ապա նրա եղբայր Աբղարիբ մարզպանն ավելի դիվանագիտորեն է հարցերին մոտեցել և կարողացել իր շահերն ապահովել: Այս նույն մոտեցումն է ունեցել նաև Գրիգոր Բջնեցին, սակայն ավելի հեռագնա նպատակներով: Վերջինս, մեր քննած հարցի տեսանկյունից առանցքային դերակատարություն ունեցող գործիչն է, ուստի նրան կանդրադառնանք ավելի հանգամանորեն:

⁹⁶ Դիվան հայ վիմագրության, պր. IX, կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, 2012, էջ 28:

ԳՐԻԳՈՐ ԲԶՆԵՑԻՆ ՄԻՆՉԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՆԱԼԸ

Գրիգոր Բջնեցի (Մագիստրոս) Պահլավունին Բագրատունյաց շրջանի ամենանշանավոր գործիչներից է, բարձր գնահատված դեռևս միջնադարում: Հենց սկզբում նշենք, որ հայագիտության մեջ նրա հատկապես վաղ շրջանի գործունեության մասին հրապարակումներում առկա է մի թյուրիմացություն, նրան երբեմն շփոթել են Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսի (Ապիրատ) հետ, որին հանգամանորեն անդրադարձանք վերևում: Չնայած այս իշխանը մահացել (սպանվել) է 1021 թ., սակայն Գրիգոր Մագիստրոս անունով հիշվում է նաև իր դստեր՝ Տիկնացոյիկնոջ՝ Տեկորում թողած 1042 թ. արձանագրության մեջ: Վերջինիս ամուսինը հայտնի իշխան Վեստ Սարգիսն էր, և ուսումնասիրողները մեծ մասամբ, չիմանալով Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսի գոյության մասին, կարծել են, թե Տիկնացոյիկնոջ հայրը Գրիգոր Բջնեցին է և այստեղից հեռուն գնացող եզրակացություններ արել նրա ու Վեստ Սարգսի քաղաքական գործակցության մասին⁹⁷: Մինչդեռ, ինչպես հայտնի է, Գրիգոր Բջնեցին մագիստրոս է դարձել 1045-ին:

Գրիգոր Բջնեցու անունն առաջին անգամ հիշատակվում է 1021 թ., նրա հոր մահվան դեպքի նկարագրության մեջ, որը հանգամանորեն ներկայացնում է Մատթեոս Ուռհայեցին⁹⁸: Հոր՝

⁹⁷ Լեոն անգամ Գրիգոր Բջնեցու ու Վեստ Սարգսի գործակցությամբ դավադրական մի ամբողջ ծրագիր է հորինել (Լեո, Անի, էջ 322-328), տե՛ս նաև՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. 3 (հատվածի հեղինակ՝ Հ. Բարթիկյան), էջ 148, Ա. Каждан. Армяне в составе господствующего класса Византийской империи в XI–XII вв. Ереван, 1975, էջ 122, Կ. Юзбашян, նշվ. աշխ., էջ 161, Ս. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 15, Պ. Մուրադյան, Կովկասյան մշակույթային աշխարհը և Հայաստանը, պր. Ա, Երևան, 2008, էջ 254 և այլն:

⁹⁸ Պատմիչը գրում է, որ Բջնիում. «Վասակ ասպարապետն Հայոց սիրեցեալ որդւովն իւրով Գրիգորիւ եւ այլ փառաւոր ազատօքն

Վասակ Հոլմի մահից հետո Գրիգորը բավականին երիտասարդ հասակում Անիի թագավորության ամենաբարձր կարգի ազատների շարքում գրավում է նրա տեղը, իր ավագ և կրտսեր հորեղբայրների՝ Վահրամի և Աբղարիբի կողքին: Մատթեոս Ուռհայեցին Վասակին կոչում է «ասպարապետ», թեև ընդունված է համարել, որ նրա ավագ եղբայր Վահրամն էր Անիի թագավորության սպարապետը: Գուցն նա այդ պաշտոնը ստացել է Վասակի մահից հետո: Ուշագրավ է, որ Մարմաշենի մոտ 2004 թ. հայտնաբերված մի անթվական արձանագրության մեջ Վասակը կոչվում է «Հայոց ասպետ»⁹⁹: Հնարավոր է, որ սա «ասպարապետ»-ի համառոտումն է, բայց չի բացառվում, որ Անիի թագավորության վերջին շրջանում այստեղ վերականգնվել է թագադիր ասպետի տիտղոսը և հանձնվել Պահլավունիներին (Արշակունիների ժամանակ թագադիր ասպետները Բագրատունիներն էին): Այս ենթադրությունը կարծես հիմնավորում է ստանում այն իրողությամբ, որ որոշ ժամանակ անց Վասակի որդի Գրիգոր Բջնեցին է լինում Գագիկ Բ-ի գլխին թագ դնողը (այդ մասին՝ քիչ հետո):

նստեալ կայր մեծաւ ուրախութեամբ»: Սեղանակիցները հանկած տեսնում են մի գուժկանի, որը գալիս ու հայտնում է ասպատակիչների ներխուժման մասին: Վասակը Բջնին թողնելով որդուն՝ «յանձն արարեալ գտուն իւր եւ զամուրն Բջնի որդւոյ իւրում Գրիգորի» տեղում եղած գործի հետ դուրս է գալիս թշնամուն ընդառաջ: Կռվի ժամանակ Վասակը մենամարտում սրախողխող է անում մի աժդահա խափշիկի: Երկկողմանի բազում զոհեր են լինում, և կռվի վերջում Վասակը զորականներով հեռանում է ու մի քարաժայռի վրա ստվերում հանգստանում՝ ննջում: Այստեղ են լինում նաև փախստական շինականներ, որոնցից մեկը, Վասակին սխալմամբ թշնամու տեղ ղնելով, հարվածում, ժայռից ցած է գցում, որից էլ նա մահանում է (Մատթեոս Ուռհայեցի, էջ 16-19): Մխիթար Այրիվանեցին էլ Վասակի մահվան մասին շատ համառոտ գրում է՝ «Գրիգոր Մագիստրոս... սա է որդին Հոլմին Վասակայ՝ շինողի Բջնոյ, Կայենոյ եւ Կայծոնոյ, գոր յանգեաւ սպանին ի Սերկելէ» (Մխիթար Այրիվանեցի, էջ 58-59):

⁹⁹ Ա. Մանուչարյան, Նորահայտ հիշատակություն՝ «Հայոց ասպետ» վիմագրությամբ, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տաբեգիրք Բ, Երեւան, 2007, էջ 157-158:

Հարկ է նշել, որ Պահլավունիները և առաջին հերթին Վասակի զավակները, նրա մահը շատ ծանր են տանում և նրան համարում են քրիստոնեական հավատի համար նահատակված մարտիրոս: Առաջինն այդ մասին նշում է Վասակի դուստրը՝ Սեդան, որն իր ամուսնու տոհմին պատկանող՝ 1010 թ. Սմբատ Մագիստրոսի¹⁰⁰ հիմնած Բագնայրի վանքին նվիրատվություն է կատարում ի հիշատակ իր հոր՝ «Քրիստոսի գորական» Վասակի¹⁰¹: Իսկ Մարմաշենի վանքի 1029 թ. արձանագրության մեջ, ինչպես վերը տեսանք, Վահրամն իր եղբորը կոչում է «Վասակ իշխանաց իշխան, որ նահատակեցաւ ի թուրքաց պատերազմի»: Ավելի ուշ՝ մագիստրոս դառնալուց հետո, Գրիգորն իրեն հիշատակում է որպես Վասակ «մարտիրոսի» որդի՝ «Գրիգորի՝ մագիստրոսի եւ կիտաւնատի, որդւոյ Վասակայ մարտիրոսի...»¹⁰²: Այսինքն, չնայած Վասակի մահվան դեպքն ավելի շուտ դժբախտ պատահար կարելի է համարել, սակայն հաշվի առնելով, որ դա տեղի է ունեցել անհավատների դեմ ճակատամարտից հետո, տոհմակիցները նրան կոչում են Քրիստոսի նահատակ և մարտիրոս:

Ինչպես երևում է, հոր տիրույթներն ու պաշտոնը ժառանգելուց հետո Գրիգորը բուռն գործունեություն է ծավալել, առաջին հերթին հայրենի Բջնիում հիմնելով Ս. Աստվածածին գեղաշեն եկեղեցին, որն, ինչպես վերը նշվեց, օծման ժամանակ դարձել է նաև բավական մեծ տարածք ընդգրկող եպիսկոպոսության կենտրոն: Գրիգոր Բջնեցու ինքնահիշատակման միակ վիմագիր օրինակը, մինչև մագիստրոսության արժանանալը, պահպանվել է նույն եկեղեցում, որն ուշ հայտնաբերման պատճառով անձա-

¹⁰⁰ Նախկինում Սմբատ Մագիստրոսին առանց փաստական հիմնավորման, թուրքիմացաբար համարել են Վահրամ Պահլավունու ավագ որդին, մինչդեռ նա այլ տոհմի ներկայացուցիչ էր (Կ. Մաթևոսեան, Սմբատ Մագիստրոս, «Հանդես ամսօրեայ», 2008, էջ 173-186):

¹⁰¹ Ղ. Աիշան, Շիրակ, էջ 113:

¹⁰² Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 10:

նոթ է մնացել իշխանի կենսագիրներին. «Յ(խու)ս Զ(րիստո)ս ողորմեա Գրիգորո իշխանաց իշխանի, որդո Վասակա»¹⁰³:

Ինչպես տեսնում ենք Աստծո ողորմածությունը հայցող Գրիգորն այստեղ նշում է Անիի թագավորության մեջ իր կրած տիտղոսը՝ իշխանաց իշխան, և ընդունված կարգի համաձայն՝ հոր անունը: Արձանագրությունը հավանորեն գրվել է եկեղեցու շինարարության ավարտի ժամանակ՝ 1031 թ.:

Վերը նշեցինք, որ 1033 թ. տեղի ունեցած արևի խավարման առիթով թագավորն ու կաթողիկոսն Անիից պատվիրակություն են ուղարկում Հովհաննես Կոզեռն վարդապետի մոտ: Մատթեոս Ուռհայեցին Սևան գնացածների մասին ասում է «Իսկ որք առաքեցան առ վարդապետն Հայոց՝ Գրիգոր Մագիստրոսն որդին Վասակայ եւ հայկազնին՝ Մեծն Սարգիս, եւ այլք ոմանք յագատաց տանն Հայոց...»¹⁰⁴: Այդ ժամանակ Գրիգորն արդեն Անիի թագավորության մեջ կարևոր դեր ունեցող անձնավորություն էր: Դրա մասին է վկայում նաև իշխանի հիշյալ շրջանի նամակագրությունը մի շարք բարձրաստիճան անձանց ու հատկապես Պետրոս Ա կաթողիկոսի հետ, որին գրված 9 նամակ է հայտնի:

¹⁰³ Արձանագրությունը գտնվում է Բջնիի եկեղեցու ներսում, հյուսիսային որմնամույթի խոյակի արևելյան կողմում: Հրատարակել է հնագետ-վիմագրագետ Գագիկ Սարգսյանը (Գ. Սարգսյան, Թեղենյաց վանքի պեղումները և Բջնիի մի արձանագրության առթիվ, Հայկական ՍՍՀ-ում 1983-1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. զեկուցումների թեզիսներ, Երևան, 1985, էջ 54): Արձանագրության վերջին Ա տառից հետո գրված է Ի, որը սխալագրություն է, վիմագիր գրչին հավանաբար թելադրվել է «յի» հնչյունը (Յ տառը), և նա սխալմամբ գրել է «Ի»:

¹⁰⁴ Մատթեոս Ուռհայեցի, էջ 76: Մատթեոս Ուռհայեցին, որն այս դեպքերի մասին գրել է շուրջ մեկդարյա հեռավորությունից, երբ Գրիգոր Բջնեցին առավելապես հայտնի էր Գրիգոր Մագիստրոս անունով, այստեղ ու հետագայում ևս նրան այդպես է կոչում, քանի որ նրան այդ անունով էր ճանաչում:

Ինչպես իշխանի թղթերի առաջին հրատարակիչ Կ. Կոստան-յանցն է գրում, Գրիգորի «թղթակիցների մեջ առաջին տեղը գրաւում է Տ. Պետրոս Ա..., Պահլավունի իշխանը նորա հետ կապուած էր առանձին իմն սիրով և յարգանքով»¹⁰⁵: Իսկապէս, նամակների ընթերցումը հենց այդ տպավորությունն է թողնում, քանի որ դրանք հիմնականում նվիրված են աստվածաբանական, գիտական, կրթական հարցերին, աղանդավորների պարսավանքին և այլն:

Նամակներից առաջինը (թուղթ Ա) գրվել է հավանորեն 1038-ին, երբ Պետրոսը կրկին վերադարձել էր կաթողիկոսական աթոռին և իշխանից խնդրել Եփրեմ Ասորու գիրքը, որը նա ընթերցել էր Բջնիում արգելափակված ժամանակ. վերնագիրն է «Առ հոգեւոր տէրն Պետրոս Հայոց կաթողիկոս, ի ժամանակին յորում ի կապանաց իւրոց վերստին յաջորդեաց յաթոռ իւր, խնդրեալ ի Գրիգորէ գգիր սրբոյն Եփրեմի հաւատոցն, զոր ընթեռնոյր մինչ ի բանտին էր»¹⁰⁶: Քաղաքական իրավիճակի բացահայտման տեսակետից հետաքրքրական են ևս երկու թուղթ, որոնք գրվել են Պետրոս կաթողիկոսի դեմ Անիում ծավալված ժողովրդական հուզումների ժամանակ: Մեկի վերնագրում (թուղթ Բ) կարդում ենք. «Առ տէր Պետրոս, ի ժամանակի խուժան յառնելոյ ի քաղաքին, ի վերայ նորա՝ բան մխիթարական...», որտեղ Գրիգորը Պետրոսին պատահածի մասին մանրամասներ չի գրում, միայն մխիթարում է նրան՝ այսպանելով «Արամյան անմտութիւնը»¹⁰⁷: Մյուս նամակը (թուղթ Ժ) հասցեագրված է Պետրոս կաթողիկոսի սարկավագին (անունը չի նշվում)՝ «Առ ոմն սարկաւագ տեառն Պետրոսի ի ժամանակի խազմի խուժանին, ի վերայ յարուցեալ», որտեղ խոսվում է նույն դեպքերի մասին: Մեր կարծիքով այս նամակներում կաթողիկոսի դեմ բարձրացած հուզում-

¹⁰⁵ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 285-286:

¹⁰⁶ Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 210-211:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 267-271:

ների վերաբերյալ ակնարկները վերաբերում են 1030-40-ական թվականներին քաղաքական հողի վրա կատարված իրադարձություններին¹⁰⁸:

1041 թվականին մահանում են անհաշտ եղբայրները՝ նախ Աշոտը, ապա Հովհաննես Մմբատ թագավորը, և երկիրը հայտնվում է ծանր վիճակում: Գրիգոր Բջնեցուն վիճակվում է Անիի թագավորության մայրամուտի այս դրամատիկ շրջանում պատմական գլխավոր դերակատարներից մեկը դառնալ:

ԳՐԻԳՈՐ ԲԶՆԵՑԻՆ ԳԱԳԻԿ Բ-Ի ԹԱԳԱԴԻՐ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Անիի Բագրատունյաց թագավորության վերջին շրջանի պատմությունն ուսումնասիրվել է բավականին մանրակրկիտ, ուստի մենք կատարված դեպքերի մասին կնշենք շատ հակիրճ՝ շեշտը դնելով Գրիգոր Բջնեցու գործունեության վրա:

Հովհաննես Մմբատի մահից հետո Անիում սկսվում է անիշխանության մի շրջան, որից օգտվելով՝ թագավորի հոգաբարձուն՝ Վեստ Սարգիսը, փորձում է գրավել գահը¹⁰⁹: Բյուզանդական կայսրությունն էլ իր հերթին, Հովհաննես Մմբատի կտակը մեջտեղ բերելով, պահանջում է իրեն հանձնել Անին: Մերժում ստանալով՝ բյուզանդացիները դիմում են ռազմական գործողությունների, բայց անհաջողության մատնվելով՝ Անիի թագավորության դեմ են հանում Տաշիր Ձորագետի Բագրատունի թագավոր Դավիթ Անհողինին, որն արշավում և ավերածությ-

¹⁰⁸ Կ. Մաթևոսյան, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 212-216:

¹⁰⁹ Այս արարքի և հետագա գործողությունների համար հայ պատմիչները պարսավանքով են խոսում Վեստ Սարգսի մասին: Նրա շինարարական գործունեությունը դրվատանքով է հիշում միայն Սամվել Անեցին (տե՛ս Սամուել Անեցի և շարունակողներ, էջ 183, 391):

յուններ է գործում Շիրակում: Այդ ժամանակ քաղաքում իրական իշխանությունը (թագավորական գանձարանը և այլն) գտնվում էր Վեստ Սարգսի ձեռքում:

Նման անորոշ իրավիճակում կտրուկ նախաձեռնություն է հանդես բերում Վահրամ Պահլավունին իր տոհմակիցներով, որոնք 1042 թ. հնարամտորեն (հավանաբար ծպտված կերպով) Անի են բերում Հովհաննես Սմբատի եղբայր, Աշոտի որդի՝ տասնութամյա Գագիկին և նրան թագադրելով՝ հռչակում Հայոց թագավոր: Այդ մասին պատմում է Արիստակես Լաստիվերցին. «Իսկ Վահրամ, այր հզոր և անուանի, և բարեպաշտութեամբ յոյժ վեհ, որպէս թէ ոչ որ հաւասար նմա՝ Պահլաւ, հանդերձ իւրովք ազգակցօք, որդւովք և եղբօրորդւովք իբրև երեսուն ազատօք, ոչ միաբանեցան ընդ նմա (Վեստ Սարգսին – Կ. Մ.), այլ կոչեալ առ ինքեանս ԳԳագիկ որդի Աշոտոյ, թագաւորեցուցին ի վերայ իւրեանց, և իմաստութեամբ և հնարիւք մուծին ի քաղաքն»¹¹⁰: Սամվել Անեցին էլ հավելում է, որ Գագիկ Բ-ի (1042-1045) օծումը կատարել է Պետրոս կաթողիկոսը՝ Անիի Մայր տաճարում¹¹¹:

Այս դեպքի վերաբերյալ մեկ այլ կարևոր մանրամասն է ավելացնում Մատթեոս Ուռհայեցին՝ նշելով, որ Գագիկին թագադրողը եղել է Գրիգոր Բջնեցին. «Ժողովեցան ամենայն նախարարքն Հայոց առ հայրապետն Տէր Պետրոս եւ օծին ԳԳագիկ թագաւոր ի վերայ ամենայն Տանն Հայոց, շնորհօք Հոգւոյն Սրբոյ եւ իրամանաւ մեծի իշխանին, որ էր ազգաւ Հայկազնեան եւ հայրենեօք Պահլաւունի, որոյ անուն՝ ըստ նախնոյն իւրոյ, Գրիգոր ճանաչի,

¹¹⁰ Արիստակես Լաստիվերցի, էջ 57-58:

¹¹¹ «Արդ, յետ մահուանն Սմբատայ, որ եւ Յովանէսն, միաբանեալ ազատագունդ զաւրացն եւ իշխանացն, յաւէտ եւս պատրիարզին տեառն Պետրոսի, ժողովեցան առ դրունս մեծափառ Կաթողիկէին՝ ի մայրաքաղաքս յԱնի, եւ հաստատեն ԳԳագիկ զեղբաւորորդին Յովաննիսի, թագաւոր ի վերայ ինքեանց ի տեղի հաւրեղբաւր իւրոյ» (Սամուել Անեցի եւ շարունակողներ, էջ 186):

եւ էր յազգէն սրբոյն Գրիգորի»¹¹²: Սմբատ Սպարապետը Գրիգորին այս ձեռնարկը նախաձեռնողի դեր է վերագրում. «Ժողովեցան իշխանքն Հայոց հրամանաւ մեծին Գրիգորի, որդւոյ Վասակայ Պահլաւունոյ, եւ գնացեալ առ սուրբ հայրապետն տէր Պետրոս՝ օծին զԳագիկ թագաւոր ի վերայ Տանն Հայոց»¹¹³:

Այսպիսով, Վահրամ Պահլավունին որպէս զորավոր և տոհմապետ, իսկ ուսյալ Գրիգորը՝ գաղափարակիր և արարողական մասնակից, Գագիկին թագադրելով փորձում են կանխել Անիի Բագրատունյաց թագավորության անկումը: Գրիգոր Բջնեցին այդ օրերին նաև զորաբանակի գլուխ անցած Հրազդան գետի մոտ պարտության է մատնում արևելքից երկիր ներխուժած ասպատակիչներին¹¹⁴: Հավանաբար այդ նույն ժամանակ նրա որդին էլ մասնակցում էր երկրի արևմտյան կողմից թագավորության սահմանները մտած բյուզանդացիների դեմ մղված կռիվներին, որին էլ ուղղված է Գրիգորի ամենաուշագրավ թղթերից մեկը (թուղթ ԶԳ), որը զավթիչներին հակահարված տալու բանաստեղծական մի ազդու կոչ է¹¹⁵:

Սակայն հետագա դեպքերը երիտասարդ թագավորի ու նրա աջակիցների համար անբարենպաստ հունով են ընթանում:

¹¹² Մատթեոս Ուռհայեցի, էջ 96-97: Ուռհայեցու Ժամանակագրության այս հատվածում «հրամանաւ մեծի իշխանին» բառերից հետո հետագայում հավանաբար ընդմիջարկություն է արվել՝ «որով եւ օծեաց զնա սրբակեացն մեծն Մարցէն»: Այս հարցին հանգամանորեն անդրադարձել է Հ. Բարթիկյանը (Հ. Բարթիկյան, Ուռհայեցու երկում հանդիպող «Մարցէ» անվան մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, N 2, էջ 163-167): Ըստ Գ. Արզառյանի՝ «մեծն Մարցէն»-ի փոխարեն հավանորեն եղել է «մեծիմաստն» բառը (այս մասին տե՛ս Ռ. Մաթևոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 190):

¹¹³ Սմբատ Սպարապետ, էջ 36-37:

¹¹⁴ Մատթեոս Ուռհայեցի, էջ 96-99:

¹¹⁵ Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 369, Նամակի գրության ժամանակի մասին տե՛ս Գ. Արզառյան, Ո՛վ է Գրիգոր Մագիստրոսի հիշատակած Նիկողոս զորավարը, «Լրաբեր» հաս. գիտ., 1971, N 9, էջ 44-49:

Անիի փոքր թագավորության դեմ դուրս է գալիս բյուզանդական դիվանագիտության հզոր մեքենան: Արտաքին ճնշումներին գումարվում են նաև հակասությունները երկրի ներսում: Թագադրումից անմիջապես հետո Գագիկին հաջողվում է ճնշել Վեստ Սարգսի ընդվզումը, որից հետո, սակայն, նրան դարձյալ տեղ է տալիս արքունիքում: Բայց դրանից որոշ ժամանակ հետո Գագիկն ընդհարվում է Գրիգոր Բջնեցու հետ, որի մասին թեև պատմիչների մոտ տեղեկություններ չկան, սակայն այդ փաստն ակներև է դառնում Գրիգորի՝ հավանորեն 1042-1043 թթ. գրված մի քանի նամակներից: Այդ իմաստով հատկանշական են հատկապես իշխանի՝ իր բարեկամ Սարգիս Անեցի վարդապետին գրված նամակները, որը կաթողիկոսարանի մատենադարանապետն էր և անգամ միջնորդ է դարձել Գագիկ Բ-ի ու Գրիգորի հաշտեցման համար¹¹⁶: Նամակներից առաջինի (թուղթ ԺԸ) վերնագիրն է՝ «Առ վարդապետն Սարգիս ի ժամանակի հալածանաց, գրեաց ի մայրաքաղաքն Անի»¹¹⁷: Ուշագրավ է, որ Սարգիս Անեցուն գրած մեկ այլ նամակում (թուղթ ԺԹ) իշխանը դժգոհում է, որ Գագիկը չարության ուղին բռնելով հետ է կանգնում Աստծու առաջ տված ուխտից՝ հավանաբար նկատի ունենալով թագադրության ժամանակ նրա տված երդումը¹¹⁸: Զանի որ

¹¹⁶ Սարգիս Անեցուն Գրիգորի գրած առաջին երեք թղթերը՝ ԺԸ, ԺԹ, Ի, բովանդակության համաձայն գրվել են Գագիկ Բ-ի ու իշխանի գժտության շրջանում, իսկ ԻԱ և ԻԲ թղթերն այն ժամանակ, երբ Գագիկն արդեն զրկվել էր գահից, Գրիգորը՝ Տարոնում էր, իսկ Սարգիս Անեցին Անիի կաթողիկոսարանի լուծարումից հետո քաշվել էր Սևանի վանք: Այդ է պատճառը, որ Սևան ուղարկված լինելու պատճառով այս նամակների հասցեատեր է համարվել մի կարծեցյալ Սարգիս Սևանցի, մինչդեռ նամակների բովանդակությունից ու դրանցում արծարծված հարցերի համանման շրջանակից ակնհայտ է, որ Գրիգորի թղթակիցը նույն մարդն է, իր վաղեմի բարեկամ և ուսումնակից Սարգիս Անեցին: Այս մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթևոսյան, Սարգիս վարդապետ Անեցի, «Անի», 1992, N 1, էջ 40-47, նույնի՝ Անի, էջ 330-335:

¹¹⁷ Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 294:

¹¹⁸ «Արդ այսմ չարեաց դարձեալ հաւանեալ դա, որ երբեմն ուխտեաց

Սարգիսն իր մտերիմն էր, իշխանը նրա հետ շատ անկեղծ է ու թագավորի տարիքը նկատի ունենալով՝ նրան հաճախ մանուկ է կոչում, մեղադրում բանասարկուներին լսելու և այլ մեղքերի մեջ:

Գրիգոր Բջնեցու նկատմամբ հալածանքների այս շրջանում է գրվել նաև նրա՝ Պետրոս կաթողիկոսին ուղղված՝ ժամանակագրորեն թերևս վերջին նամակը (թուղթ Գ), որի վերնագիրն արդեն շատ խոսում է. «Պատասխանի կաթողիկոսին՝ յաղագս Գագկայ, որ ասեր թե՛ խորհին կորուսանել զքեզ»¹¹⁹: Հայտնի է նաև այդ շրջանում Գրիգորի ընկնված ոճով գրված մեկ նամակն ուղղված հենց Գագիկ Բ-ին (թուղթ ՀԲ): Ավելի ուշ, երբ Գագիկն արդեն գահագուրկ էր, իսկ Գրիգորը՝ մագիստրոս, նա Գագիկին գրել է մեկ այլ նամակ, միանգամայն այլ շեշտադրմամբ (թուղթ ՀԳ, այդ նամակին կանդրադառնանք քիչ հետո): Հալածանքների շրջանում տարբեր հասցեատերերին ուղղված թղթերում Գրիգոր Բջնեցու հիմնական ասելիքն այն է, որ ինքը անհիմն և կեղծ գրպարտությունների զոհ է¹²⁰:

Ստույգ հայտնի չէ, թե երբ և ինչպես է հանգուցալուծվել այս գժտությունը, սակայն 1044 թ. վերջերին, երբ արտաքին ճնշումներից, Բյուզանդիայի դրդմամբ Դվինի ամիրայի հարձակումներից ընկնված ու անելանելի վիճակի մեջ հայտնված Գագիկին առաջարկվում է մեկնել կայսեր մոտ՝ Կոստանդնուպոլիս, դատելով անուղղակի վկայություններից, Գրիգոր Բջնեցին Անիում էր:

Համառոտակի անդրադառնանք թագավորության այս խորը ճգնաժամի շրջանում Պետրոս կաթողիկոսի կատարած մի աննախադեպ քայլին: Ընդունված է այն կարծիքը, որ Պետրոսն իր

Տեառն Աստուծոյ այնմ, որ նստին ի քրովքէս, գատելիսն նորա ատեալ եւ զսիրելիսն սիրել: Եւ այժմ եթէ ոչ դարձցի դա ի չարեաց, գոր վերստին ստացաւ, դարձեալ ներեսցուք արդեալք: Քաջ գիտեմ, եթէ ոչ» (Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 283):

¹¹⁹ Նույն տեղում, էջ 262-264:

¹²⁰ Կարելի է ենթադրել, որ Պապիականների միջամտությամբ իր նպատակների ձախողման պատճառով Վեստ Սարգիսը հետագայում Գագիկին տրամադրել է նրանց, ու հատկապես Գրիգոր Բջնեցու դեմ:

քրոջ որդուն՝ Խաչիկին (Խաչիկ Բ Անեցի) տեղապահ է նշանակել այն ժամանակ, երբ բյուզանդացիներն իրեն դուրս են բերել Անիից, և ինքն էլ մտածելով, թե գուցե բյուզանդացիներն այլևս իրեն չեն թողնի Անի վերադառնալ, տեղապահ է հաստատել¹²¹։ Սակայն Մրենի արձանագրություններից մեկը վկայում է միանգամայն այլ ժամկետի մասին։ Այն վերաբերում է Գագիկ Բ-ի՝ Մրենում որոշ հարկեր թողնելուն և սկսվում է հետևյալ կերպ. «ՆՂ (1041) թուականութեանս Հայոց **ի հայրապետութեան Տէր Պետրոսի եւ Խաչկա Հայոց կաթողիկոսաց**, այս իմ հրամանք են Գագկա Շահանշահի որդոյ Աշոտո, ազատեալ եմ գՄրենոյ գհարկն...»¹²²։ Ինչպես տեսնում ենք, արդեն Գագիկ Բ-ի գահակալության սկզբում Խաչիկը հիշատակվում է որպես Պետրոսի աթոռակից կաթողիկոս։ Արձանագրության մեջ նշված Հայոց ՆՂ թվականն ընդգրկում է 1041 թ. մարտի 11-ից 1042 թ. մարտի 10-ն ընկած ժամանակաշրջանը։ Փաստորեն, Պետրոս Ա-ն օգտվելով հենց իր աթոռակալությամբ առաջացած նախադեպից (երբ կաթողիկոս Սարգիս Սևանցին իրեն կաթողիկոս օծեց), նաև երկրում ստեղծված քաղաքական խառը իրավիճակից, կարելի է ասել՝ միանձնյա որոշմամբ, իր քրոջ որդուն օծել է կաթողիկոս¹²³։ Սա նշանակում է, որ նա այդ ժամանակ աթոռը կրկին կորցնելու վտանգ էր զգում, կարծում ենք, ոչ այնքան բյուզանդացիներից զգուշանալով, որոնց հետ այդ ժամանակ լավ հարաբերություններ ուներ, որքան երկրի ներսում իր դեմ եղած դժգոհությունը հաշվի առնելով։ Հնարավոր է նաև, որ օր օրի զորա-

¹²¹ Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 1443, Գ. Մագսուտյան, Ընտրեալոյ յԱստուծոյ. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը, Երևան, 1995, էջ 70։

¹²² Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 197։

¹²³ Իր ազգականին ձեռնադրելու Պետրոսի այս քայլը հետագայում խստորեն քննադատել է Ներսես Լամբրոնացին, գրելով, որ կաթողիկոսը «խրամատեաց զօրէնսն, ոչ գիտէմ որպէս, և զքուերորդին իւր՝ զտէր Խաչիկ ձեռնադրեաց» (Սրբոյն Ներսեսի Լամբրոնացոյ Տարսոնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք..., Վենետիկ, 1847, էջ 535)։

ցող Պահլավունիների՝ իրենց տոհմի ծագումը Գրիգոր Լուսավորչի հետ կապելու բարձրաձայնումը նույնպես մի ահագանգ է եղել Պետրոսի համար:

Գագիկ Բ-ի իշխանությունը չճանաչող Բյուզանդիան աստիճանաբար մեծացնում է ճնշումը Բագրատունյաց թագավորության վրա: Բյուզանդական զորքերը հայտնվում են Անիի պարիսպների տակ, որտեղ արդեն որերորդ անգամ պարտություն են կրում Վահրամ Պահլավունու գլխավորած հայկական զորքերի կողմից: Ի վերջո, Կոստանդին Թ Մոնոմախ (1042-1054) կայսրը փոխում է մարտավարությունը՝ հաշտություն կնքելու և բարեկամություն հաստատելու պատրվակով Գագիկին հրավիրում է Կոստանդնուպոլիս (1044): Անիի արքունիքում տարակուսում են՝ ընդունել հրավերը, թե ոչ: Այս մասին հանգամանորեն գրում է Արիստակես Լաստիվերցին՝ նշելով, որ Գագիկը որոշեց մեկնել «նենգաւորին Սարգսի սաղրելոյն լուեալ» և չսեղծվ իրեն թագավորեցնողներին՝ «ոչ եկաց ի պատուէր Վահրամայ եւ այլ ազատացն, որ թագաւորեցուցին զնա»¹²⁴: Գագիկը քաղաքի բանալիները հանձնում է կաթողիկոսին և մեկնում Կոստանդնուպոլիս, բայց տեղ հասնելուն պես նրան արգելափակում և այ-

¹²⁴ Արիստակես Լաստիվերցի, էջ 62: Պարզ է, որ Գրիգոր Բջնեցին Գագիկին թագավորեցնողներից էր, սակայն վերջինիս՝ Կոստանդնուպոլիս մեկնելու հարցի առնչությամբ նրա դիրքորոշումն անհայտ է: Այս առումով պետք է նկատի ունենալ Սամվել Անեցու ժամանակագրության մեջ կատարված մի ընդմիջարկություն (երկար ժամանակ այն սխալմամբ համարվել է Սամվել Անեցունը), որտեղ ասվում է. «Տէր Պետրոս եւ ազատ Սարգիս եւ Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ եւ զԱնի ետուն ի կայսրն Յունաց, վասն որոյ ելին ի բռնիկ աշխարհէն իւրեանց՝ տէր Պետրոս եւ Գրիգոր՝ Վասակայ որդին, Գագիկ եւ այլք իշխանք Հայոց եւ եկին ի Հոռոմս» (Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 178): Թեպետ հավելման ստույգ ժամանակը հայտնի չէ, սակայն տեղեկության ծագումը շատ հին պետք է համարել, նկատի ունենալով, որ Գրիգորն այստեղ կոչվում է Բջնեցի և Վասակայ որդի, այլ ոչ թե Մագիստրոս:

լևս թույլ չեն տալիս հայրենիք վերադառնալ՝ պահանջելով Անին փոխանակել կայսրության այլ քաղաքի հետ¹²⁵:

Գագիկի վերադարձի արգելքին տեղեկանալով՝ Անիում որոշում են նրա հետևից ուղարկել Գրիգոր Բջնեցուն: Մեկնելով, նա համոզվում է, որ Գագիկին այլևս հետ չեն թողնելու և, պատմիչի խոսքերով, քանի որ իմաստուն մարդ էր, նախաձեռնություն հանդես բերելով՝ ինքնակամ կայսերն է տալիս Բջնիի բանալին ու իր հայրենի ժառանգությունը, որի համար մեծարանքի է արժանանում նրա կողմից: Գրիգորը ստանում է նաև մագիստրոսության պատիվ, զինվորական պաշտոն և նոր տիրույթներ Հայաստանի՝ կայսրությանը պատկանող շրջաններում: Արիստակես Լաստիվերցին այս առնչությամբ գրում է. «Եւ ի յերկարիլ խնդրոյս այսորիկ, Գրիգոր որդի քաջին Վասակայ, ելեալ եւ նա զնաց առաջի թագաւորին: Եւ քանզի այր իմաստուն էր եւ խելամուտ յոյժ աստուածային գրոց, որպէս թէ ո՛չ այլ ոք, իբրեւ ետես, եթէ ոչ են թողոց զԳագիկ ի տեղի իւր, **յառաջ կացեալ տայ զբանալին Բջնոյ ցթագաւորն, եւ զամենայն զիւր զհայրենի ժառանգութիւնն. եւ մեծարեալ ի նմանէ՝ առնու զպատիւ մագիստրոսութեան**, եւ զտեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց զիւղս եւ քաղաքս, գրով եւ ոսկի մատանեաւ յազգէ յազգ մինչեւ յաւիտեան»¹²⁶:

Գրիգոր Մագիստրոսի (այսուհետև նրան այդպես պիտի կո-

¹²⁵ Արիստակես Լաստիվերցու հաղորդմամբ Գագիկը «Հաւատաց վասն երդմանցն եւ խաչին, եթէ վասն խակութեան մտացն եթէ վասն երկիւղածութեան բարուցն՝ ոչ զիտեմ. տուեալ զբանալի քաղաքին ի Պետրոս, որ յայնժամ ունէր զայթոռ հայրապետութեան Լուսաւորչին մերոյ, եւ յանձնեաց ի նա զամենայն հոգս աշխարհին մեծաւ դաշամբ եւ ուխտիւ... ել ի քաղաքէն, եւ չոգաւ ի Յոյնս զանդարձ ուղեւորութիւն. իբրեւ զծուկն ի կարթէ ըմբռնեալ կամ իբրեւ զհաւ ի ծուղակաց: Չոր տեսեալ թագաւորին՝ ո՛չ յիշեաց զերդմունսն, եւ ոչ զխաչին զմիջնորդութիւնն. այլ առ իւր արգել, եւ խնդրէր թէ Տո՛ւր զԱնի, եւ ես տաց քեզ փոխանակաւ զՄելիտինէ զգաւառսն որ շուրջ զնովա: Այլ նա ո՛չ առնու յանձն» (Արիստակես Լաստիվերցի, էջ 62):

¹²⁶ Նույն տեղում:

չենք) այս քայլը կարելի է բացատրել մի քանի պատճառներով. առաջինը քաղաքական պահի իրատեսական գնահատումն էր, քանի որ պայքարի շարունակումն ակնհայտորեն դատապարտված էր ձախողման: Գրիգորն այս քայլով գոհացրեց կայսերը, Գագիկի համառության այլընտրանքը ներկայացնելով, որի շնորհիվ թերևս սպասվածից ավելին ստացավ: Երկրորդ պատճառը հավանաբար Գագիկի հետ ունեցած գոտությունն էր և նախընթաց տարիների իր հալածական ու ընկճված վիճակը, որն ինքնասեր իշխանը չէր կարող հեշտությամբ մոռանալ: Սա, եթե կարելի է այդպես ասել, քաղաքական ռևանշի հասնելու փայլուն առիթ էր, որը Գրիգորի նման շրջահայաց գործիչն իր ձեռքից չէր կարող բաց թողնել (ինչպես կտեսնենք, Գագիկի հետ նրա թշնամությունը շարունակվել է նաև դրանից հետո): Երրորդ պատճառ-հիմնավորումն էլ այն կարող էր լինել, որ Անիի բյուզանդական նվաճման անխուսափելիությունը նկատի ունենալով, Գրիգոր Մագիստրոսը պիտի մտածեր նաև իր տոհմակիցների ու հատկապես Վահրամ Պահլավունու մասին, որը նախորդ տարիներին մի քանի անգամ ռազմի դաշտում հաղթել էր բյուզանդացիներին և Գագիկին գահ բարձրացնող գլխավոր գործիչն էր, ուստի նոր պայմաններում կարող էր հույների վրեժխնդրությանն արժանանալ: Գրիգորն իր քայլով կանխեց այդ ենթադրվող հաշվեհարդարը, և ինչպես քիչ հետո կտեսնենք, բյուզանդացիների՝ Անի գալուց հետո ծերունի Վահրամը շարունակեց քաղաքում մնացած հայկական գինուժի հրամանատարը համարվել:

Հաջորդ դեպքերն այսպիսին են. առանց գահակալի մնացած Անին որոշ դիմադրությունից հետո՝ 1045-ին բյուզանդամետ գործիչների մասնակցությամբ անցնում է կայսրության տիրապետության տակ¹²⁷, Գագիկին, զուտ կայսեր բարի կամքի

¹²⁷ Գագիկի վերադարձի հույսը կորցրած և բյուզանդացիների արարքից վիրավորված անեցիները փորձում են դիմադրություն ցույց տալ: Նրանց շրջանում առաջ են գալիս տարբեր խմբակցություններ, որոնք մտածում են քաղաքը հանձնել Դավիթ Անհողինին կամ Վրաց

դրսևորմամբ, որոշ տիրույթներ են տրվում¹²⁸։ Իսկ Գրիգոր Մագիստրոսը Հայաստան՝ Տարոն վերադառնալով, փաստորեն դառնում է երկրում իրական իշխանություն ունեցող և բյուզանդացիների վստահությունը վայելող ամենագորեղ հայ իշխանը։ Այս իրողության յուրահատուկ արտահայտությունը տեղ է գտել Մխիթար Այրիվանեցու ժամանակագրության մի վկայության մեջ. **«Իսկ Մոնոմախն, որ կալա զԳագիկ թագաւորն՝ ետ զիշխանութիւն երկրիս Գրիգորոյ Մագիստրոսի...»**¹²⁹։ Լ. Խաչերյանը Գրիգոր Մագիստրոսին նվիրված մենագրության մեջ տարակուսանք է հայտնում այս տեղեկության առնչությամբ՝ նշելով, որ այն «ոչ մի այլ աղբյուրով չի վաւերացւում»¹³⁰։ Եվ դա բնական է, քանի որ իրականում այդպիսի բան չի եղել։ Մխիթար Այրիվանեցու հաղորդածն իրավիճակի ընդհանրացված ներկայացումն է, և վկայում է այն մասին, որ Կոստանդին Մոնոմախի ձեռքով Գագիկի գահազրկումից ու Գրիգորի կտրուկ վերելքից հետո, Հայաստանում կարող էր ստեղծվել այնպիսի տպավորություն, թե Գագիկին արգելափակելով հետո կայսրը երկրի իշխանությունը հանձնել է Գրիգոր Մագիստրոսին։

Հետաքրքրական է, որ արդեն 1045-ին Գրիգոր Մագիստրոսը

Բագրատ թագավորին, անգամ Դվինի Աբուլասվար ամիրային, որի կինը Գագիկ Բ-ի քույրն էր։ Այդ ժամանակ տեսնելով անեցիների տրամադրությունները, վճռական քայլերի է դիմում Պետրոս կաթողիկոսը. «Իբրեւ ետես հայրապետն Պետրոս զայսպիսի խորհուրդ, թէ ո՛ւմ եւ իցե՛ ի գնալ է քաղաքս, առաքե՛ առ այն, որ ունէր զիշխանութիւն արեւելից կողմանն, որ նստէր ի քաղաքն Սամուսատ... եւ գրէ, թէ՛ Ծանո՛ թագաւորին, թէ մեզ զինչ հատուցանէ փոխարենս, եւ ես տաց զքաղաքս եւ զայլ ամուրս որ յաշխարհիս են։ Իսկ նա, իբրեւ լուաւ, փութապէս ծանոյց թագաւորին. եւ լուեալ թագաւորին, գանձիւք եւ իշխանութեամբ հաճեալ զկամս նորա, եւ այսու տիրեցին Անոյ եւ ամենայն աշխարհին» (Արիստակես Լաստիվերցի, էջ 63)։

¹²⁸ «Գագիկ աներախտի մնաց առ թագաւորն. որում առ մարդասիրութեան տուեալ նմա տեղիս, գոր ինքն կամեցաւ, որ յոյժ պակաս էր ըստ արժէիցն Անոյ» (Արիստակես Լաստիվերցի, էջ 63)։

¹²⁹ Մխիթար Այրիվանեցի, էջ 58-59։

¹³⁰ Գ. Խաչերեան, նշվ. աշխ., էջ 143։

Կոստանդնուպոլսում եղած ժամանակ գրած իր «Տաղասացութիւն» պոեմի առաջարանում, որ հայտնի է նաև որպէս «Հազարտողեան», ներկայանում է որպէս Պահլավունի. «Ի չորեք հարիւր եւ իննսուն եւ չորս թուականութեանս Հայոց (1045), լինելոյ իմ **Գրիգորի Մագիստրոսի, որդի Վասակայ, աստուածապահ կիտաւնի եւ դուկի եւ Պալիաունունոյ**, եղեալ իմ յաստուածապահ քաղաքին ի Կոստանդնուպոլիս, ի ժամանակս բարեպաշտ եւ քրիստոսապսակեալ արքային Կոստանտեայ Մոնաւմախին...», և գրության վերջում նույնպէս նշում է իր տիտղոսներն ու Պահլավունի լինելը¹³¹:

Ուշագրաւ է նաև, թե Գրիգոր Մագիստրոսն ինչպէս է ներկայացնում իր տիրույթները Տարոն գալուց հետո Գագիկ Բ-ին գրված վերջին նամակում (թուրք ՀԳ): Քաղաքավարական ձևը պահպանելով, բայց նաև Գագիկին արդեն ուղղակիորեն հանդիմանելով, նա նամակի վերջում, կարելի է ասել, չարախնդում է գահագուրկ թագավորի վրա՝ ներկայացնելով, թե ինչպիսի ընդարձակ իշխանության է տիրապետում. «**Վասպուրականի եւ Տարաւնոյ եւ Մանագկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր եւ Մաւնումախին մագիստրոս, վեստ եւ տուկ**»¹³²:

¹³¹ Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 139-140:

¹³² Այս շատ հետաքրքրական նամակից երևում է, որ Գագիկ Բ-ի և Գրիգոր Մագիստրոսի թշնամությունը դեռ շարունակվում էր, իսկ ավարտական հատվածը չափազանց խոսում է, ուստի մեջբերում ենք. «Ո՛չ գիտես, զի համբերեցի այսքան ժամանակ: Չիս համալուծ առնես որդւոյդ խեղկեալ խարբի, որ հազարաց եւ բիւրոց ընդդէմ եղեալ են թշնամեաց եւ պետաց: Ո՛չ գիտես, եթէ երկնչիս յԱստուծոյ, տալաիւն խոցոտես զիս եւ ոչ երկնչիս յԱստուծոյ ամենակալէս այն, որ նստին ի քերովբէս: Հրաչեայ մոռացեալ եղեւ, Վաղարշակ ոչ յիշեցաւ, Շամբաթ եւ Ասուդ ոչ յիշին, Հայկն թաքչի, Խոսրով գետեղի, Պարթենն նուագի, Քեսուրա յափշտակի, եւ այդ յերկարեն: Ե՛կ տէր իմ՝ Վասպուրականի եւ Տարաւնոյ եւ Մանագկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր եւ Մաւնումախին մագիստրոս, վեստ եւ տուկ, ի խարբի որդւոյդ ի գանգատ գնա՛: Չէ, մի՛ աւատայք: Բայց յԱստուծոյ երկնչիմ յայն, յոր յուսամ, որում երկրպագեմ: Դաւիթ իւր լու եղանուն եւ մեռեալ շուն, մինչեւ Աստուած ետես եւ այց արար: Եւ ես

1051 թ. Կեչառիսի վանքի արձանագրության մեջ Գրիգոր Մագիստրոսն իրեն արդեն սկսում է կոչել Արշակունի. «...**Գրիգորո Մագիստռոսին, կիտաւնտին եւ դուկին Վասպուրականի եւ Տարաւնո, Արշակունոյն եւ Հայկազն(ո)յն...**»¹³³: Նույն բանը տեսնում ենք նրա կնիքի վրա, որի հունարեն մակագրության թարգմանությունը հետևյալն է՝ «Տէ՛ր, օգնիր Քո ծառային՝ **Արշակունի Գրիգորին**՝ մագիստրոսին, սենեկապետին, Վասպուրականի և Տարոնի դուքսին»¹³⁴:

Հետաքրքրական է, որ ոչ միայն Գրիգորն է իրեն Արշակունի կոչել, այլ նրան այդպես են սկսել ճանաչել ու կոչել նաև ուրիշները: Մասնավորապես, ասորիների կաթողիկոսին գրված նամակի (թուղթ ԿԷ) երկար վերնագրից («յորժամ էր դուքս ի Վասպուրական եւ ի Տարաւն...»), երևում է, որ դրանից առաջ այդ կաթողիկոսը նամակ է ուղարկել Գրիգոր Մագիստրոս Արշակունուն՝ «գոր նորա գրեալ թուղթ՝ **ի Գրիգոր Մագիստրոսն յԱրշակունին**»¹³⁵: Նշենք նաև, որ մագիստրոս դառնալուց հետո Գրիգորն այլևս ոչ մի նամակ չի գրել Պետրոս կաթողիկոսին (համեմայն դեպս, այդպիսիք հայտնի չեն):

Այսպիսով, Բջնիի տեր եղած ժամանակի «իշխանաց իշխան, որդի Վասակայ» ձևակերպման փոխարեն մագիստրոսության պատվին արժանանալուց հետո ոչ միայն մեծանում է Գրիգորի տիտղոսաշարը, այլև ընդգծվում է տոհմանունը՝ Պահլավունի կամ Արշակունի:

ներեմ եւ աղաչեմ, որ ձեզ կեանք տայ եւ բարի միտս: Ողջ լի՛ք» (Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 336): Գրիգոր Մագիստրոսի թղթերի երկու հրատարակության մեջ էլ «խարբի»-ն որպես հատուկ անուն է նշված (Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 212-213): Հ. Աճառյանը նկատում է, որ այն (խարբ) «հասարակ անուն է և նշանակում է անառակ» (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 502):

¹³³ Գ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 312:

¹³⁴ Տէ՛ս Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 85, ծան. 4:

¹³⁵ Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 192:

ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒ ՄԱՀԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՑՈՒՄՆ ԱՆԻԻՑ

Մինչ Գրիգոր Մագիստրոսը Կոստանդնուպոլսում էր, ապա տեղափոխվեց Տարոն և անցավ բյուզանդական կուսակալի իր պարտականություններին, 1045-1046 թվականներին Անիում ծավալվեցին նոր ողբերգական իրադարձություններ:

Անի եկած բյուզանդական առաջին կուսակալ Իասիտեսը (Լաստիվերցին նրան կոչում է Ասիտ) պատիվներ է մատուցում Պետրոս կաթողիկոսին. «եկեալ անչափ պատուով մեծարէ զհայրապետն Պետրոս»¹³⁶: Սակայն քաղաքում մթնոլորտը շատ լարված էր, որի մասին հայտնում է Սամվել Անեցին¹³⁷: Այս պայմաններում 1046 թ. աշնանն Իասիտեսը կայսերական հրամանով արշավանք է սկսում Դվինի Աբուլասվար ամիրայի դեմ, քանի որ վերջինս հրաժարվում է Անիի թագավորությունից հենց բյուզանդացիների դրդմամբ իսկած բերդերը վերադարձնելուց: Հույսը գորքի մեծաքանակության վրա դրած բյուզանդացի կուսակալը անկազմակերպ զորաշարով շարժվում է Դվինի վրա և ընկնում Աբուլասվարի պատրաստած ծուղակը: Բյուզանդացիները ծանր պարտություն են կրում, որի ժամանակ զոհվում է նաև հայկական ուժերն առաջնորդող ծերունի Վահրամ Պահլավունին իր Գրիգոր որդու հետ, որոնց դիերը բերում և հուղարկավորում են Մարմաշենի վանքում:

Այս կորուստը շատ ծանր է տանում Շիրակից հեռու գտնվող Գրիգոր Մագիստրոսը, որն այդ առիթով իր բարեկամ՝ Մյունյաց Հովհաննես մետրոպոլիտի ցավակցական նամակին ի պատասխան մի ծավալուն և հուզիչ նամակ է գրում (թուղթ ԺԱ): Գրիգոր Մագիստրոսը, ողբալով հորեղբոր մահը, իրեն համարում է

¹³⁶ Նույն տեղում, էջ 63:

¹³⁷ Սամուել Անեցի եւ շարունակողներ, էջ 186-187, 395:

«ի հայրական խնամոցն զրկեալ», ապա փառաբանական խոսքեր ասելով հանգուցյալի մասին անցնում է ուղիղ խոսքով նրան դիմելուն: «Աւա՛ղ կենդանութեանս, որ երանեամ վախճանելոյդ» ասելով՝ Մագիստրոսն իր ոճի ողջ ճոխությամբ ներկայացնում է հանգուցյալի արժանիքները («մաքուր վարուք եւ ողջախոհութեամբ յանգել **քստ քում նախնւոյն մերոյ Գրիգորի Լուսաւորչի**»), ողբում իրենց անտիրանալը, ասելով, թե ո՛վ պիտի այսուհետև մեզ խրատի, սաստի ու մխիթարի և այլն: Նամակի առանցքային հատվածներից մեկում Գրիգոր Մագիստրոսն անդրադառնալով Վահրամի ծագմանը, գրում է, թե քեզ վայել էր թագավոր լինել ու պալատներում ճեմել. «Քանզի ազգ սեփական եւ որդիք Արրահամու յազգէն քետուրական, ի գաւառէն Պարթեւաց, ի քաղաքէ Պահլաւ, ի ցեղէ Արշակունի, շառաւիղ մերոյն Լուսաւորչին, քեզ այդպէս վայելէր թագաւոր եւ յայսպիսի պաղատան ճեմել...»¹³⁸: Գրիգոր Մագիստրոսը նշում է իր հորը՝ Վասակին, պապին՝ Գրիգորին, գովաբանելով նրա ու կնոջ եկեղեցանվեր գործունեությունը, ավելացնելով՝ «Քազի սոքա արծարծեցին **զկարգ եւ զարեւնսդրութիւն մեծին Սահակայ՝ քոյին նախնւոյն**, եւ վանս նորագոյնս շինեալ բազումս եւ զաւերեալսն նորոգեալ, եւ այս անթիւս»¹³⁹: Շարունակելով՝ հեղինակն այս հատվածը եզրափակում է՝ ասելով. «Յայսմ հայրենի զարմէ եւ դու, ո՛չ միայն ազգաց հայր եւ թագաւոր յերկրի, այլ եւ թագաւորեալ յերկինս»¹⁴⁰:

Այս նամակն ակներևորեն ցույց է տալիս, որ Գրիգոր Մագիստրոսի համար շատ կարևոր էր տոհմաբանական խնդիրը, որն ինչպես շուտով կտեսնենք, սոսկ փառասիրական հակում չէր:

Վերադառնալով Անիի կացությանը՝ պետք է նշենք, որ այստեղ անսպասելիորեն ծանր վիճակի առաջ է հայտնվում Պետ-

¹³⁸ Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 259:

¹³⁹ Նույն տեղում, էջ 261:

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 262:

րոս կաթողիկոսը: Իասիտեսի՝ Դվինի ամիրայի դեմ կատարած ձախողված արշավանքից հետո նրան փոխարինում է Կատակալոն Կեկավմենոսը, որը բացահայտում է բյուզանդական զավթողական քաղաքականության իրական դեմքը և վկայակոչելով կայսերական հրամանը՝ քաղաքից հեռացնում է Պետրոսին. «...խաբանօք հանե զնա ի քաղաքէն, ասելով եթէ հրամայեալ է քեզ թագաւորն տեղի բնակութեան ի Կարին գաւառի յԱրծին աւանի»¹⁴¹: Փաստորեն, Գագիկ Բ-ին զահից զրկելուց և Անին զավթելուց հետո բյուզանդացիները ձեռնարկեցին Հայոց կաթողիկոսությունը կազմալուծելու գործը, որի առաջին քայլը կաթողիկոսին աթոռանիստ վայրից հեռացնելն էր:

Պետրոսը կանխագգում է, որ կարող է այլևս իրեն չճուլյատրվի Անի վերադառնալ և կաթողիկոսական օծում ստացած Խաչիկին թողնում է քաղաքում, նաև գաղտնի մեռնոն օրհնում և թաքցնում, որ բյուզանդացիների ձեռքը չընկնի¹⁴²: Դրանից հետո Պետրոսը հանդիսավոր շքախմբով ուղևորվում է Արծն: Սակայն արդեն մայրաքաղաքից հեռացած կաթողիկոսի հետ հույները վարվում են առանց այլևայությունների: Ըստ Լաստիվերցու՝ Արծնում Աստվածահայտնության տոնի օրը (1047 թ. հունվ. 6) «հասին կալանաւորք» և Պետրոսին տարան Կարինի բերդերից մեկը, նաև անմիջապես նրա քրոջ որդի Խաչիկին էլ Անիից բերեցին Սև քար կոչվող բերդը: Նրանց արգելափակված պահեցին մինչև Զատիկ (1047 թ. ապրիլ), որից հետո տարան Կոստանդնուպոլիս:

Կայսրության մայրաքաղաքում Պետրոսին պատշաճ ընդունելության են արժանացնում: Նա այստեղ պատվավոր աքսորականի վիճակում մնում է երեք տարի: Ի վերջո, Ատոմ Արծրունու միջնորդությամբ Պետրոսը իրավունք է ստանում հեռանալ Կոստանդնուպոլսից, և նրան թույլատրվում է հաստատվել Մեքաստիայում, որտեղ մնում է մինչև կյանքի վերջը: Ըստ էության՝

¹⁴¹ Նույն տեղում:

¹⁴² Մատթեոս Ուռհայեցի, էջ 114:

բյուզանդացիները Հայոց կաթողիկոսի հետ վարվում են այնպես, ինչպես մինչ այդ վարվել էին հայկական մեծ ու փոքր թագավորությունների տիրակալների հետ՝ նրանց հեռացնելով սեփական կալվածքներից ու բուն երկրից: Վարդան Արևելցու դիպուկ ձևակերպմամբ՝ բյուզանդացիները վերացրեցին Անիի երկու պսակները, կաթողիկոսական և թագավորական գահերը. «Յոյնք... վերացուցին ի նմանէ (Անիից – Կ. Մ.) գերկուսին պսակն՝ զգահ հայրապետութեան եւ զթագաւորութեան...»¹⁴³:

Պետրոսի մահից հետո (1054 թ.) աթոռն անցնում է Խաչիկ Անեցուն, որին բյուզանդացիներն այդպես էլ թույլ չեն տալիս ոտք դնել հայրենի քաղաք և անցնում են հալածանքների¹⁴⁴: Նրանք նախ Սեբաստիայից Կոստանդնուպոլիս են տանում Խաչիկ Անեցուն, ապա կողոպտում այստեղ և Անիում գտնվող կաթողիկոսարանի գանձերը, անգամ ոմանց կտտանքների են ենթարկում Պետրոսի գանձերի տեղն իմանալու համար¹⁴⁵: Հույներն աննախադեպ ճնշում են գործադրում Խաչիկ կաթողիկոսի վրա, բայց հայ ազնվականության ջանքերով հաջողվում է նրան դուրս բերել կայսրության մայրաքաղաքից և բնակության տեղ ապահովել Փոքր Հայքում՝ Թավրուրում: Մի քանի տարի այստեղ բնակվելուց հետո Խաչիկ Անեցին վախճանվում է հավանաբար 1065 թ. (հնարավոր է, որ կաթողիկոսի մահն ավելի վաղ է տեղի ունեցել): Դրանից հետո բյուզանդացիները դիմում են ծայրահեղ քայլի՝ Հայոց կաթողիկոսությունն ընդհանրապես վերացնելու համար արգելում են նոր կաթողիկոսի ընտրությունը: Ըմտ որոշ վկայությունների Կարսի վերջին թագավոր Գագիկ Աբասյանը կաթողիկոսական ընտրության թույլտվության համար Բյուզանդիային է հանձնում իր թագավորությունը¹⁴⁶:

¹⁴³ Վարդան Արևելցի, էջ 104:

¹⁴⁴ Այս մասին տե՛ս Կ. Մաթևոսյան, Անի, էջ 44-47, 193-195:

¹⁴⁵ Արիստակես Լաստիվերցի, էջ 82, Մատթեոս Ուռհայեցի, էջ 150:

¹⁴⁶ «Արքայն Գագիկ մեծաւ ջանիւ գուն գործեալ եւ բազում ինչս ծա-

**ԺԱՄԱՆԱԿԻ ՎԱԽՃԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՐԻԳՈՐ
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԾՐԱԳԻՐԸ**

Մեր քննած ժամանակաշրջանի բնորոշ հատկանիշներից մեկը Քրիստոսի Ծննդյան և Խաչելության 1000-ամյակի լրման հետ կապված վախճանաբանական մթնոլորտն էր, որը քրիստոնյա հավատացյալ ժողովրդի վրա մեծ ազդեցություն էր գործում՝ ռամիկից մինչև թագավոր: Աշխարհի մոտալուտ կործանման հին կանխատեսումներին ավելանում էին նորերը:

Անիում այս միտումներն արտահայտվում էին առավել ակնառու կերպով: Գագիկ Ա թագավորը քաղաքում կառուցում է Ս. Գրիգոր (Գագկաշեն) մեծադիր եկեղեցին Քրիստոսի Ծննդյան 1000-ամյակի առիթով («Յայնմ ժամանակի, յորում լնոյր լրութեամբ ամն Ռ (1000) մարմնանալոյ կամ մարդանալոյ Տեառն մերոյ...»)¹⁴⁷: Նրա կինը՝ Կատրամիդեն, մի քանի տարի անց Անիում ավարտում է Սմբատ Բ-ի հիմնադրած Կաթողիկեն (Մայր տաճարը), իսկ թագավորության նշանավոր իշխանները նույն շրջանում ջանադրաբար խոշոր վանքեր են հիմնադրում ու եկեղեցիներ կառուցում:

Վախճանաբանական տրամադրությունները, սակայն, ունենում են նաև այլ արդյունք: Օրինակ, Վասպուրականի թագավոր Սենեքերիմը տարված էր զանազան մարգարեություններով, իսկ երբ սկսվում է թուրքական ցեղերի ներխուժումը, նա խորը տրտմության մեջ է ընկնում՝ սկսելով քննել մարգարեների և

խեղաց եւ զԿարս քաղաք իւր գաւառան Յունաց տունալ... եւ ապա կարաց խափանել զկամս նոցա եւ էառ ի նոցանէ հրաման հաստատել հայրապետ Հայոց» (Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 419): Այս մասին նշում է նաև Ներսէս Շնորհալին:

¹⁴⁷ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, էջ 827:

վարդապետների գուշակությունները, կատարվածը համարում է գրքերում գրված տեսիլների և գուշակությունների իրականացում, և եզրակացնում, որ դա երկնային պատիժ է, որի առջև անգոր են, ուստի որոշում է երկիրը հանձնել բյուզանդացիներին և գաղթել Սեբաստիա¹⁴⁸:

Դրանից որոշ ժամանակ անց քաղաքական ճգնաժամի մեջ գտնվող Անիում վախճանաբանական տրամադրությունների խորացման առիթ են դառնում երկու անգամ տեղի ունեցած արևի խավարումն ու երկրաշարժը, որոնք ընկալվում են որպես մոտավորապես դժբախտությունների նախանշան: Ինչպես վերը նշեցինք, Անիի արքունիքում ցանկանալով իմանալ կատարվածի իմաստը, դիմում են Հովհաննես Տարոնացի Կոզեմն վարդապետին: Պահպանվել է նրա տեսիլքի բնագիրը՝ «Պատմություն նշանաց, որ եղեն ի գուշակս առաջիկա աուրցն, որ կատարեցաւ, ասացեալ սուրբ վարդապետին Յոհաննիսի Կոզման՝ հայոց վարդապետի», որը որոշ խմբագրմամբ մեջբերում է նաև Մատթեոս Ուռհայեցին¹⁴⁹: Դրանում նշված է 1030 թվականը, և ասվում է, որ Անիից գնացած իշխանները տեսնում են նրան գետնատարած ողբալիս, որից հետո վարդապետը ներկայացնում է իր չարագուշակ կանխատեսումները (որ արձակվել են սատանայի կապանքները՝ «գոր կապեալ էր Քրիստոս իւր սուրբ մկրտութեամբն» և այլն): Վարդապետը չի մոռանում նաև քննադատել իր ժամանակի բարքերն ու անարդարությունները¹⁵⁰:

Հովհաննես Կոզեմնն առիթ ունեցավ երկրորդելու իր գուշակությունները երեք տարի անց, Քրիստոսի Խաչելության 1000-ամյակին և այդ ժամանակ Սևան մեկնած իշխանների մեջ հիշվում է նաև Գրիգոր Մագիստրոսը (այդ մասին նշել ենք վերևում): Հատկանշական է, որ Հովհաննես Կոզեմնի մոայլ կան-

¹⁴⁸ Մատթեոս Ուռհայեցի, էջ 54-57:

¹⁴⁹ Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 79-82:

¹⁵⁰ Նույն տեղում էջ 80-81:

խատեսումները խորը հետք են թողել Հովհաննես Մմբատ թագավորի վրա¹⁵¹:

Հասկանալի է, որ Գրիգորն այս մթնոլորտի մեջ գտնվելով, նույնպես պիտի ազդվեր նմանօրինակ գուշակություններից: Հայ իրականության մեջ այդպիսի հիմնական տեսիլքներից մեկը՝ Գրիգոր Լուսավորչի տոհմից սերող վերջին կաթողիկոս Սահակ Պարթևի (387-436) տեսիլքն է: Դրա մեջ գալիք դժբախտությունների ներկայացումից բացի նաև մարգարեություն է արվում հեռավոր ապագայի մասին, որի մեկնությունը հետևյալն է. Արշակունիների թագավորությունն ու Գրիգոր Լուսավորչի տոհմից հայրապետությունը պիտի դադարեն գոյություն ունենալուց, սակայն, Հայոց աշխարհում փոթորիկների անցնելուց հետո, կրկին Արշակունի տոհմից մեկը թագավոր է դառնալու, և հայրապետական աթոռին նստելու է Գրիգոր Լուսավորչի շառավիղներից մեկը՝ «...**դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց եւ նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւելէ սրբոյն Գրիգորի**»¹⁵²:

Գրիգոր Մագիստրոսն անկասկած ծանոթ էր այս մարգարեությանը: Ավելին, այն հիշատակում է իր մի ծրագրային նամակներից մեկում (թուղթ ԺԸ), որտեղ Սարգիս Անեցուն ծանոթացնում է իր նպատակներին: Նամակը գրվել է Գագիկ Բ-ի հետ գժտության շրջանում (հավանաբար 1043 թ.): Մեզ հետաքրքրող

¹⁵¹ Այս եզրակացությանն է հանգում Էդդա Վարդանյանը Հովհաննես Մմբատի՝ Հոռոմոսի վանքում 1038 թ. կառուցած Ս. Հովհաննես եկեղեցու իր դամբարան - ժամատան գմբեթի մի մեծարժեք քանդակապատկերի ուսումնասիրությամբ, որը մի բարդ հորինվածք է՝ վախճանաբանական թեմայով, ու նաև հակաբյուզանդական ուղերձ է պարունակում (Horomos monastery: Art and History (Centre de recherche d'Histoire et Civilisation de Byzance, Monographies 50), Paris, 2015):

¹⁵² Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. Բ, Անթիլիաս, 2003, էջ 2232: Տես նաև՝ Գ. Մուրադյան, Սահակի տեսիլը Ղազար Փարպեցու «Պատմության» մեջ, Լևոն Խաչիկյան 90, Նյութեր ծննդյան 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի, Երևան, 2010, էջ 193-201:

հատվածի սկզբում Գրիգորը նշում է, որ թեև կարծես աշխարհի վերջը մոտեցել է՝ ըստ Դանիելի մարգարեության, Սահակ (Իսահակ) Պարթևի տեսիլքի կամ Մովսես Խորենացու ողբի, բայց ինքն իր կարողության չափով ջանք է թափել երկրի միասնությունը պահպանելու («ցանկակարկատ» լինելու) համար, և ի հակադրություն պառակտող՝ խրամատողների, փորձել է երկրի համար խնամակալ՝ հոգացող լինել։ «Թէւ ի վախճան ժամանակի հասեալ հանդիպեցաք, ըստ մարգարեութեանն Դանիելի, եւ կամ **ըստ մերոյն տեսւեանն Իսահակայ սրբոյ եւ քահանայապետի**, կամ ըստ սրբազանին Մովսէսի յիւրում սքանչելի տախտակի մարգարեական տառի, զողբս ի վերայ Հայաստանեայցս առնելով, սակայն, **ըստ իմում կարի, ոչ անտեղի տեսի սուղ ինչ ցանկակարկատ լինել**, քանզի զայսոսիկ որ խրամատենն, քանզի՝ «որ քակէ զցանկ հայրենի, աւճ հարցէ զնա» (Ժող. Ժ 8), ըստ աստուածայնոյն մարգարեութեան տեսողի։ Եւ սակս այս **ես ոչ խրամատել փութացայ, այլ խնամակալել**»¹⁵³։

1045 թվականից հետո Հայաստանն արդեն հայտնվել էր միանգամայն նոր իրողության առջև. Անիից վերացած էր թագավորությունը, երկրից հեռացված ու մեկուսացված էր կաթողիկոսը, կազմալուծված էր ազնվականական զինուժը։ Վախճանաբանական մռայլ կանխատեսումները կարծես իրականություն էին դարձել։ Բայց ինչպես երևում է, Գրիգոր Մազիստրոսը հավատացել է Սահակ Պարթևի տեսիլքի իրականացմանը՝ Պահլավունյաց տոհմից նոր կաթողիկոսի ի հայտ գալուն, և փորձել է նպաստել այդ կանխատեսման կատարմանը։ Թերևս այս է պատճառը, որ Անի-Շիրակից հեռու գտնվելով՝ նա որոշակի մասնակցություն է ունենում այնտեղ ծավալվող եկեղեցական կյանքին։ Հայտնի է, որ նա այս շրջանում կայսերական ոսկեկնիք հրովարտակներով առանձնաշնորհումներ է ձեռք բերում Մար-

¹⁵³ Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 296-297։

մաշենի և Կեչառիսի վանքերի համար¹⁵⁴, նամակագրական կապ պահպանում իր նախկին աշակերտների, վանական հայտնի միաբանությունների և հեղինակավոր հոգևորականների հետ, դպրոց բացելու երաշխավորությամբ Գրիգոր Հնձացի վարդապետին ուղարկում Կարսի Գագիկ Աբապյան թագավորի մոտ և այլն: Իսկ Տարոնի ամենանշանավոր Ս. Կարապետի վանքում իր Հրահատ գործակալի ձեռամբ կառուցել է տալիս գլխավոր եկեղեցու ժամատունը և մի եկեղեցի Ս. Գրիգոր անունով¹⁵⁵: Հայ եկեղեցու միասնականությանն ուղղված Գրիգոր Մագիստրոսի ջանքերից պիտի համարել նաև նրա կոշտ պայքարը թոնդրակեցիների դեմ: Այս բոլոր գործերը նա կատարում էր արդեն որպես Պաիվավունի, Գրիգոր Լուսավորչի տոհմի շառավիղ, և այդպես էր ճանաչվում ու ընկալվում ամբողջ երկրում:

Գրիգոր Մագիստրոսի թղթերի մեջ կա կարճ մի գրություն, որը նրա պատգամն է որդուն՝ «Առ վեստն Վահրամ, որդին իւր» (թուղթ ԶԴ): Այն յոթ երկար տողերով ծայրակապ է, որոնցից առաջին վեցի սկզբնատառերով հոդվում է ՎԱՀՐԱՄ անունը, իսկ բովանդակությամբ՝ դրանք դրվատանքի ու խրատի խոսքեր են: Վերջին տողը կարելի է համարել Գրիգոր Մագիստրոսի կտակը որդուն՝ **«Եւ փոխարէնս հայցեմ ի քէն զաւանդութիւնն մեր ոչ մոռանալ երբէք եւ զփոյթ սիրոյն առ Քրիստոս Աստուած մեր եւ զոյս ճրագի նախնւոյն մերոյ ոչ շիջուցանել, զՊարթեւին ասեմ՝ քոյոյ հաւուն»**¹⁵⁶:

¹⁵⁴ Տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 328, Կ. Մաթևոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 138-149:

¹⁵⁵ Արիստակես Լաստիվերցի, էջ 118:

¹⁵⁶ Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, էջ 312: Գրիգոր Մագիստրոսի այս վստահ պնդումը զարմանալի է թվում, եթե նկատի ունենանք, որ նրա դստեր թոռը՝ Ներսես Շնորհալին, իրենց տոհմական ծագման մասին առինքնող անկեղծությամբ հետևյալ տողերն է թողել. «Մա-կայն բնութիւն ազգին պահեալ, Որ Պաիլաիկն կոչեցեալ, Թէեւ թագուն իմն ամփոփեալ, Յոամիկ ազանց միջի ծածկեալ, Միայն ինքեանք ներհուն եղեալ, Որ յայնմ ազգէ գոյով սերեալ, Որդին՝ ըզ-

Փաստորեն, Գրիգոր Մագիստրոսը որդուն պատգամում է հայկական ավանդությունները երբեք չմոռանալ և իրենց նախնու՝ Գրիգոր Լուսավորչի (որին Վահրամի պապ է կոչում) «ճրագի լույսը չմարել»։ Այս վերջին խոսքերն արդեն որոշակի պահանջ են, քանի որ ճրագը չմարել կամ վառ պահել, Գրիգոր Լուսավորչի պարագայում, նշանակում է շարունակել նրա գործը՝ Հայոց կաթողիկոսության առաջնորդումը։ Որդուն այս պատվիրանը տալուց առաջ Գրիգորն իր հերթին, երկարատև և նպատակամղված գործունեությամբ կարողացել էր հայ հանրության սեփականությունը դարձնել **Գրիգոր Լուսավորչի տոհմից՝ Պահլավունի կաթողիկոս ունենալու սահակապարթևյան տեսիլքի գաղափարը**։ Այդ ծրագրի իրագործումը Գրիգոր Մագիստրոսը չտեսավ, քանի որ մահկանացուն կնքեց 1056 կամ 1058 թ.։

Վահրամը հավանորեն հաշվի առել է հոր ցանկությունը, բայց չի բացառվում, որ այնքան էլ հակված չէր աշխարհական իշխանի հագուստը փոխել կրոնական, թեկուզ կաթողիկոսական հանդերձանքի հետ։ Սամվել Անեցու Ժամանակագրության երկու ձեռագրերում եղած, վերջերս հրատարակված հավելումների մեջ ուշագրավ տեղեկություն ենք գտնում Վահրամի՝ հայրապետական աթոռին նստելու մասին. «Տեր Գրիգորիս որդի Գրիգորի Մագիստրոսի թողեալ զհայրենի պատիւն, հետեւեցաւ կրօնաւորութեան եւ **բռնադատեալ նստուցաւ յաթոռ հայրապետութեան** եւ Վկայասէր անուանեցաւ...»¹⁵⁷։ Մյուս, ավելի հանգամանալից տեղեկության մեջ որպես այս ձեռնարկի կազմակերպիչ և Վահրամին փնտրող ու համոզող է հանդես գալիս Կարսի Գագիկ Աբասյան թագավորի դուստր Մարիամը. «...վտարեցաւ աթոռ հայրապետութեան ի Մերաստիայ եւ խափանեցին Յոյնք

հայր փոխանակեալ, / Մինչեւ առ մեզրս հասուցեալ» (Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 12)։

¹⁵⁷ Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 191։ Տեղեկությունը Մատենադարանի թիվ 3613 ձեռագրից է։

ձեռնադրել կաթողիկոս Հայոց, մինչև Մարիամ՝ դուստր թագաւորին Գագկա մեծաւ աղաչանաւք խնդրեաց յարքայէն Հոռոմոց եւ նայ լուաւ աղաչանացն Մարիամու: **Եւ առաքեաց Մարիամ, խնդրեաց եւ եգիտ զԳրիգորիս՝ զորդի Գրիգորի Մագիստրոսի՝ Պահլաւունի ազգաւ: Սա թողեալ զհայրենի պատիւն, կրաւնաւորութեան հետեւեցաւ եւ բռնադատեալ զսա բազում աղաչանաւք նստուցին յաթոռ հայրապետութեան»**¹⁵⁸:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ Գրիգոր Մագիստրոսն այնքան հիմնավոր հող էր նախապատրաստել Վահրամի կաթողիկոսացման համար, որ նրան այլ բան չէր մնում, քան, անգամ հոր մահից շուրջ 10 տարի անց, ենթարկվել նրա կամքին, քանի որ այն արդեն դարձել էր նաև հանրային պահանջ: Այս ամենի եկեղեցաբանական հիմնավորումն էլ ձևակերպել է Մատթեոս Ուռհայեցին, գրելով՝ «**Զսա (Վահրամին – Կ. Մ.) յայտնեաց Հոգին Սուրբ նստել յաթոռ Սուրբ Լուսաւորչին Գրիգորի՝ նախնւոյն իւրոյ...**»¹⁵⁹:

Վահրամը կաթողիկոս դարձավ 1066 թ.՝ օծումից հետո Գրիգոր կամ Գրիգորիս անունը ստանալով: Գրիգոր Լուսավորչից հետո նա երկրորդ կաթողիկոսն էր այդ անունով:

Զափազանց հետաքրքրական է 1077 թ. Գրիգոր Վկայասերի հիշատակարանը, որտեղ նա կարծես մի հետադարձ ուղերձ է հղում հորը, իր ծագման ու աթոռակալության հիմնավորման մասին գրելով հետևյալ խոսքերը՝ «...**եւ Գրիգորիս, որդի Գրիգոր Պալիաւունոյ, ողորմութեամբ մեծին Աստուծոյ արժանացեալ աթոռաց հաւոյն իմոյ սրբոյն Գրիգորի, եւ ըստ յառաջատես տեսլեան սրբոյն Սահակայ**»¹⁶⁰: Սա Գրիգոր Մագիստրոսի ծրագրի ու հայրական պատգամի փայլուն իրագործումն էր:

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 190, Վենետիկի թիվ 959 ձեռագրից:

¹⁵⁹ Մատթեոս Ուռհայեցի, էջ 168:

¹⁶⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 109:

Գրիգոր Բ Վկայասերի ժամանակ (1066-1105)¹⁶¹ նրա համաձայնությամբ կաթողիկոսական օծում ստացավ նրա քրոջ որդին՝ Բարսեղ Ա Անեցին¹⁶² (1081 թ.), որը նրանից հետո ժառանգեց աթոռը (1105-1113 թթ.), բայց նաև մահվան մահճում գտնվող Վկայասերի պատվիրանը ստացավ, թե իրենից հետո ում պիտի կաթողիկոսական գահը փոխանցի: Վկայասերը Բարսեղի հոգևոր խնամքին հանձնեց իր մյուս քրոջ (և իշխան Ապիրատի) որդի Գրիգորին՝ հանձնարարելով, որ հաջորդ կաթողիկոսը նա պիտի դառնա¹⁶³: Երբ 1113 թ. մի դժբախտ պատահարի հետևանքով Բարսեղ Անեցին մահացու վնասվածք ստացավ, հիշյալ Գրիգորը դեռ շատ երիտասարդ էր (Մատթեոս Ուռհայեցու խոսքերով՝ «ի տղայութեան հասակին»)¹⁶⁴, սակայն վերջինիս Պահլավունի լինելն ու Վկայասերի կամքն այնքան զորավոր նկատվեցին, որ նախ Բարսեղի ձեռքով եպիսկոպոսական ձեռնադրություն ստացավ, իսկ կաթողիկոսի մահից հետո, այդ վաղ տարիքում արժանացավ կաթողիկոսական օծման:

Հայ եկեղեցու պատմության մեջ աննախադեպ երկար՝ 53 տարի գահակալած և Գրիգոր Գ Պահլավունի (1113-1166) անունով¹⁶⁵ հայտնի այս հայրապետից հետո (որի ժամանակ հաստա-

¹⁶¹ Գրիգոր Վկայասերի կյանքին ու գործունեությանը հանգամանորեն և նորովի անդրադարձել է պատմական գիտությունների թեկնածու Վահե Թորոսյանը, որի ուսումնասիրությունը կիրառարական առաջիկայում:

¹⁶² Բարսեղ Ա Անեցու հայրը Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի որդի Վասակն էր, մայրը՝ Գրիգոր Մագիստրոսի դուստրը:

¹⁶³ Մատթեոս Ուռհայեցի, էջ 326-327:

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 360:

¹⁶⁵ Հայոց կաթողիկոսները սովորաբար մականվանվում են ըստ իրենց ծննդավայրի: Գրիգոր Գ-ի պատվերով իր ժամանակագրությունը գրած Սամվել Անեցին նրա ծագման մասին նշում է. «Վախճանեցաւ տէր Բարսիղ հայրապետն Հայոց, եւ յաջորդէ զաշտիճանն տէր Գրիգորիս մեծաշուք պատուով նստեալ յաթոռ վիճակի Սրբոյն Գրիգորի Հայաստանեայցս յուսարոյցի, որ յազգէ նորուն հարազատութեան ճանաչի» (Սամուել Անեցի եւ շարունակողներ, էջ 203):

տուն կաթողիկոսանիստ դարձավ Կիլիկիայից արևելք գտնվող Հռոմկլա ամրոցը), առանց հատուկ կաթողիկոսական ընտրության աթոռն անցավ նրա եղբորը՝ Ներսես Դ Կոյսեցուն կամ Շնորհալուն (1166-1173), այնուհետև սրանց Վասիլ եղբոր որդի Գրիգոր Դ Տղային (1173-1193), իսկ նրա մահից հետո՝ Վասիլի դստեր որդի Գրիգոր Ե Քարավեժին (1194): Նույն տոհմից հաջորդ և վերջին կաթողիկոսն էլ Վասիլի եղբայր Չորավարի որդի Գրիգոր Չ Ապիրատն էր (1194-1203)¹⁶⁶: Հայոց կաթողիկոսական գահին Պահլավունիների այս ժառանգականության շքերթը (որը քննադատվում էր ինչպես երկրի ներսում, այնպես էլ այլ եկեղեցիների կողմից), վերջ գտավ միայն Կիլիկիայի Հայոց առաջին թագավոր Լևոն Ա-ի (1198-1219) միջամտությամբ¹⁶⁷:

¹⁶⁶ Հին և նոր Պահլավունի կաթողիկոսների գահակալության մասին հետաքրքիր դիտարկում է կատարել Ղևոնդ Ալիշանը՝ «Կաթողիկոսունք, որը սկսեալ ի Վահրամայ-Գրիգորէ Բ, որդւոյ Գրիգ. Մագիստրոսի, ի 1065 ամէ, մինչև ի Գրիգ. Չ Ապիրատ՝ ցամն 1203, զիրար յաջորդեցին եօթն կաթողիկոսք 138 տարի. ինչպէս որ զարմանալի հանդիպութեամբ իրենց նախորդք և նախահարքն ալ՝ ի Դ և Ե դարուս, սկսեալ ի Ս. Լուսաւորչէն՝ յամի 302, մինչև ի Ս. Սահակ՝ ցամն 439, ընծայեցին եօթն կաթողիկոս և յաջորդեցին ի միջոցի նոյնչափ 138 տարիներու: Այսպէս, կերպով մը, յետ 626 տարիներու կատարեցաւ մարգարէութիւնն, կամ խոստումն Աստուծոյ առ Ս. Սահակ, թէ իր ցեղէն նորէն քահայնայապետք պիտի ըլլան Հայոց» (Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 14-15):

¹⁶⁷ Ըստ Գ. Մագսուտյանի. «Հայրապետական աթոռի ժառանգական իրավունքը փրկել է եկեղեցու նվիրապետությունը շատ բարդ և խճճված ժամանակաշրջանում: Կիլիկյան թագավորության հաստատումը և արքունիքի կողքին եկեղեցական հաստատության առաջացումը անգործածական դարձրին հայրապետական աթոռի ժառանգական իրավունքը» (Գ. Մագսուտյան, նշվ. աշխ., էջ 86): Լևոնը Պահլավունի կաթողիկոսների դեմ քայլեր է ձեռնարկել դեռևս Կիլիկիո իշխան եղած ժամանակ (տե՛ս Գրիգոր Տղա (բանաստեղծություններ և պոեմներ), աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի, Երևան, 1972, էջ 24-30): Պահլավունի կաթողիկոսներին հաջորդած Հովհաննես Չ Սսեցին (1203-1221) Հռոմկլայում ոչնչացրել, ձուլել է տվել Պահլավունի կաթողիկոսների ոսկե և արծաթե եկեղեցական ճոխ զարդերը, խաչերը, անգամ ձեռագրերի թանկագին կրկնակազմերը, որի մասին գրում է ականատես Մմբատ Սպարապետը (Տարեգիրք Մմբատայ Սպարապետի, Փարիզ, 1856, էջ 114-115):

Ամփոփելով կարող ենք ասել, որ նախ Վահրամ սպարապետի և նրա եղբայր Արդարիբ մարզպանի միջոցով բարձրաձայնվեց այս տոհմի Պահլավունի և Գրիգոր Լուսավորչի շառավիղ լինելու մասին, որն ավելի հիմնավորվեց ու տարածում գտավ Գրիգոր Մազիստրոսի ջանքերով: Անիի թագավորության անկումից և կաթողիկոսական աթոռի տարագրումից հետո, բյուզանդացիների վստահությունը վայելող և Հայաստանում ազդեցիկ դիրք ունեցող Գրիգոր Մազիստրոսն ավելի նպատակամղված քայլերի դիմեց կաթողիկոսական աթոռի նկատմամբ Պահլավունյաց տոհմի հավակնությունն իրականություն դարձնելու ուղղությամբ: Չնայած այդ մտահոգումը կյանքի կոչվեց Գրիգոր Մազիստրոսի մահից հետո, սակայն՝ հենց նրա որդու՝ Վահրամի աթոռակալությամբ, և գործադրվեց շատ երկար ժամանակ, ընդհուպ մինչև 13-րդ դարի սկիզբը: Ճիշտ է, Վահրամ-Գրիգոր Վկայասերի մահից հետո կաթողիկոսական աթոռն անցավ միայն մայրական գծով Պահլավունիներին (Գրիգոր Մազիստրոսի դուստրերի սերունդներին), որոնք ոչ պատահականորեն գահակալելիս հիմնականում Գրիգոր անունն էին կրում, սակայն իրողությունն այն է, որ վերջիններիս ժառանգական աթոռակալության համար գլխավոր հաղթաթուղթը Պահլավունի տոհմանունն էր:

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՈՐԴԻ ԱԲՈՒՂԱՄԻ (ԱՆԻԻ ԳՐԻԳՈՐ Ա ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍ)

Գրիգոր Մագիստրոս անունով գործիչ է հիշատակվում 13-րդ դարի սկզբների մի քանի աղբյուրներում: 1232 թ. Չաքարե և Իվանե Չաքարյանների քեռորդի Խոռասի պատվերով Հռոմոնսի վանքում գրված, հետագայում «Բագնայրի Ավետարան» անունն ստացած մատյանի (Մատենադարան, ձեռ. 1519) գլխավոր հիշատակարանում նշվում է, որ այն նվիրվել է Բագնայրի վանքին՝ «...ի Բագնայրն կոչեցեալ վանք, ի տէրութեան տեղոյ **Գրիգորայ, որ Մագիստրոսն ասի**, վերադիտող աթոռոյս Անույ...»¹⁶⁸:

Ո՞վ է այս Գրիգորը, որին «Մագիստրոս են ասում», և որը ոչ միայն Բագնայրի տերն է, այլև Անիի եպիսկոպոսական աթոռի վերադիտողը (աթոռակալը): Մեկ տարի անց՝ 1233 թ. Բագնայրի մի նվիրատվական արձանագրության մեջ նշվում է նաև նրա հոր անունը. «Ի թուխ ՈԶԲ (1233) շնորհիւն Քրիստոսի, ի տէրութեան տեղոյս **Գրիգոր Մագիստրոսի, որդոյ Ապուղամբի...**»¹⁶⁹: Իսկ 1239 թ. Անիի նոր եպիսկոպոս Ամիր Երկաթի որդի Բարսեղի արձանագրության մեջ ասվում է, որ քաղաքի Ս. Ստեփանոս եկեղեցին՝ իր համայնքով հանդերձ, այնուհետև ևս պետք է պատկանի Մարմաշենին, ինչպես որ ժամանակին տնօրինել էր **Գրիգոր Մագիստրոսը**, որն իր Ղարիբ (Խարիփ) եղբոր հետ միասին թաղված է այնտեղ. «...ես Բարսեղ արքեպիսկոպոս, որդի Ամիր Երկաթայ, առաջնորդ մայրաքաղաքիս Անոյ, հաստատեցաք ի մեր սեփական ժառանգութենէս զՍուրբ Ստեփանոս՝ հայրենիք սուրբ ուխտին Մարմաշինոյ վանիցն, սիրատեսիլ Սուրբ Կաթողիկէին, զոր Մագիստրոսն Գրիգոր շնորհեալ եւ

¹⁶⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 179:

¹⁶⁹ Ն. Մարգիսեան, նշվ. աշխ., էջ 185:

հաստատեալ էր, ընդ որոյ հովանեաւ ինքն եւ եղբայր իւր Խարիի կան հանգստարանի, որպէս եւ իւր գրեալքն բացայայտեն»¹⁷⁰:

Այս երեք թվականներին (1232, 1233, 1239) **Գրիգոր Մագիստրոս** անունով գործչի հիշատակումը որոշ ուսումնասիրողների ենթադրել է տվել, թե եղել է այդպիսի մեկը՝ որպէս «իշխան Շիրակի»¹⁷¹: Կ. Բասմաջյանը նրան կոչում է «փոքր Գրիգոր Մագիստրոս»¹⁷²: Ն. Ակինյանը, որն Անիում Պահլավունիների վերջին շառավիղներին առավել հանգամանորեն անդրադարձած հեղինակն է, Գրիգորին նշում է միայն նրա Մագիստրոս մականունով՝ «Ապուղամր եւ որդիք Գրիգոր Մագիստրոս եւ Ղարիբ»¹⁷³ ենթավերնագրի տակ՝ վկայաբերելով Մարմաշենում նրանց թողած մեծ արձանագրությունը, Բագնայրի մի քանի արձանագրությունները, ինչպէս և «Բագնայրի Ավետարանի» 1232 թ. հիշատակարանը, բայց զանց առնելով Անիի ու շրջակայքի բազմաթիվ այլ արձանագրությունները, որոնցից ակնհայտորեն երևում է, որ Անիի արքեպիսկոպոս Աբուղամրի որդի Գրիգորը նույն Գրիգոր Մագիստրոսն է (որդի Աբուղամրի): Պարզապէս նա Մագիստրոս է կոչվել կյանքի վերջում՝ իր անվանն ավելացնելով եղբոր՝ 1225-ին պատերազմում նահատակված Ղարիբ Մագիստրոսի պատվանունը, թերևս նաև վերապահելով նրա աշխարհական իրավասությունները:

ՏՈՀՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Աբուղամրի որդի Գրիգորի (Մագիստրոս) տոհմական ծագման մասին պատկերացում է տալիս Մարմաշենի վանքում 1225 թ.

¹⁷⁰ Դիվան, Ա, էջ 17:

¹⁷¹ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 574, Գ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, էջ 8:

¹⁷² Կ. Բասմաջեան, Հայերէն արձանագրութիւնք Անույ, Բագնայրի եւ Մարմաշինու, Պարիս, 1931, էջ 216, 225:

¹⁷³ Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 398:

գրված ընդարձակ արձանագրությունը: Պարզվում է, որ Վահրամ Պահլավունու 1029 թ. հիմնած այս վանքը սելջուկյան տիրապետության շրջանում լքված է եղել, անգամ որոշ մարդիկ գլխավոր եկեղեցին բնակարան են դարձրել, և ահա Շիրակի ու Անիի Չաքարյանների ձեռքն անցնելուց հետո ի հայտ եկած այս տոհմը, իրեն Վահրամ Պահլավունու սերունդ համարելով, նորոգել, ծաղկեցրել է վանքը: Արձանագրության մեջ մասնավորապես ասվում է. «Ի ժամանակս... պատրոնաց մերոց աթաբակ Իւսանէի եւ մանդատորթա խուցես Ճահնշահի, հրամանաւ սոցին վերստին նորոգումն եղեւ հրաշափառ տաճարի... կաթողիկէիս Մարմաշինոյ, ի ձեռն որդւոց **Ապուղամր Մագիստրոսի՝ տէր Գրիգորոյ արհիէպիսկոպոսի** եւ հարազատի իմոյ **Խարփին՝ թոռանց Վարհամա իշխանաց իշխանին**, զարմից եւ շառաւելոյ Սրբոյն Գրիգորի...»¹⁷⁴: Այնուհետև նշվում է տեղի ավերակ վիճակի մասին («զվանքս գեղ արարեալ»), և որ իր եղբայրը, այդտեղ բնակվող շինականներին դուրս անելով, վանքին վերադարձրել է նախկին փառավոր դիրքը, որից հետո երկուսով բազմաթիվ ընծաներ են տվել՝ ոսկե ու արծաթե սպասք, չին ու Նոր Կտակարաններ, Անիի Ս. Ստեփանոս եկեղեցին իր համայնքով¹⁷⁵, ամբողջ գյուղեր, այգիներ և այլն: Արձանագրության երկրորդ մասում նշվում է Ղարիբի մահվան ու Մարմաշենում թաղվելու մասին. «...գեղեցկագեղ եղբայրն իմ **Խարփի Մագիստրոսն...** մարտիրոսացաւ ի պատերազմի անաւրինաց... զմարմին նորա բերեալ թաղեցաք առ դրան սրբոյ Կաթողիկէիս մերձ առ նշխարս հաւուն մերոյ Վարհամա իշխանի», իսկ վերջում Գրի-

¹⁷⁴ И. Орбели, նշվ. աշխ., 443, Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 150-151:

¹⁷⁵ Մինչ այդ Ս. Ստեփանոս եկեղեցին պատկանել է Անիի եպիսկոպոսական աթոռին, որին էլ վերադարձվել է 1288 թ. (Դիվան, Ա, 29): Այս բավական մեծ համայնք ունեցող եկեղեցին գտնվել է Անիի Կարսի դարպասից ոչ հեռու: Նրա տեղը հնարավոր է եղել ճշտել վիմագիր արձանագրությունների հիման վրա (Տե՛ս Կ, Մաթևոսյան, Անի, էջ 342-344):

գոր եպիսկոպոսը պարտավորեցնում է Մարմաշենի սպասավորներին այդուհետև տարվա բոլոր կիրակիներին Ավագ խորանում պատարագել եղբոր հոգու համար՝ «յանուն նահատակին Քրիստոսի՝ Խարփին... մինչ ի ծագումն Որդոյն Աստուծոյ...»¹⁷⁶:

Ղարիբ Մագիստրոսը գոհվել էր 1225 թ. օգոստոսին Խորեզմի շահ Ջալալ ադ-Դինի գորքերի դեմ տեղի ունեցած Գառնիի ճակատամարտում, որտեղ Իվանն այթաբեկի գլխավորած հայ-վրացական զորքը պարտություն կրեց: Ինչպես երևում է, Մարմաշենի արձանագրությունը գրվել է այդ դեպքից անմիջապես հետո (քանի որ նույն 1225 թվականն ունի):

Այսպիսով, տեսնում ենք, որ Ապուղամր Մագիստրոսի որդիները՝ Գրիգորն ու Ղարիբն իրենց համարել են սպարապետ Վահրամ Պահլավունու թոռներ (թոռնորդիներ) և պատերազմում գոհված Ղարիբն էլ թաղվել է իրենց պապի՝ Վահրամի նշխարների մոտ: Դժվար է ասել, թե արդյո՞ք ուղիղ գծով է եղել տոհմական կապը: Կարելի է ենթադրել, օրինակ, որ Վահրամ Պահլավունու Աբուղամր որդու սերնդից է եղել վերոնշյալ Ապուղամր Մագիստրոսը: Հնարավոր է նաև, որ այդ կապը եղած լինի իզական գծով կամ ազգակցական այլ եղանակով, սակայն իրողությունն այն է, որ այս նոր Պահլավունիները 13-րդ դարի առաջին քառորդում իրենց հոչակում են 1045 թ. գոհված Վահրամ Պահլավունու թոռներ՝ չմոռանալով ընդգծել, որ վերջինս էլ Գրիգոր Լուսավորչի զարմից էր: Իհարկե, այդ հոչակումը ենթադրում է նաև տոհմական ժառանգական իրավունքների վերադարձ, որին էլ, ինչպես կտեսնենք, նպատակամղված է եղել Գրիգոր եպիսկոպոսի գործունեությունը:

Հավանաբար 1180-ական թվականներին ծնված այս գործիչն առաջին անգամ հիշվում է Անիի մերձակա Արջո Առիճի վանքում 1213 թ., երբ Հոռոմեանց Կոստանդի որդի Հովհաննես քահա-

¹⁷⁶ И. Орбели, նշվ. աշխ., 443:

նան, միաբանելով այդ վանքին, նվիրատվություն է կատարում «ի սուրբ Աստուածածինս, **ի ձեռն տէր Գրիգորի, որդոյ Ապուղամբի**»¹⁷⁷: Երկրորդ անգամ Գրիգորը հիշվում է Անիի մերձակա մեկ այլ նշանավոր վանքում՝ Բագնայրում, որը նա կոչում է «մեր սեփական ուխտս», և որտեղ 1215 թ. մի կանոնագիր-արձանագրություն է թողել՝ սահմանելով մահացած հոգևորականների համար մատուցվող պատարագների քանակը¹⁷⁸: Հավանաբար հենց նույն ժամանակ, նույնիմաստ արձանագրություն գրվել է նաև Արջո Առինում «հրամանաւ Գրիգորոյ եպիսկոպոսի, որ էր ժառանգորդ Սուրբ Ուխտիս...»¹⁷⁹: Բագնայրի 1215 թ. մեկ այլ արձանագրություն վկայում է, որ Գրիգորն ինչ-որ բան է վաճառել Հռոմեանց Կոստանդի որդի Հովհաննեսին, որն իր հերթին այն նվիրել է վանքին¹⁸⁰:

Հաջորդ՝ 1216 թվականին Անիում գրված արձանագրությունից երևում է, որ այդ ժամանակ Գրիգորն արդեն Անիի ու Շիրակի եպիսկոպոսն էր: Քաղաքի եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու պատին գրված այդ արձանագրությամբ նա վերացնում է մահացածների համար եպիսկոպոսական աթոռի օգտին զանձվող «հոգու հարկը», որը 11 դրամ էր կազմում: «Թուականին ՈԿԵ (1216) շնորհին Աստուծոյ **ես տէր Գրիգոր որդի Ապուղլամբի ժառանգորդ սեփական հայրենի Աթոռոյս մայրաքաղաքիս Անիո, արհիեպիսկոպոս այսմ նահանգի, թողի զհարկն հոգոյս զոր ի սկզբանէ սահման էր յամենայն մեռելէ ԺԱ (11) դրամ տալ ի փարթամաց եւ աղքատաց առհասարակ միապէս արնով մինչեւ ի գալն Զրիստոսի: Արդ ես յաղագս Աս-**

¹⁷⁷ Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 190:

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 183

¹⁷⁹ Նույն տեղում, էջ 191:

¹⁸⁰ «ՈԿԴ (1215) ի յամն աստուածապատիւ հոգևոր տեառն Գրիգորոյ, որդոյ Ապուղամբին, ես Յոհանէս քահանայ... գնեցի... ի կէսն ի տէր Գրիգորոյ, որդոյ Ապուղամբին եւ ետու ի Սուրբ Աստուածածինս...» (նույն տեղում, էջ 183):

տուժոյ ընտրեալ պարոնին մերո տեառն քաղաքիս ամիրսպասալար շահնշահ Չաքարիաի փոխեցելոյն առ Քրիստոս, եւ վասն յերկարկենդանութեան հարազատի իւրո Իւանէի, եւ որդո նորա Շահնշահ Սարգսին, աստուածասէր իշխանացս Հաոց ազգատոհմիս եւ վասն հոգոց ննջեցելոց մերոց, բարձի զայս հարկս...»¹⁸¹:

Այս արձանագրության մեջ Գրիգորը պարզորոշ ընդգծում է, որ հանդիսանում է Անիի աթոռի «ժառանգորդը», որը կոչում է «սեփական» և «հայրենի»: Նա մի շարք այլ արձանագրություններում ևս նման ձևակերպում է օգտագործում: Լմբատավանքի անթվական արձանագրության մեջ գրում է. «Այս մեր արձանանջնջելի եւ յիշատակ մշտնջենաւոր **տեառն Գրիգորոյ արհիեպիսկոպոսի մայրաքաղաքին Անոյ եւ նահանգին Շիրակայ, ժառանգորդ եւ սեփական մերոյ աթոռոյս...**»¹⁸², իսկ 1227 թ. Անիում՝ «Ես տէր Գրիգոր արհիեպիսկոպոս մայրաքաղաքիս Անո եւ **ժառանգորդ սեփական հայրենի աթոռոյս մերո...**»¹⁸³: Անիի նախորդ եպիսկոպոսներից ոչ մեկը, որոնք Հասանյան (Ապիրատյան) տոհմի ներկայացուցիչներ էին, երբևէ այդպես չեն շեշտում իրենց «ժառանգական իրավունքը»: Արդ, տեսնենք թե ինչպիսի վիճակում էր Անիի եպիսկոպոսությունը մինչև Գրիգորը, և ինչ հանգամանքներում է նա տիրացել աթոռին:

ԱՆԻԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՐԸ ՄԻՆՉԵՎ ԳՐԻԳՈՐԸ

1046 թ. Պետրոս Ա (Գետադարձ) կաթողիկոսի, իսկ քիչ անց նաև Խաչիկ Անեցու՝ բյուզանդական պարտադրանքով Անիից հեռանալուց հետո տեղի կաթողիկոսությունը փաստացի լուծարվում է: Բյուզանդական կարճատև տիրապետությանը հա-

¹⁸¹ Դիվան, Ա, էջ 14:

¹⁸² Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 165:

¹⁸³ Դիվան, Ա, էջ 18:

ջորդում է սելջուկյան ներխուժումը (1064 թ.), և Անին անցնում է Շաղդադյան Մանուչե ամիրային (որի մայրը Աշոտ Դ-ի դուստրն էր): Վերջինս Անի է վերադարձնում այստեղից հեռացած հայ ազնվականների Հասանյան (Ապիրատյան) տան ներկայացուցիչներին՝ Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի որդի Վասակին (նրա կինը Գրիգոր Մագիստրոս Պահլավունու դուստրն էր) և սրա որդի Գրիգոր իշխանին, որն իր գործով ծառայության է անցնում ամիրայի մոտ:

1072 թ. Անի է գալիս կաթողիկոս Գրիգոր Վկայասերը, որից անեցիները նշանակալի արդյունք են քաղում, քանի որ կաթողիկոսն այստեղ եպիսկոպոս է ձեռնադրում նույն Վասակի և իր քրոջ որդի Բարսեղին (Գրիգոր իշխանի եղբորը)՝ նրան օծելով «ընդարձակ իշխանութեամբ հսկողութեան Հայաստանի գաւառներու վրա իբր կաթողիկոսական փոխանորդ...»¹⁸⁴: Փաստորեն, այս քայլն Անիի եպիսկոպոսության հիմնադրման սկիզբը դարձավ:

Դրանից որոշ ժամանակ անց՝ 1081 թ., Գրիգոր Վկայասերի համաձայնությամբ Բարսեղը Հաղբատում հանդիսավորապես ձեռնադրվում է Հայոց կաթողիկոս ու փառավոր երթով ուղևորվում Անի: Կարճ ժամանակով վերականգնվում է Անիի կաթողիկոսական աթոռը: 1105 թ. Բարսեղ Ա Անեցին գալիս է Կիլիկիայի սահմանամերձ Քեսունի հայկական իշխանություն՝ Կարմիր վանք, որտեղ մահամերձ Գրիգոր Վկայասերը նրան հայտնում է իր վերջին կամքը, ըստ որի Բարսեղից հետո Հայոց կաթողիկոս պետք է ձեռնադրվի իր մեկ այլ քրոջ թոռը՝ Գրիգորը: Օրեր անց Գրիգոր Վկայասերը մահանում է, Բարսեղը դառնում է միանձնյա աթոռակալ ու այլևս Անի չի վերադառնում: 1113 թ. մայիսին դժբախտ պատահարի զոհ է դառնում Բարսեղ Անեցին, և աթոռն անցնում է Գրիգոր Գ Պահլավունուն:

¹⁸⁴ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1507:

Թե Բարսեղ Ա-ին Անիում անմիջականորեն ո՛վ է հաջորդել որպես եպիսկոպոս, հայտնի չէ: Անիի հաջորդ եպիսկոպոսը, որը պատմության մեջ հայտնի է **Բարսեղ Բ Անեցի** անունով, առաջին անգամ հիշատակվում է 1160 թ. քաղաքի պարսպի բուրգերից մեկի շինարարական արձանագրության մեջ: Նա Բարսեղ Ա Անեցու եղբայր Գրիգոր իշխանի որդի Հասան Մագիստրոսի որդին էր:

Տարբեր վկայություններից դատելով, Բարսեղ Բ Անեցին լավ հարաբերություններ էր պահպանում ինչպես Վրաց թագավորների, այնպես էլ Անիի Շադդադյան ամիրաների ու տեղի մահմեդականների հետ¹⁸⁵: Հայտնի է, որ 1174 թ. Բարսեղը Վրաց թագավորի օգնությամբ գերությունից փրկագնել է եղբորը՝ իշխան Ապիրատին (Գրիգոր Ապիրատ): Նրա օրոք Անիում ու նրա շրջակայքում վերելք է ապրում հոգևոր եկեղեցական կյանքը, կառուցվում ու նորոգվում են բազմաթիվ եկեղեցիներ: Հավանորեն այս ժամանակ է կառուցվում Անիի եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու շքեղ գավիթը, ուր 1184 թ. իր և ծնողների հիշատակին նվիրված խաչքար է կանգնեցնում Բարսեղը¹⁸⁶: 1186 թ. անեցիները մահմեդական ավագաններից գեներլ ուժով գրավում են Ծառաքարը (Մաղասբերդ), որը Բարսեղի տոհմական սեփականությունն էր¹⁸⁷: 1191 թ. նա մահմեդականներից գնում է Լմբատավանքը¹⁸⁸:

Բարսեղ Բ Անեցին բարդ հարաբերություններ ուներ Հռոմկլայի արքոռի հետ¹⁸⁹: Գրիգոր Դ Տղայի, ապա Գրիգոր Ե Քարավե-

¹⁸⁵ Ներսես Լամբրոնացին Կիլիկիայի Լևոն Բ իշխանին գրած թղթում Բարսեղին պարսավում է Անիի մահմեդական իշխանավորների հետ ջերմ հարաբերություններ ունենալու համար, նաև նշում նրա ազատ վարք ու բարքը, խնջույքների ու հանդեսների մասնակցելը:

¹⁸⁶ Դիվան, Ա, էջ 31 :

¹⁸⁷ Վարդան Արևելցի, էջ 136:

¹⁸⁸ Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 164:

¹⁸⁹ 1177 թ. քյուզանդական Մանուել Ա Կոմնենոս կայսրից հույն և հայ

ժի մահից հետո (1193 և 1194 թվականներ) նա կաթողիկոսության համար առաջ է քաշում իր թեկնածությունը, սակայն մերժվում է հիմնականում կիլիկյան հոգևորականության կողմից: Հյուսիսային Հայաստանի հոգևորականության շրջանում աստիճանաբար խորանում է օտար ազդեցություններից ու դավանաբանական վեճերից զերծ սեփական կաթողիկոսական աթոռ ունենալու համոզմունքը:

1194 թ. վերջերին Ստում գումարվում է եկեղեցական ժողով, որը Կիլիկիո իշխան Լևոն Բ-ի ցանկությամբ կաթողիկոս է ձեռնադրում Գրիգոր Չ Այիրատին (1194-1203): Ընտրությունը կատարվում է առանց բուն Հայաստանի հոգևորականների կարծիքը հաշվի առնելու, որոնք հանդիմանական նամակ են հղում Լևոնին՝ նշելով, որ չեն ճանաչում նոր կաթողիկոսի իշխանությունը: 1195 թ. Հայաստանի հոգևորականության որոշմամբ Անիում կաթողիկոս է ձեռնադրվում Բարսեղ Բ Անեցին: Դրա հավաստումը գտնում ենք Հռոմոսի վանահայր Պետրոսի 1195 թ. արձանագրության մեջ. «Ի թ(ու)ին **ՈԽԳ** (1195) **յառաջին ամի կաթողիկոսութեան տեառն Բարսղի...**»¹⁹⁰:

1187 թ. Հռոմոսում գրված մի հիշատակարանից երևում է, որ Բարսեղը հոգացել էր իր եղբայր Այիրատի որդու՝ Սարգսի՝

եկեղեցիների միության խնդիրն արծարծող նամակ է ստացվում: Կաթողիկոս Գրիգոր Տղան այս մասին ծանուցում է Հայաստանի եպիսկոպոսներին ու հոգևորականությանը, որոնցից մերժողական պատասխան է ստանում: Այդ գրությունը ստորագրած հոգևորականության անվանացանկը սկսվում է Բարսեղ Բ Անեցու անունով: 1178 թ. ապրիլին Հռոմկլայում գումարվում է եկեղեցական մեծ ժողով, որի հայաստանցի մասնակիցներից առաջինը դարձյալ հիշվում է Բարսեղը՝ «Բասիլիոս արքեպիսկոպոս թագաւորանիստ Անի քաղաքի»: Ժողովի արդյունքում ստորագրված փաստաթղթի տակ Բարսեղի ստորագրությունը Հայոց և Աղվանից կաթողիկոսների ստորագրություններից հետո երրորդն է, որը ցույց է տալիս նրա գրաված բացառիկ դիրքը:

¹⁹⁰Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 150:

որպես իր հաջորդի նախապատրաստման մասին: Հովհաննես գրիչը հիշատակարանում նշում է. «...զծագրեցի զսա... **ի հայրապետութեան մեծարգոյ եւ հռչակաւոր առնն Աստուծոյ տեառն Բարսղի եւ եղբարորդոյ նորա աստուածարեալ մանկագոյն քահանայի Սարգսի...**»¹⁹¹: Եվ իրոք, Բարսեղից հետո (վերջին անգամ հիշվում է 1199-ին) որպես Անիի եպիսկոպոս է հիշվում Ապիրատի որդի Սարգիսը: Սակայն նա կաթողիկոս չի հորջորջվում, քանի որ Անին արդեն անցել էր Զաքարյաններին, որոնց ձեռնադրել էր Անիում կաթողիկոսական աթոռ ունենալը՝ նկատի ունենալով հայ-վրացական դավանաբանական հարաբերությունները:

Բարսեղ Ա Անեցու եպիսկոպոս դառնալուց՝ 1072 թ. մինչև Սարգսի աթոռակալությունը (վերջին անգամ հիշվում է 1220 թ.) Անիի աթոռը գտնվել է Պահլավունիների հետ խնամիացած Հասանյան գործել տոհմի ներկայացուցիչների ձեռքին: Սակայն դրանից հետո կամ հենց Ապիրատի որդի Սարգսի աթոռակալության վերջին շրջանից սկսած՝ Անիի եպիսկոպոսական իշխանությունն աստիճանաբար անցել է իրենց Պահլավունի և Վահրամ սպարապետի սերունդ հռչակած տոհմին, որի առաջին գործուն ներկայացուցիչը Գրիգորն էր՝ Աբուղամրի որդին:

ԱՆԻԻ ԶՈՒՅԳ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ ՍԱՐԳԻՍ Ա ԵՎ ԳՐԻԳՈՐ Ա

Փաստերը ցույց են տալիս, որ 13-րդ դարի սկզբներին Անիում եպիսկոպոսական իշխանությունն ունեցել է երկու աթոռակալ, որոնցից ավագն Ապիրատի որդի Սարգիսն էր, կրտսերը՝ Աբուղամրի որդի Գրիգորը: Քանի որ Անիի այս շրջանի պատմությունը ոչ մի պատմագրական երկում չի արտացոլված, ստիպված

¹⁹¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 251:

ենք տեղեկություններ քաղել հիմնականում վիմագրերից ու հիշատակարաններից և դրանց տվյալների հիման վրա համապատասխան եզրակացություններ անել:

Նախ ծանոթանանք Սարգսի վերաբերյալ նյութերին:

1198-ի վերջերից Անիին տիրացած Չաքարե ամիրսպասալարը 1206 թ. Լոռիում գումարում է եկեղեցական ժողով Հայոց և Վրաց եկեղեցիների ծխական որոշ հարցերի համապատասխանեցման նպատակով: Ժողովի բարձրաստիճան մասնակիցների թվում էր Անիի եպիսկոպոսը՝ **«Սարգիս՝ արթռակալ Անույ»**¹⁹²: Վստահաբար նա մասնակցել է նաև հաջորդ տարվա սկզբներին նույն խնդրով Անիում հրավիրված ժողովին:

Այդուհետև Սարգիսը հիշվում է Անիի մերձակա Բագնայրի վանքի երեք՝ 1209, 1210, 1211թթ. նվիրատվական արձանագրություններում: Դրանցից երկրորդը, որը պատկանում է Օշականի Պարսիմո անունով ռաիսին, սկսվում է հետևյալ կերպ. **«ՈԾԹ (1210) ի յամի աստուածարեալ եւ մեծարգոյ տեառն Սարգսի վերադիտողի մայրաքաղաքին Անույ եւ ի պետական իշխանութեան շահնշահ Չաքարիայի...»**¹⁹³: Մյուս երկու արձանագրություններում նշվում է նաև Սարգսի հոր՝ Ապիրատի անունը¹⁹⁴:

Հետաքրքրական է 1215 թ. Հռոմոսի վանքում գրված արձանագրության սկիզբը, որտեղ Սարգսի իշխանությունը կոչվում է հայրապետություն. **«ՈԿԴ (1215) ի հայրապետութեան տ(է)ր Սարգսի եւ ի տէրութեան վանացս Գրիգորոյ, Սմբատա, Վահրամա...»**¹⁹⁵: Ինչպես վերևում տեսանք, արդեն հաջորդ թվակա-

¹⁹² Կիրակոս Գանձակեցի, էջ 172:

¹⁹³ Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 180:

¹⁹⁴ Նույն տեղում, էջ 179, 181:

¹⁹⁵ Այս արձանագրության թվականը Ն. Սարգիսյանի և նրանից օգտված հեղինակների մոտ չկա: Առաջին անգամ հրապարակել է Ժ-Մ Թիերին (J-M. Thierry, Le couvent Arménien d' Horomos, Louvain-Paris, 1980, p. 54):

մին՝ 1216-ին, Անիի եպիսկոպոսանիստ Առաքելոց եկեղեցում, որպես քաղաքի եպիսկոպոս, արձանագրություն է թողել Աբուղամրի որդի Գրիգորը: Եթե չլիներ Սարգսի ևս մեկ արձանագրություն, որը 1220 թվականից է, բնական կլիներ ենթադրել, որ Սարգիս եպիսկոպոսին հաջորդել է Գրիգորը: Սակայն Սարգսի այդ արձանագրությունը, որի թվականը կասկած չի հարուցում, բերում է այն համոզման, որ առնվազն 1216 թվականից հետո Անին ունեցել է երկու եպիսկոպոս, այսինքն՝ Սարգիսը և Գրիգորը աթոռակալել են միաժամանակ: Սա, իհարկե, արտառոց երևույթ չէ, երկու եպիսկոպոսի իշխանություն նույն տեղում տեսնում ենք Բջնիի և Սյունյաց աթոռներում¹⁹⁶: Անիում, սակայն, հիշյալ եպիսկոպոսների անունների հետևում ու նրանց արձանագրությունների մեջ կարելի է նշմարել նաև աթոռակալող տոհմերի միջև եղած պայքարը:

1217 թ. Գրիգոր եպիսկոպոսը թողնում է Չատկի տոնին Անիի եպիսկոպոսական աթոռին տրվող երկու հարկ. մեկը յուրաքանչյուր գյուղից վերցվող երկու գրիվ (17,28 կգ) հացն էր, մյուսը՝ քաղաքի յուրաքանչյուր եկեղեցուց (մատաղից) տրվող մեկական մորթին¹⁹⁷: Մեկ տարի անց՝ 1218 թ. Անիի «Վրացական» եկեղեցու պատին մի ընդարձակ վրացերեն արձանագրություն է թողել Վրաց Ետիփան (Եպիփանոս) կաթողիկոսը՝ որոշ հարկեր կարգավորելով քաղաքի քաղկեդոնական համայնքի համար: Արձանագրության վերջում հայերեն կարճ մակագրությամբ այն հաս-

¹⁹⁶ 13-րդ դարի 40-ական թվականներին հիշվում են «եպիսկոպոսն Բջնոյ՝ Վանական և Գրիգոր» (Կիրակոս Գանձակեցի, էջ 313), տե՛ս նաև Ա. Մկրտչյան, Սյունյաց մետրոպոլիտական աթոռը Օրբելյանների իշխանության ժամանակ, «Էջմիածին», Է, 1988, էջ 53:

¹⁹⁷ «Ես տե՛ր Գրիգոր, որդի Ապուղամրի, արհիեպիսկոպոս, կամեցաք առնուլ գեղեալ հարկ ի մեր գաւառէս Շիրակա եւ ի քաղաքիս եկեղեցեացս ի յԱնոյ, զի սահման էր ի սկզբանէ յամենայն գեղէ երկու գրիւ հաց յաթոռս տալ, եւ ի քաղաքիս ամենայն եկեղեցիս մորթի մին՝ Չատկին տաին: Արդ ես... թողի զայս հացս ամենայն գեղի մեծի եւ փոքու եւ Չատկի մորթին ամենայն եկեղեցոյ...» (Դիվան, Ա, 16):

տատել են Անիի Վահրամ ամիրան և Գրիգոր եպիսկոպոսը՝ «Թվին ՈԿԷ (1218) ես տեր Գրիգոր **իրիցապետ եպիսկոպոս**, ես՝ Վահրամ ամիրա քաղաքիս, վկայեմք, որ կաթողիկոսին հրամանք է գայս»¹⁹⁸: Այստեղ հետաքրքիր է, որ Գրիգորը կոչվում է **երեցապետ եպիսկոպոս**, որը, կարծում ենք, նրա պաշտոնական տիտղոսն էր այդ ժամանակ: Մինչև 1220 թվականը պետք է գրված համարել նաև Գրիգորի՝ Լմբատավանքում և Հոռոմոսում թողած արձանագրությունները¹⁹⁹:

Այժմ անդրադառնանք Սարգիս Ա-ի եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու 1220 թ. արձանագրությանը, որի ժամանակը, ինչպես տեսնում ենք, համընկնում է Գրիգորի եպիսկոպոսության շրջանին: Արձանագրության մեջ, մասնավորապես, ասվում է. «Ի թուխ ՈԿԹ (1220) շնորհիւն Աստուծոյ **ես տեր Սարգիս, որդի Ապիրատին, առաջնորդ մայրաքաղաքիս Անույ** եւ կամակցութեամբ ամիրաս Երկաթա, յաղագս բարեպաշտ եւ աստուածասէր պատրոնաց մերոց աթաբակ Իւանէի եւ ամիրսպասալար Շահնշահ Սարգսի եւ Աւագի երկարկենդանութեան եւ յիշատակի մեծ սպարապետին Հաոց Չաքարէի ազատեցաք զամենայն քաղաքիս քահանաիցս զիրիցակնոջ մուտք՝ զմահու եւ զկենաց եւ զմատղաց, զփարթամաց եւ զաղքատաց, զեկաց եւ զքնակաց, թէ լաւ եւ թէ վաթար իրիցակին վախճանի ոչ մեծ մուտք եւ ոչ փոքր ի յաթոռս չտայ, այլ ազատ են մինչ ի գալուստ Բանին Աստուծոյ. Եւ գայս եւս հաստատեցաք, որ չունի հրաման ի Բանէ Աստուծոյ եպիսկոպոս, որ այժմ, եւ կամ զկնի մեր, յաւանութիւն յուզէ յիրիցանոյս, մինչեւ գայն փողն կամաւ կամ ակամա. եւ քահանա, որ պատառիչ լինի ուխտիս եւ աւգնութիւն տա, ի կարգէն լուծեալ լիցի...»²⁰⁰:

¹⁹⁸ Անիի վիմագրերի ժողովածուում արձանագրության թվականը նշված է ՈԿԵ (1216) (Դիվան, Ա, 61), սակայն Պ. Մուրադյանը ճշտում է՝ ՈԿԷ (1218) (Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 43):

¹⁹⁹ Դ. Աիշան, Շիրակ, էջ 165, Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 151:

²⁰⁰ Դիվան, Ա, 17:

Արձանագրությունն ուշագրավ է մի քանի առումով²⁰¹, բայց մեր քննած հարցի տեսանկյունից հետաքրքրական է նախ այն, որ Սարգիսն իրեն կոչում է առաջնորդ (**«առաջնորդ մայրաքաղաքիս Անույ»**), իսկ հարկը թողնելու մասին նշելուց հետո գրում՝ «զայս եւս հաստատեցաք, որ **չունի հրաման ի Բանէ Աստուծոյ եպիսկոպոս որ այժմ, եւ կամ զկնի մեր**, յաւգնութիւն յուզէ...»։ Այսինքն, Սարգիսը՝ որպէս առաջնորդ, խոսում է մեկ ուրիշի՝ իր ժամանակի եպիսկոպոսի մասին (**«եպիսկոպոս որ այժմ»**)՝ շեշտելով, որ նա իրավունք չունի հարկն ուզել։ Մեր կարծիքով, այդ եպիսկոպոսը հենց երեցապետ եպիսկոպոսն է՝ Աբուղամրի որդի Գրիգորը։

Ինչպէս այս արձանագրությունը, այնպէս էլ մի քանի այլ տվյալներ (օրինակ, 1270-ականներին նույն արձանագրության մեջ հիշվում են Սարգիս Բ-ն որպէս առաջնորդ և Մխիթար Տեղերցին որպէս քաղաքի եպիսկոպոս)²⁰² խոսում են այն մասին, որ 13-րդ դարի սկզբներից Անիում միաժամանակ գոյություն է ունեցել հոգևոր իշխանության երկու բարձրագույն պաշտոն՝ **առաջնորդ և երեցապետ եպիսկոպոս**։ Նույն շրջանում նման բան տեսնում ենք նաև Սյունյաց հնավանդ աթոռում²⁰³։

²⁰¹ Արձանագրությունը տեղեկացնում է Անիում երեցկնոջ մահվան ժամանակ եպիսկոպոսական աթոռի օգտին գանձվող յուրօրինակ հարկի մասին, որը հավանաբար տրվում էր նվիրատվության ձևով (**«կամաւ կամ ակամա»**)։ Այն նաև կարևոր ակնարկ է պարունակում Անիի բազմանդամ քահանայական դասի՝ երեցանու մասին, որն արդեն պայմանականորեն բաժանվում էր եկվորների ու քնիկների՝ **«զեկաց եւ զքնակաց»** (այդ մասին վկայություններ կան նաև հետագայի արձանագրություններում), ինչպէս նաև՝ ունևորների և չունևորների՝ **«զփարթամաց եւ զաղքատաց»**։ Հարկը թողնելը նվիրվել է Չաքարե ամիրսպասալարի հիշատակին և այն ժամանակ, երբ նրա որդի Շահնշահ Սարգիսն արդեն ամիրսպասալար էր (հոր մահվան ժամանակ նա դեռ փոքր էր)։ Արձանագրության մեջ առաջին անգամ հիշվում է Անիի ամիրա Երկայթը, որի որդի Բարսեղը հետագայում քաղաքի եպիսկոպոսը դարձավ։

²⁰² Դիվան, Ա, 24։ Այս մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթևոսյան, Անի, էջ 73-110։

²⁰³ Այս հարցին անդրադարձած Աբրահամ Մկրտչյանը գրում է. **«Տաթևում երկու եպիսկոպոսների միաժամանակյա աթոռակալությո-**

Կարելի է ենթադրել, որ Սարգիսը՝ որպես Հասանյան տան շառավիղ, որը 11-րդ դարի վերջերից վարում էր Անիի հոգևոր իշխանությունը, այնքան էլ բարյացակամորեն չի ընդունել Պահլավունյաց նորահռչակ տոհմանյուղից սերող Գրիգորի առաջխաղացումը, մանավանդ, որ վերջինս էլ ամեն առիթով շեշտում էր, թե հանդիսանում է Անիի աթոռի ժառանգորդը, ասես իր գրաված դիրքի օրինականությունը հաստատելու համար: Անիի մերձակա Բագնայրի ու Արջո Առինի վանքերը, նշանավոր Մարմաշենն ու Լմբատավանքը, Գրիգորը համարում է «սեփական», «հայրենի» տիրույթներ, այսինքն՝ արդեն իսկ բավական ընդարձակ իշխանություն ունեւր Անի-Շիրակում: Իսկ Սարգսի երբեմնի գորեղ տոհմն արդեն թուլացել էր. պատահական չէ, որ 13-րդ դարում Անիում նրանց պայագատների հիշատակության չենք հանդիպում: Հնարավոր է, որ Սարգսի մահից հետո (ենթադրաբար 13-րդ դարի 20-ական թվականներ) Գրիգորը վերջնականապես և ամբողջովին «ժառանգել» է Անիի աթոռը՝ համատեղելով առաջնորդությունն ու եպիսկոպոսությունը: Սակայն Անիի աթոռի հետագա պատմության մեջ կան ժամանակահատվածներ, երբ կրկին տեսնում ենք երկու եպիսկոպոսների համաժամանակյա գործունեություն, հետևաբար, եղել է դրա անհրաժեշտությունը:

ԳՐԻԳՈՐ Ա ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԸ

Քանի որ 1239 թ. Անիի եպիսկոպոս Բարսեղ Գ-ն (Ամիր Երկաթի որդին) Ս. Առաքելոցի պատին թողած արձանագրության

յունը... բնական երևույթ էր դարձել: Այդ երկու եպիսկոպոսներից մեկը հանդես էր գալիս առաջնորդի, իսկ մյուսը՝ փոխանորդի կամ տեղապահի դերում: Վերջինս սովորաբար հաջորդ առաջնորդն էր դառնում» (Ա. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 53):

մեջ նշում է արդեն մահացած Գրիգոր Մագիստրոսի կամքը կատարելու մասին, հակված ենք ենթադրելու, որ վերջինս հենց այդ ժամանակ է մահացել կամ առնվազն մեկ տարի առաջ՝ 1238-ին:

Համառոտակի ներկայացնենք Գրիգոր Ա-ի գործունեությունը 1220 թվականից հետո (երբ Սարգիս Ա-ն այլևս չի հիշատակվում) մինչև նրա մահը: Ինչպես վերևում նշեցինք, 13-րդ դարի 20-ական թվականներին Գրիգորն ու եղբայրը՝ Ղարիբը, հիմնանորոգել են Մարմաշենի վանքը: Բայց այն նոր էր ավարտվել, երբ պատերազմում զոհվեց Ղարիբ Մագիստրոսը, և այդ մասին նշվում է Մարմաշենի արձանագրության մեջ: Սակայն Գրիգորը եղբոր հիշատակը հավերժացրել է նաև Անիում՝ քաղաքի քահանաների թաղման ժամանակ գանձվող հարկը թողնելով: 1227 թ. Ս. Առաքելոցի պատին գրված արձանագրության մեջ նա նշում է նաև եղբոր մահվան հանգամանքները. «Ի ՌՀՁ (1227) կաման Աստուծոյ եւ տէր Գրիգոր արհիէպիսկոպոս մայրաքաղաքիս Անո եւ ժառանգորդ սեփական հայրենի աթոռոյս մերո, թողի զհարկ քահանայից քաղաքացեաց, զոր ի մահուան ասրն տաին եւ փոխարէն հատուցէն մեզ զաւագ հինգշաբթին պատարագ յամենայն Էկեղեցիս յանուն հարազատ եղբաւր իմո Ղարփին, կատարելոյ ի պատերազմի խորագմեցեաց ի ՌՀԴ (1225) թուականին. եւ չունի որ իշխանութիւն յիրիցո հարկս առնուլ...»²⁰⁴: Հետաքրքրական է, որ նույն բանը, ավելի համառոտ, Գրիգորը հայտնում է նաև իր ազգական Սիթի տիկնոջ նորոգած Անիի Ս. Սարգիս եկեղեցու արձանագրության մեջ²⁰⁵, որտեղ մեկ այլ արձանագրություն էլ Սիթին ինքն է գրել, վերջում նշելով, որ տեղի քահանաները պետք է պատարագ մատուցեն պատերազմում

²⁰⁴ Դիվան, Ա, 18:

²⁰⁵ «Ի ՌՀԵ (1226) եւ տէր Գրիգոր թողի զհարկ թաղման քահանայիցս Անոյ...»: Հետաքրքիր է, որ գրականության մեջ այս եկեղեցին հաճախ կոչվում է Սիթի Պահլավունու եկեղեցի, մինչդեռ արձանագրության մեջ այդպիսի տոհմանուն չի նշվում (տե՛ս Դիվան, Ա, 55):

գոհված իր հարազատի՝ Ղարիբի համար («սպասաւորք սորա հատուցին էրկու ւար պատարագ... յանուն հարազատին իմոյ կատարել Ղարփին, սպանելոյն ի պատերազմի»)՝²⁰⁶:

Մինչև Ղարիբի մահն են գրվել Գրիգորի երկու անթվական արձանագրությունները Լմբատավանքում: Ավելի վաղ գրվածում նա վանքը կոչում է իր «հայրենիքը», այսինքն՝ սեփականությունը և նշում նվիրատվությունները՝ «...ես տէր Գրիգոր, որդի Ապուղամրի Անույ եպիսկոպոս, տուի զԱրդիք եւ զԲունոյ զերիցութիւնն Լմբատա՝ իմ հայրենեաց, եւ նոքա տարին Ա(1) պատարագ ինձ տուին...»²⁰⁷: Երկրորդ, ավելի ընդարձակ արձանագրությունը վկայում է, որ Լմբատավանքն արդեն անցել է Գրիգորի հորեղբայր տեր Բարսեղի իշխանության ներքո: Գրիգորը հայտնում է, որ վանքին է տրվել իր գնած Հայրենյաց Թաղը կոչվող գյուղը՝ «յաղագս յիշատակի մերոյ եւ յարեւշատութիւն եղբար իմոյ Ղարփին»: Վիճագրում պահպանվել է նաև Գրիգորի մոր (Աբղարիբի կնոջ)՝ Մահմիքի անունը²⁰⁸:

Գրիգոր Ա եպիսկոպոսն ունի նաև անթվական արձանագրություն Հոռոմոսում, ըստ որի նա Ս. Հովհաննեսին է տվել հավանաբար նախկինում վանքին պատկանած երեք գյուղ՝ «...ետու ի Սուրբ Յովանէս ընծա գիւր գեղջէիցն՝ զԱկնաց եւ զԾաւթաի եւ զԱղբնագեղի զժողովրդութիւնն՝ յառաջնորդութեան Անդրեաս վարդապետին...»²⁰⁹:

Վերևում արդեն նշեցինք, որ 30-ական թվականների արձանագրություններում Գրիգոր արքեպիսկոպոսն արդեն հանդես է

²⁰⁶ Դիվան, Ա, 55: Արձանագրության սկզբում նշված է ՌԾԹ (1210) թվականը, որը հավանորեն եկեղեցու վերանորոգման սկզբի տարին է, մինչդեռ, ինչպես տեսանք, Ղարիբը գոհվել է 1225-ին, ուստի արձանագրությունն էլ գրվել է այդ թվականից հետո, թերևս Գրիգոր եպիսկոպոսի արձանագրության գրության ժամանակ (1226):

²⁰⁷ Ղ. Աիշան, Շիրակ, էջ 165:

²⁰⁸ Նույն տեղում:

²⁰⁹ Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 151:

գալիս Գրիգոր Մագիստրոս անունով: Մարմաշենի արձանագրության մեջ նա հորը կոչում է Աբուղամր Մագիստրոս, եղբորը՝ Ղարիբ Մագիստրոս: Հասկանալի է, որ այդ տիտղոսը տվյալ ժամանակաշրջանում ոչ մի կապ չէր կարող ունենալ Հայաստանի սահմաններից շատ հեռու մնացած Բյուզանդական կայսրության հետ: Այն դարձել էր մի պատվանուն կամ բարձր ազնվականության չափանիշ, որը նորահայտ Պահլավունիները մեջտեղ էին բերել իրենց տոհմական իրավունքների ամրապնդման համար:

Ի՞նչ է տվել Մագիստրոս պատվանունը Գրիգոր արքեպիսկոպոսին: Գուցե դա անհրաժեշտ էր տոհմական, եկեղեցականից բացի՝ նաև աշխարհական իրավունքներին ամբողջականորեն տեր կանգնելու համա՞ր կամ որպեսզի օրինական համարվի նրա ամուսնությունը:

Հայտնի է, որ բարձրաստիճան հոգևորական լինելով հանդերձ՝ Գրիգորն ամուսնացած է եղել, մի բան, որն այն ժամանակներում արտառոց չէր²¹⁰: Նա ունեցել է երեք զավակ՝ Աբուղամր, Սարգիս, Վահրամ անուններով, որոնցից երկրորդը դարձել է Անիի եպիսկոպոս: Այդ պաշտոնում նա առաջին անգամ հիշատակվում է 1245 թ., երբ Անիում ընդունել է կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցու շրջաբերականը բերող Վարդան Արևելցի վարդապետին²¹¹:

Հետաքրքիր է, որ Գրիգորի որդիները արձանագրություններում իրենց հոր անունը նշելիս պարզապես գրում են՝ «որդի Մագիստրոսի»: Այդ բանը տեսնում ենք ինչպես Սարգիս Բ եպիսկոպոսի մոտ՝ Անիում («տէր Սարգիս, որդի Մաքիստոսին») ²¹², այնպես էլ՝ երկիցս, նրա եղբայր Աբուղամրի 1261 և 1262 թթ.

²¹⁰ Տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի (աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի), Երևան, 1975, էջ 50, 320:

²¹¹ Կիրակոս Գանձակեցի, էջ 310:

²¹² Դիվան, Ա, 19:

Բագնայրի արձանագրություններում²¹³, ինչպես նաև վերջինիս՝ Մարմաշենում պահպանված տապանագրում՝ «Այս է հանգիստ Ապուղամրի, որդոյ Մաքիստրոսի»²¹⁴: Այս Աբուղամրի որդին էր 13-րդ դարի վերջերին Անիի եպիսկոպոս դարձած Հովհաննեսը:

Գրիգոր Ա-ի երրորդ որդին՝ «իշխան Վահրամը», Մարմաշենի մի արձանագրությունից դատելով՝ վաղ հասակում է մահացել՝ «կիսաւրեայ ժամանակաւ փոխ[եցաւ առ Աստուած]»²¹⁵: Գրիգորի որդի Աբուղամրի՝ 1262 թ. արձանագրության մեջ պահպանվել է նրա մոր, այսինքն Գրիգոր Ա Մագիստրոսի կնոջ անունը՝ Մամբան²¹⁶:

Այսպիսով, 1239 թ. Անիի եպիսկոպոս Բարսեղի Գ-ի արձանագրությամբ պարզ է դառնում, որ 1213 թվականից ի վեր Անիում ու նրա շրջակա վանքերում հիշվող գործունյա Գրիգոր արքեպիսկոպոսը կյանքի վերջին շրջանում ընդունել է Գրիգոր Մագիստրոս հորջորջունը: Բարսեղն ասում է, որ Անիի Ս. Ստեփանոս եկեղեցին պետք է պատկանի «Մարմաշինոյ վանիցն... գոր Մագիստրոսն Գրիգոր շնորհեալ եւ հաստատեալ էր, ընդ որոյ հովանեաւ ինքն եւ եղբայր իւր Խարիփ կան հանգստարանի»²¹⁷: Մարմաշենում պահպանվել է նաև Գրիգորի մահարձանի անթվական արձանագրությունը. «Շնորհիւն Աստուծոյ այս արձան մշտընջենաւոր **[Գրիգ]որոյ որդոյ Աբուղամրի, թոռին Վահրամա, որ հաստատեալ ի սկզբանէ զԿաթողիկէ եկեղեցի:** Յիշեսցի: Ամէն»²¹⁸: «Թոռ» բառն, իհարկե, նշանակում է զավակի զավակ, բայց նաև «սերունդ, զարմ» իմաստով է օգտագործվում, հետևաբար, այստեղ ակնարկվում է 1180-ականներին

²¹³ Ն. Մարգիսեան, նշվ. աշխ., էջ 186, 188:

²¹⁴ И. Орбели, նշվ. աշխ., էջ 445:

²¹⁵ Նույն տեղում, էջ 447:

²¹⁶ Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 171:

²¹⁷ Դիվան, Ա, էջ 17:

²¹⁸ И. Орбели, նշվ. աշխ., էջ 447:

ծնված Գրիգորի՝ 1045 թ. նահատակված (Մարմաշենի Կաթողիկե եկեղեցին կառուցած) Վահրամ Պահլավունու զարմից լինելու մասին: Հետաքրքիր է, որ Գրիգորի ավագ որդի Աբուղամրը ևս շեշտել է այդ հանգամանքը 1262 թ. արձանագրության մեջ: Գրելով, որ Մագիստրոսի որդին է, իր անմիջական պապի՝ Աբուղամրի անունը մի կողմ թողնելով՝ նա ավելացնում է, թե Վահրամ իշխանի թոռն է, այսինքն՝ Վահրամ Պահլավունու զարմից է. **«Ես Ապուղամր, որդի Մաքիստրոսի, թոռն Վարհամ իշխանին»**²¹⁹:

Այսպիսին էր ազնվականության տոհմական ինքնահաստատման ճանապարհը:

²¹⁹ Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 171, Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 188:

ՄՄԲԱՏ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Անիի Բագրատունյաց թագավորության 10-րդ դարի վերջի և 11-րդ դարի սկզբի զինվորական գործիչ և եկեղեցաշինարար Սմբատ Մագիստրոսի վերաբերյալ երկու փաստ է հայտնի: Առաջինն այն է, որ նա 998 թ. Ծումբ գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում մահմեդականների դեմ դուրս եկած հայ-վրացական միացյալ բանակի կազմում երկու այլ զորավարների՝ Վահրամ Պահլավունու և Աշոտ մարզպանի հետ գլխավորել է Անիի թագավորության 6000-անոց զորամասը, և երկրորդը, որ 1010 թ. կառուցել է Անիի մերձակա Բագնայրի վանքը:

Ո՞ր տոհմից էր սերում Սմբատ Մագիստրոսը: Ցայժմ եղած պատմագիտական ողջ գրականության մեջ նա համարվում է սպարապետ Վահրամ Պահլավունու որդին: Սակայն սկզբնաղբյուրների քննությունն այլ եզրակացության է հանգեցնում. պարզվում է, որ Վահրամ Պահլավունին Սմբատ անունով որդի չի ունեցել, և Սմբատ Մագիստրոսը միանգամայն այլ իշխանական տան ներկայացուցիչ է: Ծանոթանանք փաստերին:

1004 թվականին իր «Տիեզերական պատմությունը» ավարտած Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը գրում է այն մասին, որ Մամլան ամիրան հսկայական բանակով հարձակվել է Դավիթ Կուրապաղատի իշխանության վրա, իսկ վերջինս դիմել է Հայոց և Վրաց թագավորներին՝ օգնության խնդրանքով: Գագիկ Ա Բագրատունին (989-1017) հատկացրել է վեց հազար զինվոր, որոնց գլխավորում էին երեք զորավարներ: Այս հատվածն Ասողիկի պատմությունից մեջբերելուց առաջ նշենք, որ այստեղ հետազայում ընդմիջարկություն է կատարվել, որը մասամբ փոխել է դրա բովանդակությունը, և այն հենց այդ փոխված տեսքով է տեղ գտել երկի 1885 և 2011 թվականների հրատարակություններում. «Եւ Գագկայ յամենայն զօրացն Հայոց հատեալ զգունդ

ԶՌ (6000) զընտիր ընտիր վառելոցն՝ գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ, որդւոյ Գրիգորոյ Պաիւաւունոյ, որ զՄարմաշէն եւ զԲրգներն շինեաց, եւ Սմբատայ մաժիստոռոսի, որդւոյ Վահրամայ, եւ մարգպանին Աշոտոյ»²²⁰:

Սույն հատվածում առկա ընդմիջարկությունը բացահայտում է Ասողիկի Պատմության՝ Մատենադարանում պահվող հնագույն ձեռագիրը (թիվ 2865): Այնտեղ հեղինակային բնագրի հարևանությամբ տեսնում ենք հետագայի մի լուսանցագիր հավելում Մարմաշենի և Բագնայրի մասին, որը հաջորդ գրիչները ներմուծել են բնագրի մեջ և շփոթի առիթ ստեղծել: Ահավասիկ, իրականում ինչ է գրել Ասողիկը. **«Եւ Գագկայ յամենայն զօրացն Հայոց հատեալ զգունդ վեց հազար զընտիր ընտիր վառելոցն՝ գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ որդւոյ Գրիգորոյ, եւ Սմբատայ մաժիստոռոսի որդւոյ Վահրամայ, եւ մարգպանին Աշոտոյ»**: Այս հատվածից աջ՝ լուսանցքում, Վահրամի անվան հավասարությամբ սկսվում է յոթ կարճ տողերից բաղկացած մանրատառ հավելումը. **«Պաիւաւունոյ, որ զՄարմաշէն շինեց: Որ զԲրգներն շինեց»**²²¹: Դրանով գրառում կատարողը՝ 13-րդ դարի սկզբներին ապրած Հոհան գրիչը, ցանկացել է ավելացնել իրեն հայտնի փաստերն այն մասին, որ Վահրամ Պաիւաւունին Մարմաշենն է կառուցել, իսկ Սմբատ Մագիստրոսը՝ Բագնայրը, այդ պատճառով երկու տվյալն առանձնացրել է վերջակետով: Բայց հետագայի ընդօրինակողներն այդ տողերը, որպես միասնական միտք, ներմուծել են բնագրի մեջ, մի դեպքում՝ Վահրամի հոր անունից հետո (ինչպես

²²⁰ Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, Սանկտ-Պետերբուրգ, 1885, էջ 270, Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, (բնագիրը պատրաստեց Գ. Մանուկյան), Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար, գիրք Բ, Երևան, 2011, էջ 818:

²²¹ Տե՛ս Կ. Մաթևոսյան, Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն և կատարած հավելումները, «Էջմիածին», 2008, Զ-Է, էջ 102-112:

Ասողիկի նշյալ հրատարակությունների մեջ է), մյուս դեպքում՝ Աշոտ մարգարանի անունից հետո (ինչպես որ այդ հրատարակությունների տողատակում նշված օրինակում):

Այժմ տեսնենք, թե կարո՞ղ էր արդյոք Սմբատ Մագիստրոսը Վահրամ Պահլավունու որդին լինել: Ասողիկը նշում է, որ Հայոց բանակը դեկավարել են երեք հոգի՝

Գրիգորի որդի, իշխանաց իշխան Վահրամը,
 Վահրամի որդի, Սմբատ Մագիստրոսը,
 Աշոտ մարգարանը:

Եթե Սմբատը Վահրամ Պահլավունու որդին լիներ, պատմիչը նրա անունը չէր կրկնի, այլ կնշեր իշխանաց իշխան Վահրամը և նրա որդին՝ Սմբատ Մագիստրոսը: Ի դեպ, Վրեժ Վարդանյանը լիովին համոզված լինելով, որ Սմբատ Մագիստրոսը Վահրամ Պահլավունու որդին է, Ասողիկի Պատմությունն աշխարհաբարի վերածելիս այս հատվածում ընդհանրապես հանել է երկրորդ անգամ նշված և այլ մարդու վերաբերող Վահրամ անունը և այն ներկայացրել հետեւյալ կերպ. «Գագիկը Հայոց գործից առանձնացնում է (գո) վեց հազար ամենաընտիր և զինավառ մի զունդ, հանձնում Մարմաշենն ու Բրգները կառուցող Գրիգոր Պահլավունու որդի իշխանաց իշխան Վահրամի և նրա որդի Սմբատ մագիստրոսի ձեռքը, ապա նաև Աշոտ մարգարանի...»²²²: Այստեղ նաև ավելացվել են բնագրում չեղած «նրա որդի» բառերը, միևնույն ժամանակ, ըստ թարգմանության, ստացվում է, որ Մարմաշենն ու Բագնայրը Վահրամի հայր Գրիգորն է կառուցել:

Սակայն պատմիչը լավ էր ճանաչում իր ժամանակակիցներին: Ճակատամարտի մանրամասները նկարագրելով՝ նա նշում է. քանի որ Հայոց և Վրաց զորաբանակները թագավորներ չէին գլխավորում, ամեն տոհմ մարտի էր նետվում ինքնուրույն. «Իսկ

²²² Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Երևան, 2000, էջ 331:

գորն Հայոց և Վրաց, զի ոչ թագանւոր գոք ունէին... **Խւրաքան-չխւրքն ըստ տոհմից** և աւագութեան գնդից դիմէին, առիւծաբար մոնչելով՝ յանտառացեալ բազմութիւն բանակին Պարսից»²²³: Սա ևս ցույց է տալիս, որ ճակատամարտի զորահրամանատարներին թվարկելիս պատմիչը տարբերակել է նրանց ըստ տոհմերի. Վահրամը՝ Գրիգորի որդին է, իսկ մեկ այլ տոհմից Սմբատ Մագիստրոսը, բնականաբար, մեկ այլ Վահրամի որդին:

Վիմագիր և մատենագրական աղբյուրներում հիշատակվում են Վահրամ Պահլավունու երկու զավակները՝ Գրիգորը և Ապուղամը: Գրիգորը, հավանաբար ավագն էր, քանի որ պապի անունն էր կրում: Ենթադրվել է, որ նա ծանր հիվանդություն ուներ, քանի որ Ապուղամը 1031 թ. Անիի Առաքելոց եկեղեցուն նվիրատվություն է կատարել եղբոր առողջության և երկարակեցության համար («վասն եղբաւր իմ Գրիգորոյ առողջության և կենաց յերկարութեան») ²²⁴: Բայց Ապուղամը Գրիգորից ավելի վաղ է մահացել, դատելով Վահրամ Պահլավունու՝ 1031-1033 թթ ժամանակամիջոցին գրած մի արձանագրությունից²²⁵:

Իսկ Սմբատին Վահրամ Պահլավունու որդի համարողները հիմք են ընդունել միմիայն Ասողիկի պատմության վերը բերված հատվածը: Ն. Ակինյանը Սմբատին անդրադառնալով գրում է. «Վահրամ, որ յիշած է իր արձանագրություններու մէջ իր եղբայրներու եւ զաւակներու անունները, խօսք չէ ըրած ամենևին Սմբատիս մասին»²²⁶: Սակայն ավանդույթի ուժն այնքան մեծ է եղել, որ այս կարևոր դիտարկումն անելով հանդերձ, նա Սմբատին համարել է Վահրամ Պահլավունու որդի:

Ուսումնասիրողները, ցավոք, աչքաթող են արել ևս մի կա-

²²³ Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն, էջ 272-273:

²²⁴ Դիվան Ա, էջ 12:

²²⁵ Նույն տեղում, էջ 32, Վ. Վարդանյան, Պահլավունիները Հայոց պետականության և հոգևոր անադարտության պահապաններ, Երևան, 2008, էջ 54:

²²⁶ Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 358:

րևոր հանգամանք: Հայտնի է, որ Վահրամ Պահլավունին և իր որդի Գրիգորը գոհվեցին Անիին տիրացած բյուզանդացիների՝ Դվինի ամիրայի դեմ 1045 թ. աշնանը կատարած արշավանքի ժամանակ: Վահրամն այդ պահին տարիքն առած մարդ էր, ծերունի, ինչպես նրա մասին գրում է եղբորորդին՝ Գրիգոր Բջնեցին: Եթե անգամ ենթադրենք, թե իր մահվան ժամանակ նա ութսուն տարեկան էր, ինչպես Կ. Կոստանյանցն է գրում՝ «...պատերազմի մեջ մեռաւ... ութսունամեայ ծերունին Վահրամ»²²⁷, 1045-ից 80 տարի հետ գնալով՝ կգտնենք նրա ծննդյան թվականը՝ 965, և պարզ կլինի, որ Ծումբի ճակատամարտի ժամանակ՝ 998 թվականին, նա 33 տարեկան էր: Մոտավոր ելակետ ունեցող այս հաշվարկների մեջ մի քանի տարվա տեղաշարժը առաջ կամ հետ, չի կարող էական նշանակություն ունենալ: Իրողությունն այն է, որ նշված ճակատամարտի ժամանակ Վահրամ իշխանաց իշխանն այնքան երիտասարդ էր, որ չէր կարող զորավարության տարիքի, առավել ևս՝ մագիստրոսի պատվաստիճանի հասած որդի ունենալ:

Կա ևս մի հանգամանք, որ անհնար է դարձնում Վահրամ Պահլավունու և Սմբատ Մագիստրոսի հայր Վահրամի նույնացումը: Դա այն է, որ Սմբատ Մագիստրոսի՝ 1010 թ. կառուցած Բագնայրի վանքի՝ մոտավորապես 1021-1022 թթ. մի արձանագրությունից պարզվում է, որ վանքի հիմնադրի տոհմում հարս է եղել Վահրամ Պահլավունու եղբոր՝ Վասակի դուստր Մեղան: Պարզ է, որ Վասակ Պահլավունու դուստրը չէր կարող նրա եղբոր՝ Վահրամ Պահլավունու ընտանիքի հարսը դառնալ:

Այսպիսով, կարծում ենք, որ Վահրամ Պահլավունու կենսագրության մեջ նրա կարծեցյալ Սմբատ որդու մասին էջը պետք է փակված համարել և փորձել իրական տեղեկություններ գտնել Սմբատ Մագիստրոսի մասին: Մեր համոզմամբ՝ վերջինս նվա-

²²⁷ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 292:

զագույնը Վահրամ Պահլավունու սերնդակիցն էր, կամ գուցե ավելի տարեց մարդ՝ դատելով Ծումբի ճակատամարտի ժամանակ նրա մագիստրոս լինելու հանգամանքից:

Այժմ անդրադառնանք Սմբատ Մագիստրոսի մասին երկրորդ հիմնական տվյալին, որը հաղորդում է Սամվել Անեցին: Ժամանակագրական աղյուսակի Հայոց ՆԾԹ (1010) թվականի դիմաց նա գրում է. «Սմբատ Մագիստրոս շինեաց զհրեշտակաբնակ եւ զփափագատենչ վանքն, որ Բագնայր յորջորջի, ժողովն տղարանց աստուածայնոց»²²⁸: Հարկ է նշել, որ Սամվել Անեցու Ժամանակագրության 1893 թ. վաղարշապատյան հրատարակության մեջ իրադարձությունների մեծ մասի վերաբերյալ նշված է միայն Փրկչական թվականը, որն այդ երկում երկու տարով առաջ է այժմ գործող թվականից, և Բագնայրի վանքի կառուցումը նշված է 1012 թ.²²⁹, որտեղից այն անցել է բազմաթիվ հրատարակությունների (հայկական հանրագիտարաններին և այլն): Մինչդեռ ճիշտը Սամվել Անեցու գուգահեռաբար օգտագործած Հայոց թվականն է, որը տվյալ դեպքում Հայոց ՆԾԹ (1010) թվականն է: Այդպես են իրողությունն ընդունել նաև միջնադարյան հեղինակները, որոնք, Սամվել Անեցուց օգտվելով, Սմբատ Մագիստրոսի ձեռամբ Բագնայրի վանքի կառուցմը նշում են 1010 թվականին²³⁰:

Բագնայրի վանքը հիմնումից ի վեր Անիի հետ սերտորեն կապված խոշոր հոգևոր մշակութային կենտրոն դարձավ (բարձրադիր վանքից բացվում է մայրաքաղաքի ընդարձակ համայնա-

²²⁸ Սամուել Անեցի եւ շարունակողներ, էջ 182:

²²⁹ Սամուելի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ աւրարեայ, յառաջաբանով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893, էջ 105: Այստեղ հատվածի վերջին բառերն են՝ «ժողովեայ աստուածայնոց արանց»:

²³⁰ «ՆԾԹ (1010) թուին Սմբատ Մաքիստրոսն շինէ գԲգնայրն տուն Աստուծոյ» (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 25), տե՛ս նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 89, Մխիթար Այրիվանեցի, էջ 57:

պատկերը) և 11-13-րդ դարերում ծաղկում ապրեց²³¹: Հնագույն եկեղեցին Ս. Աստվածածինն է, գմբեթավոր դահլիճ տիպի, որն էլ Սմբատ Մագիստրոսի ձեռակերտն է (այժմ միայն պատերի արևմտյան և հյուսիսային անկյունամասն է պահպանվել): Ընդհանրապես, այս շրջանում Անիի իշխանական տները հանդես էին գալիս խոշոր վանքերի հիմնադրմամբ, որոնք նաև դառնում էին նրանց համար տոհմական դամբանավայր: Ի դեպ, Վահրամ Պահլավունին իր տոհմական վանքը հիմնել է Անիից բավական հեռու՝ Մարմաշենում, ավարտել 1029 թ., և շինարարական արձանագրության մեջ այն կոչում է «գտեղի հանգստեանս մերոյ»²³²:

Ցավոք, Բագնայրում շինարարական արձանագրություն չի պահպանվել: Այստեղի արձանագրություններից ամենահինն անթվական է (որի մասին նշվեց վերևում), բայց ժամանակը՝ ենթադրելի: Վիմագրում իշխան Վասակ Պահլավունու դուստր (Գրիգոր Բջնեցու քույր) Սեդան հայտնում է վանքին կատարած նվիրատվության մասին, որն արել է ի հիշատակ իր հոր՝ «Զրիստոսի գորական» Վասակի: Հայտնի է, որ մահմեդական հրոսակների դեմ կռվի ելած Վասակը սպանվել է 1021 թ., հետևաբար Սեդայի արձանագրությունը գրվել է այդ կամ հաջորդ տարի՝ հոր կորստյան անմիջական տպավորության տակ:

Մեր ուսումնասիրության տեսանկյունից հատկապես հետաքրքրական է, թե Բագնայրում ի՞նչ կարգավիճակով է հանդես գալիս Վասակ Պահլավունու դուստրը: Նա գրում է. «Ես Սեդա՝ տիկնաց տիկին... գուգակից Վահրամայ իշխանաց իշխանի, որդւոյ Աշոտոյ իշխանաց իշխանի...»²³³: Այսինքն՝ նա հարս էր եկել մի իշխանական տուն, որի ավագ ներկայացուցիչը Աշոտ իշ-

²³¹ Վանքի մասին տե՛ս Կ. Մաթևոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր (Հագարամյա Բագնայրի վանքը), էջ 58-100:

²³² Ղ. Աիշան, Շիրակ, էջ 148:

²³³ Նույն տեղում, 113:

խանաց իշխանն էր, իսկ կրտսերը՝ իր ամուսին Վահրամը: Նկատենք, որ այս արձանագրությունը գրվել է վանքի հիմնադրումից ընդամենը մեկ տասնամյակ անց, և բնական է ենթադրել, որ նրա մեջ հիշված անձինք Սմբատ Մագիստրոսի տոհմակիցներն են: Մասնավորապես, չի բացառվում, որ Վահրամ իշխանաց իշխանը Աշոտ իշխանաց իշխանի ավագ որդին լինելով²³⁴ ստացել է իր Վահրամ պապի անունը, որը կարող է նույնանալ Սմբատ Մագիստրոսի հոր հետ: Այլ կերպ ասած, հնարավոր է, որ Բագնայրի հիմնադիր Վահրամի որդի Սմբատ Մագիստրոսը և Աշոտ իշխանաց իշխանը եղբայրներ էին: Այդ դեպքում միանգամայն հասկանալի կդառնա, թե ինչու է այս տան հարսը՝ Վասակ Պահլավունու դուստրը, նվիրատվություն արել Բագնայրին: Մի բան պարզ է, որ վանքի կառուցումից (1010 թ.) մինչև Վահրամ իշխանաց իշխանի կնոջ արձանագրության ժամանակը (1021-22 թթ.) այնքան կարճ միջոց է, որ դժվար թե Սմբատ Մագիստրոսի տոհմի հետ կապ չունեցող մեկ այլ տոհմ այդքան տիրաբար ներկայանար Բագնայրի վանքում:

Հնարավոր է, որ այս ընտանիքի շառավիղի մասին է վկայված Մատենադարանի թիվ 275 Ավետարանի 1077 թ. հիշատակարանում, համաձայն որի, այդ ձեռագիրը գրել է տվել Վահրամի որդի Սմբատ պատրիկը²³⁵: Կարծում ենք, որ Սմբատ պատրիկը զա-

²³⁴ Վահրամի ավագության օգտին է խոսում այն, որ նրան կնության է տրվել ժամանակի ամենանշանավոր իշխաններից մեկի դուստրը, որն իր մասին հպարտությամբ գրում է՝ «...դուստր Մեծին Վասակայ» (Ղ. Ալիշան, նույն տեղում): Սեդայից բացի Վասակ Պահլավունու այլ դուստր աղբյուրներում չի հիշատակվում: Խնամիական կապերի, մասնավորապես դուստրերի ամուսնության միջոցով այլ իշխանական տոհմերին համախմբելու փորձառություն ունեցավ նաև Վասակի ավագ որդին՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, որի երեք դուստրերը նշանավոր իշխանական ընտանիքներ կազմեցին (Ն. Ալիևեան, Ներսես Լամբրոնացի, էջ 372-373):


²³⁵ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 110: Գ. Հովսեփյանն անտեսելով ժամանակի մեծ տարբերությունը Սմբատ պատրիկին նույնացրել է Բագնայրը կառուցող Սմբատ Մագիստրոսի հետ (Գ. Յովսեփյան, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 254):

վակն է վերը նշված իշխանաց իշխան Վահրամի և Սեդայի: Հիշատակարանի սկզբում Սմբատը հիշում է իր պատրոնին, որը Կարսի վերջին թագավոր Գագիկի դուստր Մարիամն էր: Հայտնի է, որ Անիի թագավորության անկումից հետո հայ պայազատների մի մասը համախմբվել էին Գագիկ Աբասյանի շուրջը:

Հիշատակարանի վերջում գրիչը նշում է. «զՍմբատ որդի Վահրամայ՝ քրիստոսասեր և բարեյադրոդ պատրկին յիշեսցիք ի Տէր և զծնաւոյս իւր և եղբարս՝ զննջեցեալսն ի Քրիստոս»²³⁶: Այստեղից երևում է, որ այդ ժամանակ Սմբատ պատրիկը բավական առաջացած տարիքում էր, երբ կորցրել էր ծնողներին ու եղբայրներին: Հնարավոր է, որ նրա Սմբատ անունը ծագում է իր մեծանունն նախնիներից՝ Սմբատ Մագիստրոսի անունից (նկատենք, որ Պահլավունյաց տոհմագրության մեջ Սմբատ անուն չի հանդիպում): Հասկանալի է, որ լիակատար վստահություն չենք կարող ունենալ, թե մեր բոլոր ենթադրությունները ճիշտ են: Սակայն առկա նյութերը թույլ են տալիս Սմբատ Մագիստրոսի տոհմաձառը կազմելու առաջին փորձը կատարել:

Ամփոփելով՝ նշենք, որ Բագրատունյաց Հայաստանի իշխանական տների մասին ցայժմ եղած պատկերացումները մեծ մասամբ գտնվում են ավանդական պատմագրության ազդեցության տակ, ուր զգալիորեն ուռնացված է Պահլավունյաց տոհմի դերը: Կասկածից վեր է, որ այդ տոհմը բացառիկ դիրք ուներ Անիի թագավորության մեջ, սակայն դա չի նշանակում, որ մյուս իշխանատոհմերը պետք է արհեստականորեն կցվեն Պահլավունիներին: Ժամանակին այդպես է եղել Կեչառիսի հիմնադիր Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի պարագայում: Կարծում ենք, որ Անիի Բագրատունյաց թագավորության պատմության մեջ այսուհետև իր տեղը պետք է ունենա նաև Բագնայրի հիմնադիր Սմբատ Մագիստրոսի տոհմը:

²³⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 110:



ԱՐԴՅՈ՞Ք ՎԵՍՏ ՍԱՐԳԻՍՆ ԱՆՉԱՎԱԿ ԷՐ

Անիի թագավորության պատմության վերջին շրջանի ամենահայտնի գործիչներից մեկն էր Վեստ Սարգիսը, որին Բագրատունյաց թագավորության անկման դեպքերի առնչությամբ անդրադարձել են տասնյակ ուսումնասիրողներ, սակայն նրան նվիրված առանձին հետազոտություն առայժմ չկա: Ստորև կփորձենք պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք Վեստ Սարգիսն ունեցել է ժառանգներ, քանի որ աղբյուրներում այդ մասին տեղեկություններ չեն պահպանվել, թե՞ անգավակ էր: Այս հանգամանքի ճշտումը կարող է որոշ պարզություն մտցնել Անիի գահին տիրելու նրա հավակնության հարցում:

Վեստ Սարգիսը սյունեցի ազնվական լինելով հավանաբար Անիում վերելքի է հասել Գագիկ Ա-ի կնոջ՝ Սյունյաց Վասակ թագավորի դուստր Կատրամիդե (Կատրանիդե) թագուհու հովանավորության շնորհիվ: Այս մասին կարելի է դատել Սարգսի սեփականությունը հանդիսացող (նրա տերության մեջ մտնող)²³⁷ Տեկորի երկու արձանագրությունից, որոնցով թագուհին ու նրա որդի Աշոտը տեղական հարկեր են թողնում²³⁸: Տեկորից ոչ հեռու գտնվող Խծկոնքում (Տեկորո վանք) իր կառուցած Ս. Սարգիս եկեղեցու 1033 թ. արձանագրության մեջ Սարգիսը հպարտությամբ նշում է իրեն շնորհված բյուզանդական տիտղոսները և այն, որ բյուզանդական երեք կայսրերի սիրելի ծառան է եղել²³⁹:

Վեստ Սարգսի ընտանիքի մասին քիչ բան է հայտնի. Խծկոն-

²³⁷ 1036 թ. մի արձանագրության մեջ Տեկորի մասին ասվում է՝ «ի տէրութեան Սարգսի, արեւելից դուկիս» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 207):

²³⁸ Նույն տեղում, էջ 206:

²³⁹ «Ի թագաւորութեան Սմբատայ շահանշահի որդւո Գագկա շահանշահի ժամանակի, որ եր որդիացեալ եւ սիրելի ճորտ Սարգիս :գ: (3)ից թագաւորաց Հռոմոնց առեալ :գ:(3)ից պատիւ անթիպատ պատրիկ, վեստ եւ դուկ արեւելից...» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 209): Այդ կայսրերն էին՝ Վալսիլ Բ-ն (976-1025), Կոստանդին Ը-ն (1025-1028) և Ռոմանոս Գ Արգիրոսը (1028-1034):

քի վերոնշյալ արձանագրության մեջ նա հիշատակում է հորն ու երկու եղբայրներին²⁴⁰, իսկ նրա կինը՝ Տիկնացտիկինը, ինքն է հայտնում իր մասին Տեկորի 1042 թ. մի արձանագրության մեջ, որտեղ տալիս է նաև իր հոր անունը՝ Գրիգոր Մագիստրոս, և որին ուսումնասիրողների մեծ մասը շփոթում են Պահլավունի Գրիգոր Մագիստրոսի (Բջնեցու) հետ՝ չիմանալով որ այդ նույն անունով է հայտնի նաև մեկ այլ իշխան, Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր եկեղեցին կառուցող Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը: Վերևում մեր ուսումնասիրության մեջ նշել ենք, որ 1021 թ. Դվինում Գրիգոր Ապիրատի սպանությունից հետո նրա կինն ու զավակները եկել են Անի և այստեղ արժանացել Հովհաննես Սմբատի հովանավորությանը, նաև ստանալով «գաւառս եւ զիշխանութիւնս»²⁴¹: Պատճառն այն էր, որ թագավորը երեխտապարտ էր Գրիգոր Ապիրատ Մագիստրոսին իր կյանքը փրկելու համար: Նշել ենք նաև, որ հավանաբար հենց այդ ժամանակ (1021-ին հաջորդած մի քանի տարիներին) Հովհաննես Սմբատն իր հովանավորյալ որբուկին՝ Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի դստերը (հավանաբար նաև շռայլ օժիտ հատկացնելով), կնության է տվել Վեստ Սարգսին²⁴²: Պետք է կարծել, որ դրանից հետո իշխանն ավելի է մտերմացել թագավորի հետ, մասնավորապես հայտնի է, որ Հովհաննես Սմբատի մահվան ժամանակ Վեստ Սարգիսը նրա հոգաբարձուն էր ու պետական գանձարանը հսկողը²⁴³:

Կասկածն այն մասին, որ Վեստ Սարգիսը հավանաբար ան-

²⁴⁰ Արձանագրության այդ հատվածն է. «...կամ եղև եղբարց, որդոցս Եզդու՝ Ապիասնա եւ Խատապա տալ զմեր արկեալ եզին, որ ի գագկաւնս յեզերն երասիա ի վանքս Տեկորո, արեւշատութեան շաի (շահանշահի – Կ. Մ.) եւ դուկիս՝ մեզ, եւ ծնողաց մեղաց թողութեան» (Ն. Մարգիսեան, նշվ. աշխ., էջ 209): Վեստ Սարգսի եղբայր Ապիասանի անունը հանդիպում է նաև վանքի մեկ այլ վիմագրում, որտեղ նշվում է 1034 թ. նրա որդու՝ Հաջաջի վաղաժամ մահվան ու այստեղ թաղվելու մասին (նույն տեղում, էջ 213):

²⁴¹ Մատթեոս Ուռհայեցի, էջ 16-17:

²⁴² Տե՛ս աստ, էջ 27-28:

²⁴³ Արիստակես Լաստիվերցի, էջ 57:

ժառանգ է մահացել, մեզ մոտ առաջացել է Անիի մեծակա Ծառաքար (Մաղասերդ) ամրոցի պատմությունն ուսումնասիրելիս²⁴⁴։ Հայտնի է, որ Ծառաքարի վանքը բերդի է վերածել Վեստ Սարգիսը։ Սամվել Անեցին իր ժամանակագրության մեջ 1024 թ. ներքո նշելով, որ «Մեծապատիւ Վեստն Սարգիս, գկնի բագում շինուածոց, բերդից եւ եկեղեցեաց զիրաշալի վանքն զԽցկունս շինեաց» ավելացնում է՝ **«Նաեւ՝ զԾառաքար վանքն բերդ արարեալ, պարսպեալ հաստահեղոյս կրով, բրգունս ձուլածոյս...»**²⁴⁵։ Հասկանալի է, որ առնվազն 1024 թվականից այս բերդը պատկանում էր Վեստ Սարգսին և տրամաբանական կլիներ, եթե հետագայում այն անցներ նրա ժառանգներին (կամ տոհմակիցներին)։ Բայց պարզվում է, որ հետագայում այն անցել է Սարգսի կնոջ ազգականներին, ավելի ստույգ՝ եղբոր սերունդներին։ Դա հիմնականում կարող էր լինել երկու դեպքում. եթե Սարգիսն ինքն այն վաճառեր կնոջ եղբորը (որն այնքան էք հավանական չէ) կամ, եթե այդ բերդը նա ստացած լիներ որպես իր կնոջ օժիտ և նրանց անզավակ լինելու դեպքում մահից հետո կնոջ սեփականությունը վերադարձվեր նրա տոհմին²⁴⁶։

Անիի Ծաղդաղյան ամիրաների տիրապետության շրջանում՝

²⁴⁴ Կ. Մաթևոսյան, Անի քաղաքը և Ծառաքար-Մաղասերդը 11-14-րդ դդ., «Հուշարձան» տարեգիրք Դ-Ե, Երևան, 2008, էջ 236-247։ Այն, որ Ծառաքարն ու Մաղասերդը նույն ամրոցի տարբեր անուններն են, երևում է մի շարք հարակից տվյալներից և 1222 թ. հիշատակարանի ուղիղ վկայությունից. «ի յԱնի քաղաքին դռան ի վերա բերդ եւ անունն Մաղասերդ եւ բերդին անունն Ծառքար...» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 131)։

²⁴⁵ Սամուել Անեցի եւ շարունակողներ, էջ 183 (մեջբերումներում ընդգծումը մերն են - Կ. Մ.)։

²⁴⁶ Համանման իրավիճակի լուծումը հետագայում արտացոլվել է Մխիթար Գոշի դատաստանագրքում, տե՛ս Մխիթար Գոշ, Մատենագիրք Հայոց, հ. ԺԹ, գիրք Ա, Երևան, 2014, էջ 168, 289, 301։ Միջնադարում կանանց հողատիրական իրավունքների մասին տե՛ս նաև Խ. Սամուելյան, Հայ հին իրավունքի պատմությունը, Երևան, 1939, էջ 247։

1186 թ. անեցիները մահմեդական ավագաններից գրավեցին Ծառաքար բերդը, որն Անիի Բարսեղ եպիսկոպոսի տոհմի սեփականությունն էր: Այդ մասին գրում են Վարդան Արևելցին («...առին անեցիք զԾառաքար՝ զհայրենիսն տեառն Բարսեղի...»)²⁴⁷ և ավելի հանգամանորեն «Պատմություն քաղաքին յԱնույ» երկի անանուն հեղինակը, որը նշում է՝ «ԶԶԼԵ (1186)...ի սոյն թուխս... հարեան զօրօք քաղաքացիքն յԱնույ եւ գնացին ի վերայ ամուր բերդին, որ Ծարաքար անուանի, **որ էր բնիկ սեփական եւ ժառանգություն տեառն Բարսղի կաթողիկոսին հարցն եւ եղբարցն**»²⁴⁸: Անիի Բարսեղ Բ եպիսկոպոսը, որ աթոռակալության վերջին շրջանում (1195-ից) նաև Հռոմկլայի աթոռից անկախ կաթողիկոս հռչակվեց, Հասանյան (Ապիրատյան) տոհմի ներկայացուցիչն էր, որդին Հասան Մագիստրոսի, սա էլ որդին էր Մանուշե ամիրայի ժամանակ պատերազմում սպանված և Կեչառիսում հուղարկավորված Գրիգոր իշխանի: Վերջինիս հայրը՝ Վասակը, Վեստ Սարգսի կնոջ՝ Տիկնացտիկնոջ եղբայրն էր: Այն հանգամանքը, որ վերոնշյալ աղբյուրում նշվում է, թե Ծառաքարը Բարսեղի «բնիկ, սեփական», նաև «պապական» («հարցն») ժառանգությունն էր, ցույց է տալիս, որ բերդը բավական վաղուց է նրանց պատկանել: Դա չէր կարող լինել սելջուկների նվաճման ժամանակ, քանի որ նրանք գենքի ուժով գրաված ամեն բան իրենցն էին դարձնում: Մնում է, որ Ծառաքարը Հասանյաններին պատկանած լիներ մինչև 1064 թվականը: Դա այն շրջանն է, երբ կարող էին մահացած լինել Վեստ Սարգիսն ու Տիկնացտիկինը և անգավակ լինելու դեպքում վերջինիս օժիտը կվերադարձվեր իր տոհմին, տվյալ դեպքում՝ Վասակին:

Հասկանալի է, որ սա ենթադրությունների վրա հիմնված

²⁴⁷ Վարդան Արևելցի, էջ 136:

²⁴⁸ Մխիթար Անեցի, (հավելված. «Պատմություն քաղաքին յԱնույ»), էջ 109-110:

կարծիք է: Սակայն դրա օգտին խոսում են նաև այլ հանգամանքներ, մասնավորապես այն, որ ո՛չ Վեստ Սարգսի և ո՛չ կնոջ թողած արձանագրություններում խոսք չկա նրանց զավակների մասին: 1033 թ. վերոնշյալ արձանագրության մեջ Վեստ Սարգիսը նվիրատվության դիմաց Խծկոնքի վանահորից պահանջում է տարեկան չորս քառասունք կատարել իր ծնողների համար, իսկ իր և եղբայրների մահից հետո՝ իրենց համար: Տիկնացտիկինն էլ 1042-ի արձանագրության մեջ մեջ նշում է, որ բարեգործությունն արել է իր ծնողների հոգու և Շահնշահի (այդ ժամանակ նա Գագիկ Բ-ն էր) արևշատության համար²⁴⁹:

Մեզ թվում է, որ անգավակ լինելու հանգամանքն է նաև պատճառը, որ երբ Հովհաննես Սմբատի մահից հետո Վեստ Սարգսը փորձ է արել Անիում իշխելու, նրա դեմ համընդհանուր ընդվզում չի եղել: Քանի որ միջնադարում տոհմական ժառանգական իրավունքն օրինակարգության (լեգիտիմության) գլխավոր նախապայմանն էր, Վեստ Սարգիսը չէր կարող գահակալող տոհմի փոփոխության գնալ, այլ թերևս առաջարկել է, որ միայն ինքը կառավարի, իր կենդանության ժամանակ: Այդ պատճառով էլ բազմաթիվ համակիրներ է ունեցել, նրա դեմ ոտքի չեն ելել Անիի՝ այդ շրջանում մեծապես քաղաքականացած բնակչությունը (բավական է հիշել ընդվզումը Պետրոս կաթողիկոսի դեմ), ինչպես նաև Կարսի ու Տաշիր-Չորագետի Բագրատունիները: Սակայն այդ բանին դեմ են եղել Անիի թագավորության մյուս գորեղ իշխանները՝ Պահլավունիները, որոնք չեն հանդուրժել իրենց հավասար մեկի՝ իրենց վրա իշխելու նկրտումը և կազմակերպել են պատանի Գագիկ Բ-ի թագադրումը:

Ծանոթանալով այս դեպքերին ժամանակով ամենից մոտ կանգնած պատմիչի՝ Արիստակես Լաստիվերցու հայտնած տեղեկությանը (հետագայի պատմիչների մոտ ավելի շատ են դառ-

²⁴⁹ Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 207:

նում վիպական տարրերը՝ տեսնում ենք, որ Հովհաննես Մմբատի մահից հետո, երբ բյուզանդացիները ցանկացել են տիրել քաղաքին, Վեստ Սարգիսն էլ փորձել է ինքն այնտեղ կառավարել: Սա հակադրվում է պատմագրության մեջ տարածված այն քարացած տեսակետին, որ Վեստ Սարգիսը միշտ ձգտել է Անին բյուզանդացիներին հանձնել. «Արդ ի հասանել համբաւոյ մահու թագաւորացն ի լսելիս ինքնակալին Հոռոմոց, եւ գտեալ զգիր նամակին Հայոց, իբրեւ իւրեան սեպիական ժառանգութիւն՝ հոգ տարաւ առնուլ զքաղաքն Անի եւ զաշխարհն: **Իսկ մի ոմն ի գլխաւոր ազատացն Հայոց Սարգիս անուն՝ եղ շուք անձինն թագաւորել ի վերայ տանն Շիրակայ եւ որ շուք զնովաւ գաւառք. զի զամենայն գանձսն գտեալ ի տան թագաւորին Յովհաննիսի՝ յինքն ժողովեաց. վասն զի ի մահուան նորա նա էր հոգաբարձու նմա**»²⁵⁰:

Այստեղ ուշադրության է արժանի պատմիչի ձևակերպման նրբերանգը, երբ ոչ թե պարզապես գրում է, որ Վեստ Սարգիսն ուզեց թագավորել, այլ՝ «իր անձին թագավորելու շուք տվեց», քանի որ, թե՛ պատմիչի ու թե՛ ընդհանրապես 11-րդ դարի մարդկանց աշխարհընկալմամբ պարզապես անհնարին բան էր, որ որևէ տոհմի (այն էլ թագավորական) սեփականության վրա, առանց զենքի ուժով տիրանալու, այլ տոհմից սերող մի մարդ իշխեր:

Որպեսզի նշված ժամանակաշրջանում Անիում առաջացած իրավիճակի պատկերն ավելի ամբողջական լինի, հիշեցնենք, որ 1022 թ. Անիի թագավորությունը բյուզանդական կայսրությանը կտակած Հովհաննես Մմբատը կայսրից մագիստրոսի պատվաստիճան էր ստացել և նրա համար ամենամյա թոշակ կամ պարգևավճար էր նշանակվել: Այդ մասին գրում է Հովհաննես

²⁵⁰ Արիստակես Լաստիվերցի, էջ 57:

Սկիիիցեսը²⁵¹, իսկ Մատթեոս Ուռհայեցին նշում, որ այդ վարձատրությունը նա ստացել է 15 տարի («ամոնոյր տուրս և իշխանութիւնս ի Հռոմոնց զամս հնգետասան»)՝²⁵² Այսինքն, Հովհաննես Սմբատն ինչ որ չափով վեր էր անկել Անիում իշխող բյուզանդական մի պաշտոնյայի, որը նույնպես զավակ չունէր (որդին վաղ էր մահացել) և իշխելու էր մինչև իր կյանքի վերջը: Կարծում ենք, որ Վեստ Սարգիսը փորձել է հենց այս իրավիճակը շարունակել, բայց արդեն իր իշխանությամբ, մանավանդ, որ բյուզանդական բարձր տիտղոսների կողմ էր, ու թերևս անեցիներին համոզել է, որ կարող է լեզու գտնել կայսրության հետ՝ Անիի առկա կարգավիճակը պահպանելով և այնտեղ կառավարելով մինչև իր կյանքի վերջը:

Այն, որ Վեստ Սարգիսը դինաստիական փոփոխություն չի ձեռնարկել, այլ փորձել է միայն ժամանակավորապես կառավարել Անիում, երևում է նաև այն բանից, որ երբ քիչ անց Պահլավունիների ջանքերով Անիի գահին նստեց Գագիկ Բ-ն, անակնկալի եկած ու նրա իշխանությունը չճանաչած Վեստ Սարգիսի հետ ունեցած կարճատև ընդհարումից հետո, վերջինիս վերադարձրեց արքունիք շատ բարձր դիրքով: Եթե Վեստ Սարգիսը Բագրատունիների՝ Անիի նկատմամբ ունեցած ժառանգական իրավունքը յուրացնելու փորձ արած լիներ, այդ բանը նրան չէր ներվի ո՛չ անեցիների, ո՛չ էլ առավել ևս՝ Գագիկի կողմից:

Այսպիսով, կարծում ենք, որ պատմական տարբեր կարգի տեղեկությունների համադրումից կարելի է եզրակացնել, որ Բագրատունյաց պետության վերջին շրջանի հայտնի իշխան Վեստ Սարգիսը եղել է անզավակ, հանգամանք, որը որոշակի դեր է կատարել նրա 1041 թ. գործողությունների, ինչպես և նրա նկատմամբ եղած հանդուրժողական վերաբերմունքի մեջ:

²⁵¹ Հովհաննես Սկիիիցես, էջ 146:

²⁵² Մատթեոս Ուռհայեցի, էջ 94:


«ՊԱՀԼԱՎՈՒՆԻ» ՏՈՀՄԱՆՎԱՆ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԱՍՈՂԻԿԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մատենագրական և պատմագիտական երկերում միջնադարում կատարված ընդմիջարկությունները երբեմն էական նշանակություն կարող են ունենալ այս կամ այն խնդրի քննության տեսանկյունից: Այդպիսի մի դրվագի կանդաղատմանը ստորև:

2008 թ. մենք մի հոդված ենք հրատարակել՝ անդրադառնալով Մատենադարանի թիվ 2865 արժեքավոր ձեռագրին և նրա մեջ Հոհան (Յոհան) գրչի կատարած ուշագրավ ընդմիջարկություններին²⁵³: Դրանց ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հոհանը Շիրակի բնակիչ էր, համենայն դեպս այդ շրջանի պատմությանը քաջաձանոթ, հավնաբար 13-րդ դարի սկզբներին ապրած մի մարդ, որն իր իմացած որոշ տեղեկությունները մոռնել է նշված ձեռագրում իր ընդօրինակած պատմական երկերի՝ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի Տիեզերական պատմության (թերթ 137ա-242ա) և Արիստակես Լաստիվերցու Պատմության (թերթ 242ա-311բ) մեջ, ընդ որում, դրանք նշված գործերի առայժմ հայտնի ամենավաղ օրինակներն են:

Հոհան գրչի՝ Ասողիկի պատմության մեջ կատարած մի արժեքավոր ընդմիջարկության մեջ նշվում է Պահլավունի տոհմանունը և այն փաստը (նաև այլ աղբյուրներից հայտնի), որ Շիրակի Մարմաշենի վանքը կառուցել է Վահրամ Պահլավունին, իսկ Բագնայրի վանքը՝ Սմբատ Մագիստրոսը: Այս հարցին կրկին անդրադառնալու պատճառն այն է, որ 2011-ին «Մատենագիրք Հայոց» մատենաշարով լույս տեսած Ասողիկի Տիեզերական պատմության քննական բնագրում (կազմող Գուրգեն Մանուկ-

²⁵³ Կ. Մաթևոսյան, Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն, էջ 102-112:



Լսնկ. 1

յան) այս հատվածը սխալներով է, և Հոհան գրչի ընդմիջարկությունը ներկայացված է որպես Աստղիկի բնագրի բաղկացուցիչ մաս²⁵⁴։

Նախ տեսնենք, թե ինչ է գրել պատմիչը, և ինչ է հավելել գրիչը։

Պատմելով 998 թ. Մամյան ամիրայի դեմ՝ «ի սահմանս գեղջն Ծմբոյ», հայ և վրաց զորքի մղած ճակատամարտի մասին՝ Աստղիկն անվանապես նշում է Գագիկ Ա թագավորի հրամանով Անիի թագավորության վեց հազարանոց զորաբանակը գլխավորող զորավարներին. «Եւ Գագկայ յամենայն զօրացն Հայոց

²⁵⁴ Ստեփանոս Տարոնեցի Աստղիկ, Պատմութիւն տիեզերական, (բնագիրը պատրաստեց Գ. Մանուկեան), Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար, գիրք Բ, Երևան, 2011, էջ 818։

թիւն: 5 եւ Գագկայ³⁰ յամենայն զաւրացն
Հայոց հատեալ զգունդ³¹ ԶՌ³² յընտիր³³
ընտիր վառելոցն՝ գումարէ ի ձեռն իշխա-
նաց իշխանին Վահրամայ³⁴ որդւոյ Գրի-
գորոյ³⁵ Պահլաւունոյ³⁶, որ զՄարմաշէն
եւ զԲրգներն շինեաց³⁷, եւ Սմբատայ³⁸ մա-
ծիստոռոյ որդւոյ Վահրամայ³⁹, եւ մարզ-
պանին Աշոտոյ, եւ զաւրք թագաւորին

30 D գագկա

31 AE գունդ CO գունդս

32 AO վեց հազար BDT₂ ՋՌ T₁ 6,000

33 O ընտիր

34 A վահրամայ (a յաւելում լուսանցում)՝ պահա-
ւունոյ որ զմարմաշէն շինեց, որ զբզմերն շինեց

35 C թմագրում իշխանաց իշխան վահրամայ որդւոյ
գրիգորոյ. եւ սմբատայ մածիստոռոյ որդւոյ վահ-
րամայ եւ մարզպանին աշոտոյ պահլաւունոյ որ
զմարմաշէն շինեաց, որ զբզմերն շինեաց:

36 ABCO չի՛ր պահլաւունոյ

37 B չի՛ր որ զմարմաշէն շինեաց եւ զբզմերն շինեաց
D վահրամայ, լուսանցում գրիգորի պահլաւունոյ
որ մարմաշէն եւ զբզմերն շինեաց E թմագրում որ
մարմաշէն շինեաց, որ զբզմերն շինեաց D լու-
սանցում (աշոտոյ) պահլաւունոյ որ զմարմաշէն
եւ զբզմերն շինեաց

38 D սմբատա

39 D վահրամա

հատեալ զգունդ վեց հա-
զար զընտիր ընտիր վա-
ռելոցն՝ գումարէ ի ձեռն
իշխանաց իշխանին Վահ-
րամայ որդւոյ Գրիգորոյ, եւ
Սմբատայ մածիստոռոյ
որդւոյ Վահրամայ, եւ
մարզպանին Աշոտոյ»։ Այս
հատվածից աջ՝ լուսանցքում,
Հոհան գրիչն ավելացրել է.
«Պահլաւունոյ որ զՄար-
մաշէն շինեց։ Որ զԲզմերն
շինեց» (թերթ 236ա, լսնկ. 1):
Այսպիսով, գրիչը ցանկացել է
նշել իրեն հայտնի փաստն
այն մասին, որ Վահրամ
Պահլավունին Մարմաշենի
վանքն է կառուցել, իսկ
Սմբատ Մագիստրոսը՝ Բագ-
նայրը, այդ պատճառով եր-
կու տվյալն առանձնացրել է
վերջակետով։

Լսնկ. 2

Աստղիկի պատմությունը 1885-ին հրատարակած Ստեփան
Մալխասյանցի ձեռքի տակ եղած օրինակների մեջ չի եղել Մա-
տենադարանի թիվ 2865 հնագույն ձեռագիրը, այդ պատճառով
նրա մոտ այս ընդմիջարկված հատվածը ներկայացված է բնագ-
րում (ըստ հետագա գրիչների ընդօրինակությունների), Վահրա-
մի հոր անունից հետո, իսկ տողատակի տարընթերցման մեջ՝

Աշոտ մարգապանի անունից հետո²⁵⁵: Այստեղ ընդմիջարկության առկայության մասին կռահել է դեռ Ներսես Ալկինյանը²⁵⁶, իսկ վերոնշյալ ձեռագիրն ակներև է դարձնում այդ փաստը:

Այժմ տեսնենք, թե նշված հատվածն ինչպես է ներկայացված 2011-ի հրատարակության մեջ, որի բնագիրը կազմող Գ. Մանուկյանն օգտագործել է մեծ թվով ձեռագրեր, իսկ Մատենադարանի թիվ 2865 ձեռագիրը կոչում է մայր օրինակ և համգամանորեն գրում դրա արժանիքների մասին (բնագրի հրատարակության մեջ այն համարվում է A օրինակ)²⁵⁷:

Նախ այստեղ, ըստ ուշ ընդօրինակությունների, Գրիգորի անունից հետո բնագիր է մուծվել «Պառիալունայ, որ զՄարմաշէն եւ զԲրգներն շինեաց» հատվածը (տե՛ս լսնկ. 2), որը պատմականորեն սխալ է, քանի որ Մարմաշենն ու Բգներ-Բագնայրը (ոչ թե Բրգները) նույն մարդը չի կառուցել: Տողատակի ծանոթագրություններում (տարընթերցումներում) մոտավորապես նույն բանն է, ըստ այլ օրինակների, որտեղ հատվածը դրված է Վահրամի, Գրիգորի կամ Աշոտ մարգապանի անուններից հետո, բնագրում կամ լուսանցքում: Իսկ մայր (A) օրինակի ընդմիջարկությունը բերված է երկու սխալով՝ գրված է «Պառիալունայ», փոխանակ՝ «Պառիա-

²⁵⁵ Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 270:

²⁵⁶ Ն. Ալկինյանը գրում է. «Ինձի կը թուի թէ Ասողիկի բնագիրը ունեցած է լուսանցագրութիւններ, որոնք սխալմամբ բնագրին մէջ առնուած են. կառաջարկեմ կարդալ. «...որդոյ Գրիգորոյ Պառիալունայ, որ զՄարմաշէն շինեաց, եւ Սմբատա մաժիստոռոսի որդոյ Վահրամայ, որ զԲրգներն շինեաց, եւ մարգապանին Աշոտոյ» (Ն. Ալկինեան, Ներսես Լամբրոնացի, էջ 358):

²⁵⁷ Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, էջ 630-633: Ցավոք, այս հիմնական օրինակն անտեսվել է նաև Հոհանի մեկ այլ կարևոր լրացման դեպքում: Ասողիկի Պատմության «Յաղագս շինելոյն Գագկայ արքային ի քաղաքն Անույ գեկեղեցին մեծ անուամբ սրբոյն Գրիգորի» (ՄՄ. ձեռ. 2865, թերթ 240բ-241ա) հատվածի վերնագիրը Հոհանը լրացրել է նույն կարմիր թանաքով, հետեյալ բառերով. «Տրդատ վարդապետ եկեղեցոյն»: 2011 թ. հրատարակության մեջ այն բաց է թողնված, դրա փոխարեն հետագայի սխալ արտագրումներ են տեղ գտել տողատակում:

ւունոյ» և անտեսված է կետադրական նշանը՝ Մարմաշենի անունից հետո դրված վերջակետը, որով Հոհանն ուզել է շեշտել, որ այդ վանքի և Բագնայրի կառուցողները տարբեր մարդիկ են: Ըստ էության նրա գրած առաջին բառերը՝ «Պալիաւունոյ, որ զՄարմաշէն շինեց» վերաբերում են Վահրամին (նախատեսված էին նրա անունից հետո կարդալու համար և այդ տողի հավասարությամբ են), իսկ «Որ զԲգնէրն շինեց» խոսքերը՝ Սմբատ Մագիստրոսին:

Այլ աղբյուրներից հայտնի է, որ Բագնայրի վանքը 1010 թ. կառուցել է Սմբատ Մագիստրոսը²⁵⁸, իսկ Մարմաշենի վանքը, շինարարական արձանագրության համաձայն, Վահրամ Պահլավունին ավարտել է 1029-ին: Սա նշանակում է, որ 1004 թվականին իր պատմության շարադրանքն ավարտած Ասողիկը պարզապես չէր կարող իմանալ այդ մասին: Էական հանգամանք է նաև, որ Պահլավունի տոհմանունն առաջին անգամ օգտագործել են այդ տոհմի ներկայացուցիչները, որոնք այդ ձևով փորձում էին մեջտեղ բերել իրենց տոհմական իրավունքը կաթողիկոսական աթոռի նկատմամբ (որպես Գրիգոր Լուսավորչի տոհմակիցներ) Պետրոս Ա կաթողիկոսի (1019-1054) աթոռակալության շրջանում: Այսինքն, Ասողիկի ապրած, առավել ևս՝ պատմությունը գրելու ժամանակ, այդ տոհմանունը դեռևս չէր շրջանառվում²⁵⁹:

²⁵⁸ «Հայոց ՆԾԹ (1010). Սմբատ Մագիստրոս շինեաց զհրեշտակարանակ եւ զփափագատենչ վանքն, որ Բագնայր յորջորջի» (Մամուլ Անեցի եւ շարունակողներ, էջ 182):

²⁵⁹ Գրիգոր Մագիստրոսին նվիրված մենագրության մեջ Լ. Խաչերյանը հանգամանորեն քննելով Պահլավունիների մասին վաղ հիշատակությունները և նրանց իսկ թողած բոլոր արձանագրությունները հանգում է այն եզրակացության, որ նրանք բավական ուշ են որդեգրել այդ տոհմանունը: Հեղինակի համար առեղծված է մնում, թե ինչպես է, որ 1004 թ. իր Պատմությունն ավարտած Ասողիկը նշել է Պահլավունի տոհմանունը, և սկսմա դա համարում է այդ անվան ամենավաղ հիշատակությունը (Լ. Խաչերեան, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս, էջ 30):

Եվ վերջապես, Մատենադարանի թիվ 2865 ձեռագրի համապատասխան թերթն էլ պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ նշված հատվածը մի ընդմիջարկություն է (սկզբնապես լուսանցքում գրված) և Ասողիկի պատմության բնագրի հետ կապ չունի:

Այսպիսով, հիմնվելով հնագույն ընդօրինակության վրա, կարող ենք ասել, որ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն իր պատմության մեջ խոսելով 998 թ. ճակատամարտին մասնակցած հայ իշխանների մասին «Պահլավունի» տոհմանունը չի տալիս, ինչպես նաև չի հիշատակում Մարմաշենի ու Բագնայրի կառուցումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արգալյան Գ., Ո՞վ է Գրիգոր Մագիստրոսի հիշատակած Նիկո-
ղաս գորավարը, «Լրաբեր» հաս. գիտ., 1971, N 9:

Ալիշան Դ., Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873:

Ալիշան Դ., Այրարատ, Վենետիկ, 1890:

Ակինեան Ն., Գրիգոր Ապիրատ, որդի Հասանայ, Մագիստրոս,
«Ակօս», 9, 1945:

Ակինեան Ն., Ներսես Լամբրոնացի («Ազգաբանութիւն Պառիկա-
ւունեաց, Հասանեանց, Թոռնիկեանց եւ Հեթումեանց»),
Վիեննա, 1956:

Անառայան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան,
1942, հ. Բ, Երևան, 1944:

Ավագյան Ս., Վիմական արձանագրությունների բառարանութ-
յուն, Երևան, 1978:

Արիստակիսի Լաստիվերտցոյ Պատմութիւն, աշխատասիրութ-
յամբ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963:

Արևշատյան Ա., Գրիգոր Մագիստրոսը շարականագիր և գեղա-
գետ, Երևան, 2015:

Արևշատյան Ս., Գրիգոր Մագիստրոս, «Հայ մշակույթի նշանա-
վոր գործիչներ, V-XVIII դարեր», Երևան, 1976:

Բասմաջեան Կ., Հայերէն արձանագրութիւնք Անույ, Բագնայրի
եւ Մարմաշինու, Պարիս, 1931:

Բարթիկյան Հ., Ուռհայեցու երկում հանդիպող «Մարցե» անվան
մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, N 2:

Բարթիկյան Հ., Հայ-բյուզանդական հետազոտություններ,
Երևան, 2002:

Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն յառաջաբանով եւ ծա-

- նօթագրություններով առաջին անգամ ի լոյս ընծայեաց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապօլ, 1910:
- Գրիգոր Մագիստրոսի մատենագրությունը (Գ. Մուրադյան), «Մեկնութիւն քերականին», Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, Երևան, 2012:
- Գրիգոր Տղա (բանաստեղծություններ և պոեմներ), աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի, Երևան, 1972:
- Դիվան հայ վիմագրության, պր. I, կազմեց՝ Հ. Օրբելի, Երևան, 1966:
- Դիվան հայ վիմագրության, պր. IX, կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, 2012:
- Թումանյան Բ., Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1968, էջ 138-139:
- Լեո, Անի, Երևան, 1963:
- Խաչերեան Լ., Գրիգոր Պահլավունի Մագիստրոս, Լոս Անճելըս, 1987:
- Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:
- Կիլիսեւերեան Բ., Ծովք (Ծովք-Տլուք եւ Հռոմ-Կլայ), Վիեննա, 1904:
- Կոստանեանց Կ., Վիմական Տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913:
- Հակոբյան Թ., Երևանի պատմությունը, Երևան, 1969:
- Հակոբյան Թ., Անիի պատմություն, Երևան, 1980:
- Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988:
- Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984:
- Հայոց պատմություն (ՀՀ ԳԱԱ հրատ.), հ. II, գիրք երկրորդ, Երևան, 2014:
- Հայ ժողովրդի պատմություն (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), հ. III, Երևան, 1976:

Հարությունյան Ս., Անրերդ, Երևան, 1978:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն (գրաբար, աշխարհաբար), աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Երևան, 1996:

Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1979:

Հովսեփյան Գ., Հավուց Թառի Ամենափրկիչը և նույնանման հուշարձանները հայ արվեստի մեջ, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երևան, 1987:

Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. Բ, Անթիլիաս, 2003:

Մագուռայան Գ., Ընտրեալոյ յԱստուծոյ. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը, Երևան, 1995:

Մաթևոսյան Կ., Սարգիս վարդապետ Անեցի, «Անի», 1992, N 1:

Մաթևոսյան Կ., Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997:

Մաթևոսյան Կ., Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն և կատարած հավելումները, «Էջմիածին», 2008, Զ-Է:

Մաթևոսյան Կ., Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ «Պատմա-բանասիրական հանդես», 2008, N 3:

Մաթևոսյան Կ., Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը և նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», թիվ 18, Երևան, 2008:

Մաթևոսեան Կ., Սմբատ Մագիստրոս, «Հանդես ամսօրեայ», 2008:

Մաթևոսյան Կ., Անի քաղաքը և Ծառաքար-Մաղասբերդը 11-14-րդ դդ., «Հուշարձան» տարեգիրք Դ-Ե, Երևան, 2008:

Մաթևոսյան Կ., Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Երևան, 2009:

- Մաթևոսյան Կ., Անի-Շիրակի պատմության էջեր, Երևան, 2010:
- Մաթևոսյան Կ., Հավուց թառի վանքը, Երևան, 2012:
- Մաթևոսյան Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990:
- Մանր ժամանակագրություններ, հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, հ. 2, Երևան, 1956:
- Մանուչարյան Ա., Նորահայտ հիշատակություն՝ «Հայոց ասպետ» վիմագրությամբ, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք Բ, Երևան, 2007:
- Մանուչարյան Ա., Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ, Երևան, 2015:
- Մատենադարան, ձեռ. թիվ 427, 1520, 3613, 3681:
- Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), (գրաբար տեքստը ըստ Ժամանակագրության Վաղարշապատի 1898 թ. հրատարակության), Երևան, 1991:
- Մարգարյան Հ., Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980:
- Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860:
- Մխիթար Անեցի, Մատենան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Երևան, 1983:
- Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, (աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի), Երևան, 1975:
- Մխիթար Գոշ, Մատենագիրք Հայոց, հ. ԺԹ, գիրք Ա, Երևան, 2014:
- Մխիթարյան Ս., Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Երևան, 2001:
- Մկրտչյան Ա., Սյունյաց մետրոպոլիտական աթոռը Օրբելյանների իշխանության ժամանակ, «Էջմիածին», Է, 1988:
- Մուրադյան Գ., Սահակի տեսիլը Ղազար Փարպեցու «Պատ-

մության» մեջ, Լևոն Խաչիկյան 90, Նյութեր ծննդյան 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի, Երևան, 2010, էջ 193-201:

Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977:

Մուրադյան Պ., Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստանը, պր. Ա, Երևան, 2008:

Յովսեփեան Գ., Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951:

Յովսեփեան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969:

Ներսեսի Ծնորհալոյ Հայոց կաթողիկոսի թուղթք, Վենետիկ, 1873:

Ներսեսի Ծնորհալոյ Բանք չափաւ, Վենետիկ, 1928:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837:

Սաղումյան Ս., Մարմաշենի վանքը, Ս. Էջմիածին, 1998:

Սամուելյան Խ., Հայ հին իրավունքի պատմությունը, Երևան, 1939:

Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014:

Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջարանով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893:

Սարգիսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:

Սարգսյան Գ., Թեղենյաց վանքի պեղումները և Բջնիի մի արձանագրության առթիվ, Հայկական ՍՍՀ-ում 1983-1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. զեկուցումների թեզիսներ, Երևան, 1985:

- Սարգսյան Գ., Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, Լրաբեր հաս. գիտ., 1988, թիվ 4:
- Սարգսյան Գ., Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը» ժողովածու 12, Երևան, 2002:
- Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956:
- Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Երևան, 2000:
- Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական (բնագիրը պատրաստեց Գ. Մանուկեան), Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, գիրք Բ, Երևան, 2011:
- Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ՝ Ստ. Մայխասեանցի, Սանկտ-Պետերբուրգ, 1885:
- Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910:
- Սրբոյն Ներսեսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847:
- Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն (գրաբար տեքստը ըստ Վենետիկի 1862 թ. տպագրության), աշխարհաբար թարգմանությունը Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 2001:
- Վարդանյան Վ., Ծովքի Պահլավունիները դարաշրջանի որոգայթներում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, «Հայոց պատմության հարցեր», թիվ 8, Երևան, 2007:
- Վարդանյան Վ., Պահլավունիները Հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, Երևան, 2008:
- Տարեգիրք Սմբատայ Սպարապետի, Փարիզ, 1856:

- Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965:
- Տեր-Մինասյան Ե., Ամբերդաձորի արձանագրությունները, «Էջմիածին», 1961, Ե:
- Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007:
- Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, Մ. Էջմիածին, 2001:
- Каждан А., Армяне в составе господствующего класса Византийской империи в XI–XII вв., Ереван, 1975.
- Орбели И., Надписи Мармашена, Избранные труды, Ереван, 1963.
- Юзбашян К., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988.
- Claude Mutafian, L'Arménie du Levant (XI-XIV siècle), Tome II, Paris, 2012.
- Horomos monastery: Art and History (Centre de recherche d'Histoire et Civilisation de Byzance, Monographies 50), Paris, 2015.
- Thierry J-M., Le couvent Arménien d' Horomos, Louvain-Paris, 1980.

ՀԱՎԵԼՎԱԾ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳՐԹԵՐ

1. Արուճ, Երևան, «Հայաստան» հրատ., 1987:
2. Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, Երևան, 1990:
3. Հայաստանի Ազգային պատկերասրահ. Ուղեցույց, խմբագրությամբ Շ. Խաչատրյանի, («Հայ հին և միջնադարյան կերպարվեստ» բաժինը՝ էջ 32-57), (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն), Փարիզ, 1992:
4. Ավետարանական պատկերներ (համահեղինակ՝ Ա. Ավետիսյան), Երևան, 1993:
5. Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը (Ս. Էջմիածնի հրատ.), Ս. Էջմիածին, 1997:
6. Հայաստան. Ուղեցույց ուխտավորների և զբոսաշրջիկների համար («Հայոց Եկեղեցին առաքյալներից մինչև մեր օրերը» բաժինը՝ էջ 75-122), Հայկական Հանրագիտարանի հրատ., Երևան, 1998:
7. Կեչառիս – 1000 (համահեղինակներ՝ Մ. Հասարթյան, Վ. Դևրիկյան), (հայերեն, ռուսերեն, անգլերեն), Ս. Էջմիածին, 2004:
8. Մուղնու Սուրբ Գևորգ վանքը («Մուղնի» հրատ.), Երևան, 2000: Վերահրատարակություն լրացումներով՝ Ս. Էջմիածին, 2009 (ռուսերեն և անգլերեն ամբողջական թարգմանությամբ):

9. Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Մատենադարանի հրատ., Երևան, 2009:
10. Մոմիկ մանրանկարիչը (համահեղինակ՝ Լ. Չաքարյան), արժ-ուսումնասիրություն, Մատենադարանի հրատ., «Նաիրի», Երևան, 2010: Նույնը անգլերեն. Miniaturist Momik, Compiled with and introduction by Karen Matevosyan and Lilit Zakaryan, Yerevan, 2010.
11. Մոմիկ (ՀՀ մշակույթի նախարարություն), (հայերեն, անգլերեն), Երևան, 2010:
12. Անի-Շիրակի պատմության էջեր (հոդվածների ժողովածու), Երևան, 2010:
13. Հեթում Պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը, «Մուղնի» հրատ., Երևան, 2011:
14. Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, (բնագիրը կազմեց՝ Ա. Հայրապետյանը, առաջաբանը՝ Կ. Մաթևոսյանի), Մատենադարանի հրատ., «Նաիրի», Երևան, 2011:
15. Հավուց թառի վանքը, Երևան, «Մուղնի» հրատ., 2012:
16. Հաղբատի Ավետարանը, Երևան, «Նաիրի», 2012:
17. Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը (համահեղինակ՝ Լ. Թումանյան, Ա. Ասրյան), Ս. Էջմիածին, 2013:
18. Սամուել Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Երևան, «Նաիրի», 2014:
19. Surb Gevorg Cathedral. The Frescoes, Preface authors Karen Matevosyan, Avet Avetisyan, Yerevan, 2015 (անգլերեն, հայերեն, վրացերեն, ռուսերեն):
20. Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մազիստրոս, «Մուղնի» հրատ., Երևան, 2015:

ՀՈԳՎԱԾՆԵՐ

21. Արուհի տաճարի 666 թ. որմնանկարը, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1981, N 3, էջ 85-92:
22. Հայոց կաթողիկոսարանի մատենադարանն ու գրչատունը Անիում, «Էջմիածին», 1981, Ժ, էջ 41-45:
23. Իշխան Գրիգոր Սամիկոնյան-պատվիրատու և հովանավոր եկեղեցական շինարարության, «Էջմիածին», 1981, Դ, էջ 39-44:
24. Հռոմոնոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, «Պատմա-բանասիրական հանդես» 1982, N 1, էջ 143-149:
25. Գրիչ և մանրանկարիչ Իզնատիոս Հռոմոնոսի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, N 1, էջ 121-133:
26. Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու որմնանկարը, «Էջմիածին», 1982, Դ, էջ 53-55:
27. Արուհի Ս. Գրիգոր և Թալինի Կաթողիկե տաճարների որմնանկարները, «Էջմիածին», 1982, Ը-Թ, էջ 67-70:
28. Նկարիչ մարգարեի «Մուտք Երուսաղեմ» մանրանկարը, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1982, N 9, էջ 52-63:
29. Եղվարդի Ս. Չորավար եկեղեցին և մենաստանը, «Էջմիածին», 1983, Է, էջ 49-52:
30. Ձեռագիր գրված Անի քաղաքի Բեխենց վանքում, «Պատմա-բանասիրական հանդես», 1984, N 1, էջ 221-225:
31. Արջո Առինի դպրոցը XIII դարում, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1984, N 3, 67-70:
32. Հռոմոնոսի գրչության կենտրոնի պատմությունից, «Էջմիածին», 1984, Ե, էջ 45-49:
33. Անի քաղաքի Ներքին բերդի Ավետարանը, «Էջմիածին», 1984, ԺԱ-ԺԲ, էջ 110-115:

34. Անիի քաղաքացիների դիմանկարները «Հաղբատի Ավետարանի» խորաններում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1984, N 3, էջ 162-168:
35. Գրիչ և մանրանկարիչ Հովհաննես Սանահինեցու ինքնանկարները, «Գարուն», 1984, N 10, էջ 91-93:
36. 14-րդ դարի հիշատակարանները Անի քաղաքի և անեցիների մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1985, N 3, էջ 108-114:
37. Չորս խորան «Բագնայրի Ավետարանից», ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1985, N 10, էջ 93-97:
38. Անիի եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկ գրիչը, «Էջմիածին», 1985, Ը, էջ 38-44:
39. Կազմարարությունը Հռոմոսի գրչության կենտրոնում, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1986, N 10, էջ 64-68:
40. Scriptoria et bibliothèques d'Ani, "Revue des études Arméniennes", Tome XX, Paris, 1986-1987, p. 209-221.
41. Անի քաղաքի և նրա մերձակա վանքերի ձեռագրական հավաքածուները, «Հուշարձան» տարեգիրք, հ. Ա, Երևան, 1987, էջ 96-98:
42. Անի քաղաքի գրչության կենտրոնը, «Պատմա-բանասիրական հանդես», 1988, N 1, էջ 132-137:
43. Վրթանես Բերթողի հայտնած մի տեղեկության շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1989, N 1, էջ 242-244:
44. Հազարամյա մշակույթի վկան («Էջմիածնի Ավետարան» - 1000), «Արվեստ», 1989, N 10, էջ 22-25:
45. Անիի Մայր տաճարը - հոգևոր և մշակութային կենտրոն, «Էջմիածին», 1989, ԺԱ-ԺԲ, էջ 105-110:
46. Հայոց աշխարհիկ որմնանկարչությունը, «Արվեստ», 1990, N 9, էջ 17-22:
47. Գրչի և ստացողի միջնորդը (Վաճառքի համար նախատես-

- ված գիրքը միջնադարյան Հայաստանում), «Պատմա-բանասիրական հանդես», 1990, N 4, էջ 121- 131:
48. Հայոց Կեռան թագուհին, «Մշակույթ», 1990, N 1, էջ 49-51:
 49. Կոշավանքը VII-XIV դդ., «Էջմիածին», 1991, Ա-Բ-Գ, էջ 95-108:
 50. Կեռան թագուհու և Հեթում արքայորդու Ավետարանը, «Գիտություն և տեխնիկա», 1991, N 5, էջ 46-50:
 51. Հայոց պատմության բախտորոշ 1441 թվականը, «Էջմիածին», 1991, Է-Ը, էջ 5-17:
 52. Անիի մանրանկարչությունը, «Արվեստ», 1991, N 10, էջ 28-35:
 53. Երեք երեւելի վարդապետ (Ստեփանոս Մանուկ Կարմիր-վանեցի, Պետրոս Ականատես, Ստեփանոս Տերիուսկանոր-դի), «Գարուն», 1991, N 8, էջ 80-82:
 54. Սարգիս վարդապետ Անեցի, «Անի», 1992, N 1, էջ 40-47:
 55. Սամուել Անեցու «Ժամանակագրության» ավարտման թվականը և պատվիրատուն, «Պատմա-բանասիրական հանդես», 1992, N 1, էջ 156-162:
 56. Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և քաղաքամայր Անին, «Էջմիածին», 1992, Ը, էջ 38-45, Թ-Ժ-ԺԱ, էջ 115-125, 1993, Ա-Բ-Գ, էջ 119-134:
 57. Հռոմոսի վանքի պատմության նոր էջեր (ԺԴ-ԺԹ դդ.), «Էջմիածին», 1993, Դ-Ե-Զ, էջ 72-79:
 58. Ավետարանական թեմաները կերպարվեստում, «Արվեստ», 1993, N 9-12, էջ 4-7:
 59. Անի քաղաքի հոգևորականությունը, «Էջմիածին», 1993, ԺԱ-ԺԲ, էջ 44-53, 1994, Բ-Գ, էջ 56-70:
 60. Անեցի Տիգրան Հոնենցը եկեղեցաշինարար և մշակույթի հովանավոր, «Արվեստ», 1993, N 1-2, էջ 11-13:
 61. Անի քաղաքի եկեղեցիները, «Էջմիածին», 1994, ԺԱ-ԺԲ, էջ 48-80:
 62. Անիի եպիսկոպոսական աթոռը, «Բազմավեպ», Վենետիկ, 1996, էջ 254-271, 1997, էջ 153-170:

63. Անիում Չաքարյանների հաստատման ժամանակն ըստ նորահայտ հիշատակարանի, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N 1, էջ 280-283:
64. Հայ մանրանկարիչների յիշատակարանները, «Միոն» (Երուսաղեմ), 1997, հուլիս-դեկտեմբեր, էջ 312-326:
65. Խոր Վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը, «Էջմիածին», 1997, Բ-Գ, էջ 174-178:
66. Հառիճի վանքը ԺԳ դարի սկզբին (գրչության կենտրոնը և հարակից հարցեր), «Էջմիածին», 1998, Ա, էջ 115-124:
67. Հայաստանի թեմերը (պատմություն և արդիականություն), «Էջմիածին», 1998, Բ-Գ, էջ 185-190:
68. Դրուագներ Նորավանքի եպիսկոպոսական աթոռի պատմությունից (Արատես և Վերին Նորավանք), «Նորավանք» տարեգիրք Բ, Մոնթրեալ-Երևան, 2001, էջ 62-76:
69. Les clercs dans la cite ou la ville «aux mill et une eglises», ANI capitale de l'Arménie en l'an mil, Paris musées, 2001, p. 136-143.
70. Վարդան Արևելյին Անիի մասին, «Էջմիածին», 2002, ԺԱ-ԺԲ, էջ 92-95:
71. Սամուել Անեցի (կենսագրական լրացումներ), «Էջմիածին», 2003, Ձ, էջ 47-57:
72. Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, «Էջմիածին», 2004, Ա, էջ 77-91:
73. Սամվել Անեցու Ժամանակագրության հնագույն ձեռագրերը, ակադեմիկոս Ն. Մաթի ծննդյան 140 և մահվան 70-ամյակներին նվիրված ժողովածու, Երևան, 2005, էջ 37-48:
74. Հովհաննես Սարկավազի պատմական թղթերն ըստ Սամվել Անեցու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, «Հայոց պատմության հարցեր», գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երևան, 2005, էջ 122-131:
75. Հովհաննես Սարկավազի գործունեությունն Անիում, «Էջմիածին», 2005, Է-Ը, էջ 59-72:

76. Սամվել Անեցին Անիի պատմության մասին, «Էջմիածին», 2006, Բ-Գ, էջ 72-85:
77. Հավուց Թառի վանքի և Այիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, «Բանբեր Մատենադարանի», 17, Երևան, 2006, էջ 147-167:
78. Սամվել Անեցու Ժամանակագրության Մխիթար Անեցու ընդօրինակությունը, «Էջմիածին», 2006, Ժ-ԺԱ, էջ 88-100:
79. Պատմամշակութային նորարաց էջեր, «Հայ արվեստ», 2006, N 4, էջ 34-36:
80. Մշո Ս. Կարապետ վանքի պատմության մի դրվագ, «Պատմա-բանասիրական հանդես», 2007, N 1, էջ 188-197:
81. Ժամանակագրական նոր միավորներ Մատենադարանի երկու ձեռագրից, «Հանդես ամսօրեայ», 2007, էջ 257-276:
82. Սամվել Անեցու Ժամանակագրության Հայրապետ վարդապետի ընդօրինակությունը, «Հայկազեան հայագիտական հանդես», հտ. ԻԷ, 2007, էջ 77-88:
83. Ժամանակագրական նոր միավորներ Սամվել Անեցու ձեռագրերից, «Էջմիածին», 2007, Ե, էջ 50-59:
84. Սամվել Անեցու Ժամանակագրության Ստեփանոս Օրբելյանի օրինակը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք Բ, Երևան, 2007, էջ 180-192 :
85. Գրիգոր Այիրատ Մագիստրոսը և նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», թիվ 18, Երևան, 2008, էջ 67-93:
86. Սմբատ Մագիստրոս, «Հանդես ամսօրեայ», 2008, էջ 173-186:
87. Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերի աղբյուրագիտական արժեքը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, «Հայ աստվածաբան», գիտական հոդվածների ժողովածու, 2008 թ., հ. Բ, էջ 257-266:
88. Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն և կատարած հավելումները, «Էջմիածին», 2008, Զ-Է, էջ 102-112:

89. Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ «Պատմա-քանասիրական հանդես», 2008, N 3, էջ 3-30:
90. Անի քաղաքը և Ճառաքար-Մաղասերդը 11-14-րդ դդ., «Հուշարձան» տարեգիրք, Դ-Ե, Երևան, 2008, էջ 236-247:
91. Արունի և Թալինի պատմության էջեր, «Էջմիածին», 2009, Ա, էջ 50-62:
92. Գրիգոր Հառիճեցու նորայայտ թուղթը, «Հանդես ամսօրեայ», 2009, էջ 171-178:
93. Հոռոմոսի վանահայրերի գավազանագիրքը, «Էջմիածին», 2009, Է, էջ 60-64:
94. Գրիգոր Պիխտ Շիրակացի, «Էջմիածին», 2009, Ժ, էջ 95-105:
95. Les tentatives de restauration du siège Patriarcal d'Ani au XIIe siècle, L'Eglise Arménienne entre Grecs et Latins fin XIe-milieu XVe siècle, Geuthner, Paris 2009, p. 235-240.
96. Բազմայրի վանքի հազարամյակը, «Էջմիածին», 2010, Բ, էջ 53-76:
97. Արունի հնագոյն բազիլիկ եկեղեցին, «Հանդես ամսօրեայ», 2010, էջ 198-211:
98. Հերում Կոռիկոսցու ժամանակագրությունը և նորահայտ ժամանակագրական լրացումները, Լևոն Խաչիկյանի – 90, Նյութեր ծննդյան 90-ամյակին նվիրված միջազգային գիտա-ժողովի, Երևան, 2010, էջ 119-149:
99. Հերում Կոռիկոսցու լրացումները Սամվել Անեցու ժամանակագրության մեջ, «Էջմիածին», 2010, Թ, էջ 48-61:
100. Սամուել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց...» ժամանակագրութիւնը, «Հայկազեան հայագիտական հանդես», 2011, հ. ԼԱ, էջ 73-91:
101. Իլու «Քառասուն խորան Ս. Աստուածածին» եկեղեցու կառուցման մասին, «Հանդես ամսօրեայ», 2011, էջ 409-418:

102. Սամվել Անեցին և նրա շարունակողները մի քանի վանքերի կառուցման մասին, «Էջմիածին», 2012, Բ, էջ 10-21:
103. Լրացումներ Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերում, «Էջմիածին», 2013, Ա, էջ 130-139:
104. Հոռոմոսի վանքի հնագոյն եկեղեցու անուան շուրջ, «Հանդես ամսօրեայ», 2013, էջ 311-326:
105. Հավուց թառի գրչության կենտրոնը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 19, Երևան, 2013, էջ 159-172:
106. Վիմագրական նշխարներ Արևմտյան Հայաստանից, «Էջմիածին», 2015, Դ, էջ 142-153:
107. Գրիգոր Մագիստրոսը եւ կաթողիկոսական աթոռի անցումը Պահլավունիներին, «Հանդես ամսօրեայ», 2015, էջ 89-138:
108. Գրիգոր Ապիրատ Մագիստրոս. 11-րդ դարի մոռացված մեծ իշխանը, «Վեմ», 2015, N 3, էջ 24-41:
109. “History of the Monastery of Horomos”, in Horomos monastery: Art and History (Centre de recherche d’Histoire et Civilisation de Byzance, Monographies 50), Paris, 2015, pp. 17-53.
110. Մրենի եկեղեցու շինարարական առանձնահատկությունները, վարպետանշանները և որոշ վիմագրեր (համահեղինակ՝ Ա. Ղազարյան), «Պատմաբանասիրական հանդես», 2015, N 3:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	5
ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՈՐԴԻ ՀԱՍԱՆԻ (ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏ)	7
Գրիգոր Ապիրատ երկանունը	16
Տոհմական ծագումը	21
Գրիգոր Ապիրատ մագիստրոսի զավակները	27
ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՈՐԴԻ ՎԱՍԱԿԻ (ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՈՒ ԱՆՑՈՒՄԸ ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԻՆ)	36
Թագավորության ճգնաժամը և Պետրոս կաթողիկոսը	39
Պաշկավունիների և կաթողիկոսի հարաբերությունները	44
Գրիգոր Բջնեցին մինչև մագիստրոսության արժանանալը	53
Գրիգոր Բջնեցին Գագիկ Բ-ի թագադիր և մագիստրոս	58
Վահրամ Պաշկավունու մահը և կաթողիկոսության հեռացումն Անիից	70
Ժամանակի վախճանարանական կանխատեսումները և Գրիգոր Մագիստրոսի ծրագիրը	74
ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՈՐԴԻ ԱԲՈՒՂԱՄՐԻ (ԱՆԻԻ ԳՐԻԳՈՐ Ա ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ)	84
Տոհմական ծագումը	85
Անիի եպիսկոպոսական աթոռը մինչև Գրիգորը	89
Անիի զույգ եպիսկոպոսները՝ Սարգիս Ա և Գրիգոր Ա	93
Գրիգոր Ա Մագիստրոսի գործունեության վերջին շրջանը	98
ՍՄԲԱՏ ՄԱԳԻՍՏՐՈՍ	104
ԱՐԴՅՈՒՔ ՎԵՍ ՍԱՐԳԻՍԵ ԱՆՉԱՎԱԿ ԷՐ	114
«ՊԱՀԼԱՎՈՒՆԻ» ՏՈՀՄԱՆՎԱՆ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԱՍՈՂԻԿԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ	121
Օգտագործված աղբյուրներ և գրականություն	127
ՀԱՎԵԼՎԱԾ. Կ. Մաթևոսյանի աշխատությունների ցանկ	134

Կարեն Արսաշեսի Մաթևոսյան

**Անիի
ազնվականության դասնությունից
կամ երեք Գրիգոր Մագիստրոս**



«ՍՈՒՂՆԻ» հրատարակչություն

Համակարգչային ձևավորումը՝ Ամահիտ Խանգադյանի
Կազմը՝ Վարդան Դալլաքյանի
Տղագրված է «ԳԱՍՊՐԻՆՏ» տղագրատանը

Երևան • 2015

ԽՆԿՈՆԲ, 2013



Կարեն Մաթևոսյան

**դասնական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
Սաեմադարանի
արվեստի դասնության
և գրչության կենտրոնների
ուսումնասիրության
բաժնի վարիչ**